

ույրտներում առաջացող հասարակական հարաբերությունները կարգավորող որակյալ օրենսդրություն /դատական օրենսդրություն/, ձևավորել դատական իշխանության մարմինների հստակ և արդյունավետ գործող համակարգ, ճիշտ որոշել դատական իշխանության լիազորությունների ծավալը և հստակորեն բաշխել այդ լիազորությունները տարբեր դատական աստիճանների միջև, հակակշիռների և զսպումների մեխանիզմների օրենսդրական ամրագրման և ճիշտ կիրառման միջոցով ապահովել դատական իշխանության և պետական իշխանության մյուս երկու թևերի միջև հավասարակշռություն և դրանով իսկ դատական իշխանության անհրաժեշտ անկախության աստիճան:

Նույն հետսոցիալիստական երկրների փորձը ցույց է տալիս, որ դատական իշխանության ձևավորմանն ուղղված փորձերը հաճախ մատնվել են անհաջողությունների այն պատճառով, որ ցածր է եղել համապատասխան հիմնախնդիրների տեսական վերլուծության մակարդակը: Ըստ էության դժվար է նշել դատական իշխանության հիմնախնդիրներին նվիրված որևէ լուրջ գիտական հետազոտություն, որը հետխորհրդային երկրներում հրապարակված լինել մինչև անցյալ դարի 90-ական թվականների կեսերը:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության սահմանադրիչավական հիմքերի ուսումնասիրության արդիականությունը նախ պայմանավորված 2005 թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով և լրացումներով, որոնց մի զգալի մասը առնչվում է արդարադատության սկզբունքներին և դատական իշխանության համակարգին: Արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում շարունակվում են դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլի աշխատանքները: Ընդունվել և իրավաբանական ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրքը»³, որին համապատասխան դատական իշխանության ամբողջ համակարգում իրականացվել և իրականացվում են նոր արմատական փոփոխություններ: Ըստ էության Դատական օրենսգիրքը՝ որպես օրինակարգված /կողմֆիկացված/ ակտ ՀՀ իրավունքի նոր ճյուղի՝ դատական իրավունքի վերջնական ձևավորման հիմք է հանդիսացել և օրենսդրական հնարավորություններ է ստեղծել որակապես նոր՝ ժողովրդավարության պահանջներին համապատասխանող, անկախ և ինքնուրույն դատական իշխանության կայացման համար:

Հատկանշական է, որ Դատական օրենսգրքը ուժի մեջ դնելու համար անհրաժեշտություն առաջացավ ընդունել հատուկ օրենք: Միայն այդ փաստը ինքնին ապացույցն է այն հանգամանքի, որ դեռ առջևում են անկախ դատական իշխանության կայացմանն ուղղված մեծածավալ աշխատանքներ:

Դատական իշխանության սահմանադրիչավական հիմնախնդիրները գիտական վերլուծության արդիականությունը պայմանավորված է նաև եվրոպական հանրությանը Հայաստանի Հանրապետության ինտեգրվելու գործընթացով: Այս պայմաններում ՀՀ նոր դատական քաղաքականության վրա օբյեկտիվորեն մեծ ազդեցություն ունեն եվրոպական չափորոշիչները, որոնք պետք է արտացոլվեն ՀՀ օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում:

Հայաստանի Հանրապետությունը 2002 թ. ապրիլի 26-ին վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական Կոնվենցիան, որի մի շարք դրույթներ վերաբերում են արդարադատությանը:

³ ՀՀՊՏ 2007/20

- ներկայացնել դատական իշխանության տեղն ու դերը պետական իշխանության միասնական համակարգում.
- բացահայտել դատական իշխանության համակարգի բաղադրատարրերը, ուսումնասիրել առանձին բաղադրատարրերը, ինչպես նաև դրանց միջև առկա փոխադարձ կապերը.
- վերլուծել դատական իշխանության սահմանադրական սկզբունքները և ներկայացնել առաջարկություններ, ուղղված այդ սկզբունքների արդյունավետ և ճիշտ օրենսդրական փոխակերպմանը:
- սահմանագատել Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության ձևավորման փուլերը և դրանց վերլուծության հիման վրա բացահայտել մեր երկրում դատական իշխանության ձևավորման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները.
- որոշել և գիտականորեն վերլուծել դատական բարեփոխումների երկրորդ փուլի հիմնախնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

3. Ուսումնասիրության օբյեկտը և առարկան

Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտն է Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կազմակերպման և գործունեության ոլորտում հասարակական հարաբերությունների ամբողջական համալիրը:

Ուսումնասիրման առարկան են կազմում՝

- դատական իշխանության սահմանադրաիրավական սկզբունքներն ու նորմերը,
- դատական իշխանության սահմանադրական սկզբունքները և նորմերը կոնկրետացնող դատարանակազմության, քրեական դատավարական և քաղաքացիական դատավարական իրավունքի նորմերը,
- հասարակական հարաբերությունների այն ոլորտները, որոնք կարգավորված չեն, սակայն պետք ստանան իրավական կարգավորում՝ համապատասխան ոլորտներում առկա իրավունքի բացերը:
- դատական իշխանության կազմակերպման և գործառնության հիմնահարցերի վերաբերյալ գիտական աշխատությունները:

4. Գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո փորձ է կատարվում համակողմանի վերլուծել ՀՀ Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված դատական իշխանության սահմանադրաիրավական սկզբունքները, բացահայտել դատական բարեփոխումների երկրորդ փուլի հիմնախնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

Ատենախոսության մեջ ժամանակակից իրավաբանական և արդարադատության նոր խնդիրների համատեքստում նորովի է բացահայտվում «դատական իշխանություն» - «դատական համակարգ» հասկացությունների հարաբերակցության մեթոդաբանական ասպեկտը:

Դատական իշխանության կազմակերպման սկզբունքների վերլուծության ժամանակ փորձ է արվել բացահայտել այդ սկզբունքների մեթոդաբանական նշանակությունը:

Առաջարկվում է դատական իշխանության սահմանադրաիրավական և ընդհանրապես՝ օրենսդրական կարգավորման կատարելագործման նպատակով կատարել մի շարք կոնկրետ փոփոխություններ ինչպես Սահմանադրության մեջ, այնպես էլ ընթացիկ օրենսդրության մեջ:

Առաջին անգամ դատական իշխանությունը դիտարկվում է որպես բարդ կառուցվածքային համակարգ, որն իր մեջ ներառում է երեք հիմնական բաղադրատարրեր՝ դատական իրավունք /օրենսդրություն/, դատական մարմինների համակարգ և դատական գործառնությունների համակարգ:

Հաշվի առնելով դատական իշխանության բարդ համակարգային էությունը հիմնավորվում է այս համակարգի ուսումնասիրման նկատմամբ համակարգային մոտեցման անհարաժեշտությունը:

5. Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը

Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից օգտագործվել են գիտական ուսումնասիրման մի շարք մեթոդներ՝ դիալեկտիկական, իրավահամեմատական, տարալուծման և համադրման, և այլն:

Հետազոտման մեթոդական հիմքն է կազմում համակարգային մոտեցումը, որը առավել լայն հնարավորություններ է ընձեռնում համակողմանի գնահատել դատական իշխանության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, ինչպես նաև առանձնացնել դատական իշխանության հիմնական կառուցվածքային բաղադրատարրերը և վերլուծել այդ բաղադրատարրերի փոխադարձ կապերն ու փոխազդեցությունը, ինչը ատենախոսին հնարավորություն է ընձեռնել ստեղծել դատական իշխանության առավել նույնական տեսական մոդելը:

6. Աշխատության տեսական հիմքը

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, դատարանակազմության, քրեական դատավարության իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմնախնդիրների հետազոտմանը նվիրված գիտական ուսումնասիրությունները:

Ուսումնասիրման ընթացքում օգտագործվել են հայրենական և արտասահմանյան հեղինակների, մասնավորապես՝ Ս. Ալեքսենի, Գ. Բաղդրյանի, Գ. Գաբրիչիձեի, Կ. Գուցենկոյի, Գ. Դանիելյանի, Ս. Դիլբանդյանի, Ա. Հարությունյանի, Գ. Հարությունյանի, Գ. Ղազինյանի, Ա. Ղամբարյանի, Վ. Ստեփանյանի, Վ. Նազարյանի, Ի. Սամոշչենկոյի, Ս. Շեյֆերի, Մ. Կովալեվի, Ս. Ֆոյնիցկու, Վ. Ներսեսյանցի, Վ. Լազարևի, Վ. Լեբեդևի, Զ. Լուսիգենովայի, Ա. Լարինի, Վ. Սավիցկու և ուրիշների աշխատությունները:

7. Աշխատության նորմատիվ հիմքը

Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան, միջազգային իրավական այլ փաստաթղթեր, ՀՀ Դատական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, Դատական օրենսգրքին համապատասխան ընդունված Դատարանների նախագահների խորհրդի նորմատիվ իրավական ակտերը:

8. Ուսումնասիրության փորձառնական /էմպիրիկ/ հիմքը

Ուսումնասիրման էմպիրիկ հիմքն են կազմում՝

ա/ ՀՀ տնտեսական դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանում աշխատանքի ընթացքում կատարված դիտարկումները և նյութերը, մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռները,

բ/ բոլոր ատյանների դատարանների որոշումները,

9. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից, պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները՝

1. դատական իշխանությունը բարդ կառուցվածք ունեցող երևույթ է, որի հիմնական բաղադրատարրերն են հանդիսանում՝ դատական իրավունքը /օրենսդրությունը/, դատարական մարմինների համակարգը և դատական գործառույթների համակարգը.
2. դատական իշխանության հիմնախնդիրների ուսումնասիրման համար առավել արդյունավետ է համակարգային մեթոդաբանությունը, որն հնարավորություն է ընձեռնում բացահայտել ուսումնասիրվող երևույթի բոլոր բաղադրատարրերը և համակողմանիորեն վերլուծել դրանց միջև առկա փոխադարձ կապերը և փոխազդեցությունը.
3. չնայած դատական իշխանության մասին հիշատակվում էր դեռևս 1990 թվականի «Հայաստանի Հանրապետության անկախություն մասին» Հռչակագրում, սակայն դատական իշխանության ձևավորմանն ուղղված առաջին գործնական քայլերն իրականացվեցին ՀՀ 1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ.
4. իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառումը, դատական իշխանության և իշխանության մյուս երկու թևերի միջև փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմի ձևավորումը և գործառնությունը հնարավոր են միայն այն դեպքում, եթե դատական իշխանությունը օժտված է միասնականության հատկանիշով, ունի բուրգաձև կառույց, գլխավորվում է բարձրագույն դատական ատյանի կողմից.
5. բարձրագույն դատական ատյանը պետք է ունենա լեզալ և իրական հնարավորություններ ուղղելու ստորադաս դատարանների կողմից թույլտրվող սխալները, մշակելու և ապահովելու միասնական դատական քաղաքականություն և, միևնույն ժամանակ, դատական մյուս ատյանները, չպետք է զրկվեն միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու հնարավորությունից.
6. ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է արդյունավետորեն իրականացնել իր սահմանադրական առաքելությունը՝ դատարանների կողմից օրենքների միատեսակ կիրառումը, միայն այն դեպքում, երբ նա ձեռքագատված է իրեն ուղղված բոլոր հայցերը քննելու պարտականությունից, հնարավորություն ունի օրենսդրորեն ամրագրված չափուրուշիչների հաշվառմամբ ինքնուրույն որոշելու իրեն հասցեագրված բողոքները քննարկման ընդունելու կամ քննարկումը մերժելու հարցը.
7. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված օրենսդրական ակտերի և դրանց առանձին դրույթների միջև հակասությունների հաղթահարման, ինչպես նաև իրավունքի բացերի լրացման մեխանիզմները ոչ արդյունավետ են, շատ դեպքերում վիճելի են և հաճախ գործառնական օգտագործման համար ոչ պիտանի: Այս հիմնախնդիրների լուծման առավել արդյունավետ միջոց են հանդիսանում բարձրագույն դատական ատյանի կողմից ձևավորվող դատական նախադեպերը: Նորմատիվ իրավական ակտերում օգտագործվող արժեաբանական հասկացությունները, այդ ակտերի և

դրանց առանձին դրույթների հակասությունները, իրավական բացերը կազմում են դատական նախադեպի միջոցով առավել արդյունավետ լուծման ոլորտը.

8. դատական քաղաքականության մշակամանը մասնակցում են բոլոր ատյանի դատարանները, սակայն այդ քաղաքականությունը կարող է ամփոփվել և ընդհանրացվել միայն ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի միջոցով.
9. դատական իրավունքի աղբյուրներ են հանդիսանում ոչ միայն պետական մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը /առաջին հերթին ՀՀ Սահմանադրությունը, օրենսգրքերն ու ընթացիկ օրենքները/, այլ նաև դատավորների ինքնակառավարման մարմնի՝ Դատարանների նախագահների խորհրդի կողմից՝ Դատական օրենսգրքում ամրագրված պետության նախնական սանկցիայով /թույլտվությամբ/ ընդունված նորմատիվ իրավական ակտերը: Այս հանգամանքը հանդիսանում է դատական իշխանության անկախության արտահայտություններից և միևնույն ժամանակ երաշխիքներից մեկը.
10. ՀՀ դատական օրենսգրքում, թերևս «ինտերցիայի ուժով» ամրագրվել են որոշակի դրույթներ, որոնք կարող են սահմանափակել դատական իշխանության անկախությունը և անհամաչափ ուժեղացնել դատական իշխանության վրա գործադիր իշխանության ներգործելու հնարավորությունները: Ասված, մասնավորապես, վերաբերում է Օրենսգրքի այն դրույթին, որով արդարադատության նախարարին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք է վերապահված: Այս հանգամանքը ակնհայտ է դառնում, եթե հաշվի առնենք այն իրավական հնարավորությունները /մասնավորապես՝ դատավորից պահանջելու բացատրություններ/, որոնք նույն Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով վերապահված են կարգապահական վարույթ հարուցող անձին.
11. հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական իշխանության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ինքնավար գործելու հնարավորությունները կարող են սահմանափակվել ոչ միայն գործադիր իշխանության, այլ նաև օրենսդիր իշխանության կողմից կամայականորեն ընդունված օրենքների կամ դրանց առանձին դրույթների միջոցով, նպատահարմար է վերաձևակերպել ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետը և դատարաններին /կամ գոնե վճռաբեկ դատարանին՝ որպես դատական բարձրագույն ատյանի/ հնարավորություն տալ դիմելու սահմանադրական դատարան ոչ միայն իրենց /իր/ վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների, այլ նաև դատական իշխանության անկախությունը անհարկի սահմանափակող օրենքների դրույթների սահմանադրականության հարցերով.
12. հասարակական իրավագիտակցության մեջ ձևավորվել է կարծիք, համաձայն որի պետական իշխանության երեք թևերից առավել ոչ արդարացի, սխալներով և թերություններով գործողը հենց դատական իշխանությունն է: Մինչդեռ իշխանությունների երեք թևերի միջև

զայումների և հակակշիռների մեխանիզմի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ դատական իշխանության գործունեության ընթացքում թույլ տրվող սխալներն ու բացթողումները հաճախ պայմանավորված են իշխանության մյուս երկու թևերի գործողություններով: Պետական իշխանության երեք թևերի սերտ փոխկապակցվածության ուժով տեսականորեն հնարավոր չէ և գործնականում չի կարող երեք իշխանություններից որևէ մեկը իշխանության մյուս երկու թևերից որակապես ավելի լավ կամ ավելի վատ կատարել իր գործառույթները:

13. դատավորների անկախության երաշխիքների սահմանադրական համակարգը ամրագրված է իրավական կարգավորման տարբեր մեթոդների օգտագործմամբ: Մի դեպքում օգտագործվում է արգելանքի մեթոդը: Ընդհամին ամրագրված արգելանքները կարող են տարածվել ոչ միայն այլ պաշտոնատար անձանց կամ պետական հաստատությունների վրա, այլ նաև հենց դատավորների վրա: Որոշ դեպքերում դա ուղղակի սահմանադրական մակարդակով որոշակի սկզբունքների ամրագրումն է: Օգտագործվում է նաև պարտավորեցման մեթոդը: Սակայն բոլոր դեպքերում մենք գործ ունենք հենց դատավորների անկախության երաշխիքների հետ: Նույնիսկ դատավորի վրա որոշակի արգելանքների տարածումը նույնպես հանդիսանում է կուսակցական կամ տնտեսական լծակների ազդեցությունից դատավորին գերծ պահելու միջոց:

Ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը

Աշխատության ձևակերպված և հիմնավորված մի շարք դրույթներ ունեն մեթոդապանական նշանակություն և կարող են օգտագործվել դատական իշխանության հիմնախնդիրների հետագա տեսական վերլուծությունների ընթացքում: Ասվածը վերաբերում է, մասնավորապես, դատական իշխանության բարդ կառուցվածքի մասին, այդ համակարգի հիմնական բաղադրատարրերի մասին, Դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունվող ակտերի նորմատիվ իրավական բնույթի մասին, դատական նախադեպի կիրառելիության շրջանակների մասին և մի շարք այլ դրույթներին:

Աշխատանքի արդյունքները գործնական նշանակություն ունեն իրավաստեղծ և իրավակիրոս գործունեության համար:

Իրավաստեղծագործության ոլորտում ատենախոսության դրույթները իրենց կոնկրետ արտահայտությունն են ստացել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում», որի հիմնական հեղինակներից մեկն է ատենախոսը: Դրանք կարող են հետագայում իրենց արտացոլումը ստանալ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի կատարելագործման և ՀՀ դատավարական օրենսդրությունը Եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված աշխատանքների ընթացքում: Այդ նպատակով աշխատությունում ներկայացվում են ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ:

Ընդհանուր առմամբ հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ձևակերպված տեսական դրույթների և գիտականորեն հիմնավորված հանձնարարականների իրացումը կարող է բարձրացնել դատական իշխանության

ոլորտի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետությունը և դրանով իսկ նպաստել մեր երկրում ժողովրդավարության պահանջներին համապատասխանող դատական իշխանության կայացմանը և միջազգային չափանիշներին համապատասխանող արդարադատության իրականացմանը:

Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական նպատակներով՝ «Պետության և իրավունքի տեսության», «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի» առարկաների, ինչպես նաև հատուկ կուրսերի դասավանդման ընթացքում:

10. Ատենախոսության արդյունքների փորձարկումը

Աշխատանքը կատարվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնում, որտեղ անցկացվել է դրա քննարկումը և գրախոսությունը: Ատենախոսության հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում, միջազգային մի շարք միջոցառումներում ատենախոսի զեկույցներում և ելույթներում:

ԳԼՈՒԽ 1. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Դատական իշխանության գիտական ուսումնասիրության մեթոդապանական հիմունքները

Դատական իշխանության հիմնախնդիրները հետսոցիալիստական իրավաբանական գրականության մեջ սկսել են ակտիվորեն քննարկվել սկսած անցյալ դարի 90-ական թվականներից: Այդ հիմնախնդիրները բնականաբար քննարկվում են իշխանությունների տարանջատման տեսության համատեքստում: Գրականության մեջ բազմիցս նշվել է, որ Հին աշխարհում արդարադատության գործառույթները իրականացնում էին միապետները՝ փարաոնները, կայսրերը, թագավորները: Դատական որոշումները կայացվում էին նրանց անունից: Նրանք ինքներն էին քննում և լուծում առավել բարդ գործերը և հանդիսանում էին հսկողական ատյան իրենց ենթակա և կամքը կատարող դատավորների համար: Դատարանը սուկ գործիք էր ինքնակալ տիրակալների համար, որոնց արդարադատության գործառույթի հետ միաին պատկանում էր նաև օրենսդիր և գործադիր իշխանությունը: Դատավորները նշանակվում և պաշտոնից ազատվում էին միապետի կողմից, նրա անունից էին իրականացվում արդարադատությունը, մահվան դատավճիռները հաստատում էր միապետը, դատախազները պահպանում էին որոշ հսկողական լիազորություններ դատարանների նկատմամբ: Դատարանները չէին վերահսկում գործադիր իշխանությանը, չէին պաշտպանում հպատակներին չինովնիկների կամայականությունից և վերասկողություն չէին իրականացնում օրենքների սահմանադրականության նկատմամբ: Այսպիսով, պետական իշխանության բոլոր գործառույթները կենտրոնացված էին մեկ անձի մոտ և դատական իշխանության ինքնուրույնության և անկախության մասին որևէ խոսք չէր կարող լինել:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունը ակնհայտ է՝ դա գործառնային սկզբունքով իշխանությունների առանձին թևերի բաժանումը և դրանց անկախ իրականացումն է, ինչն ապահովվում է, մի կողմից օրենսդիրի, գործադիրի և դատարանի մշտական հակամարտությունը, մյուս կողմից՝ դրանց կամայականությունների սահմանափակումը: Դրանով իսկ անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում պետության և հասարակության առաջընթացի համար: Ուստի իրական դատական իշխանություն ունենալու համար նախ անհրաժեշտ է տվյալ պետությունում հետևողականորեն կիրառել իշխանությունների տարանջատման սկզբունքը:⁷

Պարզ է, որ բերված դրույթների ճշմարտացիության վերաբերյալ որևէ առարկություններ չեն կարող լինել: Սակայն պետք է նկատել, որ դատական իշխանության հիմնախնդիրների վերլուծությունը միայն իշխանության տարանջատման սկզբունքի համատեքստում հնարավորություն չի ստեղծում դրանց բազմակողմանի հետազոտման համար: Այդպիսի մոտեցման դեպքում հետազոտողների ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է պետական

⁷ Տե՛ս Նոճաճիճյնի ճեճոճյն. Ի., Իճիճիճեճ, չճ 110:

իշխանության ընդհանուր համակարգում դատական իշխանության տեղի և դերի բացահայտման հարցերի վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ դատական իշխանության և իշխանության մյուս երկու ճյուղերի փոխներգործության, դրանց միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի կիրառման մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, եթե դատական իշխանությունը իրենից ներկայացնում է որոշակի միասնություն, օժտված է համակարգային հատկանիշներով:

Հետևաբար դատական իշխանության հիմնախնդիրների գիտական ուսումնասիրությունները պետք է հիմնված լինեն այնպիսի մեթոդաբանության վրա, որը հնարավորություն է ընձեռնում ոչ միայն դիտարկել դատական իշխանությունը որպես պետական իշխանության համակարգի բաղադրատարր, այլ նաև բացահայտել դատական իշխանության ներքին կառուցվածքը, առանձնացնել դրա հիմնական կոմպոնենտները և վերլուծել դրանց փոխներգործության առանձնահատկությունները:

Ընդամին ինքնին հասկանալի է, որ գիտական ուսումնասիրությունը, այդ թվում թեկնածուական թեզը, չի կարող հիմնված լինել գիտական ուսումնասիրության որևէ մեկ մեթոդի վրա: Ցանկացած գիտական ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն գիտական մեթոդների որոշակի համակարգի օգտագործման վրա, պետք է ունենա իր մեթոդաբանական հիմունքները:

Դատական իշխանության սահմանադրաիրավական հիմունքների հետազոտումը ինքնին ենթադրում է մեթոդների մի ամբողջ համալիրի կիրառում: Սույն ատենախոսության նախապատրաստման ընթացքում, ինչպես արդեն նշվել է նախաբանում, օգտագործվել են գիտական վերլուծության պատմականության և դիալեկտիկայի սկզբունքները, տարալուծման և համադրման, համեմատության և արստրակցիայի և մի շարք այլ մեթոդներ: Սակայն ակնհայտ է նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գիտական վերլուծություն ունի իր մեթոդաբանական առանձնահատկությունները, որոնք առաջին հերթին պայմանավորված են գիտական ուսումնասիրության առարկայի առանձնահատկություններով: Հենց ուսումնասիրման առարկայի առանձնահատկություններն են պայմանավորում գիտական վերլուծության այս կամ այն կոնկրետ մեթոդի կիրառելիության հնարավորությունները, այս կամ այն մեթոդի «տեսակարարար կշիռը» համապատասխան գիտական աշխատանքի ընթացքում:

Դատական իշխանության հիմնախնդիրների գիտական վերլուծությունները պետք է ներառեն հիմնախնդիրների երկու խումբ՝ ա) դատական իշխանությունը՝ որպես ինքնուրույն համակարգ, բ) դատական իշխանությունը՝ որպես պետական իշխանության ընդհանուր համակարգի բաղադրատարր: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, դատական իշխանության հիմնախնդիրների գիտական վերլուծությունները միայն իշխանության տարանջատման սկզբունքի համատեքստում վերլուծաբանների ուշադրությունը սևեռում են միայն հարցերի երկրորդ խմբի վրա:

Իրավաբանական գրականության մեջ կատարվել են դատական համակարգի ուսումնասիրության բազմաթիվ փորձեր: Սակայն դեռևս չի ձևավորվել այդ համակարգի կառուցվածքի, դրա առանձին բաղադրատարրերի վերաբերյալ միասնական մոտեցում: Կարծում ենք, որ այդպիսի իրավիճակը պայմանավորված է ոչ միայն հիմնախնդրի բարդությամբ, այլ նաև դրա վերլուծության նկատմամբ ոչ կորեկտ մեթոդաբանական մոտեցումներով:

Բանն այն է, որ դատական իշխանությունը ինքնին ներկայանալով որպես որոշակի համակարգ միևնույն ժամանակ հանդիսանում է ավելի բարդ և լայն այլ

համակարգի՝ պետական իշխանության մարմինների ամբողջական համակարգի մաս: Ընդամին դատական իշխանությունը կարող է ինքնուրույն և արդյունավետ գործել միայն այդ համակարգի կառուցվածքային բաղադրատարրերի փոխներգործության հիման վրա: Այդպիսի գործառնության ընթացքում համակարգի յուրաքանչյուր օղակ ունի իր հստակ դերակատարումը: Ուստի մենք լիովին համամիտ ենք Ա. Ն. Ավերյանովի և Բ. Տ. Ֆրոլովի հետ, որոնց կարծիքով համակարգը տարրերի մի այնպիսի ամբողջություն է, որն օժտված է որոշակի կառուցվածքով և գործառնական մեխանիզմներով, իսկ նրա տարրերը օժտված են որոշակի հիերարխիկ դասավորությամբ և գործառնությային բաժանումով:⁸ Ուստի այդ կառույցի ուսումնասիրման նկատմամբ պետք է կիրառվի այնպիսի մեթոդաբանություն, որն հնարավորություն է տալիս հետազոտողի ուշադրությունը կենտրոնացնել ոչ միայն այդ համակարգի՝ որպես որոշակի ամբողջության ուսումնասիրման վրա, այլ նաև այդ համակարգի առանձին բաղադրատարրերի հետազոտման վրա, քանի որ հենց համակարգը ձևավորող բաղադրատարրերի փոխներգործության միջոցով է իրագործվում բարդ սոցիալական համակարգերի գործառնության մեխանիզմը:⁹

Միայն այդպիսի մեթոդաբանական մոտեցումը կարող է նպաստել այդ համակարգի բոլոր բաղադրատարրերի բացահայտմանը իրենց փոխադարձ կապերի մեջ և դրանով իսկ ապահովվել ամբողջ համակարգի նույնական տեսական մոդելի ստեղծումը: Այսպես՝ դատական իշխանության անկախության մասին խոսք կարող է զնայլ, մայն այն դեպքում, եթե այդ համակարգի բոլոր օղակները՝ տարբեր աստիճանների դատարանները և այդ դատարանների դատավորներն են օժտված որոշակի անկախությամբ: Միննույն ժամանակ համակարգի ներսում ձևավորվող կապերը պետք է վերադաս դատական աստիճաններին որոշակի հնարավորություններ ընձեռնեն ուղղել ստորադաս դատարանների կողմից թույլտրվող հնարավոր սխալները և ապահովվել օրենքների միասնական կիրառումը: Հետևաբար դատական իշխանության հիմնախնդիրների հետևողական և խորը վերլուծության համար պետք է կիրառվի գիտական հետազոտության այնպիսի մեթոդ, որն հետազոտողների ուշադրությունը կենտրոնացնում է, համակարգի առանձին բաղադրատարրերի փոխադարձ կապերի վրա և դրանով իսկ ստեղծում է համակարգի գործառնության ընդհանուր օրինաչափությունների բացահայտման հնարավորություն:

Մեր համաոգմամբ, գիտական ուսումնասիրման այդպիսի մեթոդ է հանդիսանում համակարգային մեթոդը:

Բարդ սոցիալական երևույթների գործառնության մեխանիզմների ուսումնասիրման նկատմամբ համակարգային մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, կարելի է ասել, համընդհանուր ճանաչում է գտել զրականության մեջ: Ինչպես ճշմարտացիորեն նշում է Է. Ս. Մարկարյանը, համակարգային մեթոդը հանդիսանում է գիտական հետազոտությունների հիմնարար ռազմավարություններից մեկը, որն պատմականորեն առաջացել է բարդ

⁸ *Stu' Aaãõuyíiã À.Í. Nẽñðáííiã ííçíáíeã íeðã, Ì., Ííeèð. Èèð. 1985, էջ 35-40; Õðíeíã È.Ò. áááááíeã á òeëíñíðeþ, +ãñòü 2, Ì., Ííeèð. Èèð, 1989, էջ 124:*

⁹ *Íaaeíãã Í.Í. Ê áííðíñó í íííyðeè íãðáíeçíã áãeñðãeý çãeííã. - Nã. Íáúãeðeáíúã çãeííú eñòíðeè è íãó+ííã òeëíáíãñðáí íáúãñðáíí. (Íãðãðeãeú ñeíííçeóíã). Ì., 1970 էջ 74:*

կազմավորում ունեցող համակարգերը նույնական հետազոտական մեթոդներով ուսումնասիրելու անհրաժեշտությունից:¹⁰

Իրավական համակարգը՝ նեոարյալ դատական իշխանությունը, չափազանց բարդ կառուցվածքային երևույթներ են: Ուստի օրինաչափ է, որ իրավագիտության ոլորտում համակարգային մոտեցումը լայն տարածում է ստացել:¹¹ Նույնիսկ այն հեղինակները, որոնք գիտակցում են համակարգային վերլուծության մեթոդի կիրառման որոշակի սահմանափակումները, ընդունում են բարդ սոցիալական համակարգերի գործառնության ուսումնասիրման նկատմամբ համակարգային մեթոդի անհրաժեշտությունն ու օգտակարությունը: Այսպես, Ա.Վ.Օբոլոնսկին և Վ.Գ. Ռուդաշեվսկին նշում են, որ պետաիրավական երևույթների գիտական վերլուծության նկատմամբ համակարգային մեթոդի առավելությունները բացահայտվում են այն ժամանակ, երբ բարդ համակարգերի ուսումնասիրություններից անցում է կատարվում այդ համակարգերում ընթացող պրոցեսների և դրանց իրականացման մեխանիզմների ուսումնասիրությանը:¹²

Կիրառելով նշված դրույթները դատական իշխանության տեսական հիմնախնդիրների վերլուծության նկատմամբ, կարող ենք նկատել, որ դատական իշխանության հիմնական գործառույթը՝ արդարադատությունը իրականացվում է դատական համակարգի տարբեր բաղադրատարրերի՝ տարբեր աստիճանների դատարանների փոխհամագործակցության հիման վրա: Եթե արդարադատության իրականացումը հնարավոր լիներ առանց տարբեր աստիճանների դատարանների փոխներգործության՝ միայն մեկ դատարանի կողմից, ապա դատական մարմինների ամբողջական համակարգի առկայությունը անհիմաստ կլիներ:

Դատական իշխանության հիմնախնդիրների ուսումնասիրության նկատմամբ համակարգային մոտեցման կիրառումը տալիս է ակնհայտ մեթոդաբանական առավելություններ արդեն հիմնախնդրի ձևակերպման փուլում: Բանն այն է, որ դատական իշխանությունը իրենից ներկայացնում է բարդ, բազմաստիճան համակարգ: Առաջին հերթին այն կարելի է բաժանել երեք հիմնական բաղադրատարրերի՝ դատական մարմինների համակարգ, դատական գործառույթների համակարգ, դատական իշխանության ոլորտում ձևավորվող հարաբերությունները կարգավորող նորմերի որոշակի համակարգ: Ինչպես կհիմնավորվի հետագայում, դատական իշխանությունն ասելով ենթադրվում է հենց այդ երեք բաղադրատարրերի ամբողջությունը:

¹⁰ Վ.Ս. Իվանով և Մ.Ս. Մալոշևսկի. Երևան, 1972, թիվ.10, չ.77:

¹¹ Ա.Վ. Օբոլոնսկի. Երևան, 1967; Ի.Վ. Օբոլոնսկի. Երևան, 1968; Մ.Ս. Մալոշևսկի. Երևան, 1978; Ի.Վ. Օբոլոնսկի. Երևան, 1994; Ա.Վ. Օբոլոնսկի. Երևան, 2002, և այլն:

¹² Վ.Ս. Իվանով և Մ.Ս. Մալոշևսկի. Երևան, 1972, չ.6:

Դատական իշխանության նշված երեք բաղադրատարրը իրենց հերթին նույնպես բարդ համակարգեր են: Կառուցվածքային առումով դատական իշխանությունը՝ դա յուրահատուկ իրավասություններով օժտված պետական մարմինների՝ տարբեր ասյանների դատարանների համակարգ է, գործառնային առումով՝ գործառնային ամբողջություն, որտեղ կարևորագույն տեղ է զբաղեցնում արդարադատության գործառնայթը, նորմատիվ առումով՝ իրավունքի ինստիտուտ, իսկ արդեն իսկ կայացած դատական իշխանության պայմաններում՝ իրավունքի ինքնուրույն ճյուղ:

Ակնհայտ է, որ վերը նշված համակարգերից յուրաքանչյուրը կարող է գիտական վերլուծության ենթարկվել տարբեր հետազոտական նպատակներով և տարբեր տեսանկյուններից: Այսպես՝ դատական մարմինների համակարգի ուսումնասիրությունների ոլորտում ինքնուրույն առարկա կարող են հանդիսանալ դատարանների և դատավորների անկախության երաշխիքների համակարգը, անմեղության կանխավարկածը դատական ընթացակարգերում, դատարանների ֆինանսական և նյութատեխնիկական ապահովման հիմնահարցերը և այլն: Համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել և վերլուծել հարցի միայն այն տեսանկյունները, որոնք բնութագրում են տարբեր ասյանի դատարանների տեղն ու դերը ընդհանուր համակարգի գործառնային ընթացքում: Այլ կերպ ասած, համակարգային մոտեցումը լայն հնարավորություններ է ընձեռնում քննարկվող հարցերի շրջանակի հստակ բացահայտման և սահմանազատման համար:

Դատական իշխանության հիմնախնդիրների նկատմամբ համակարգային մեթոդի կիրառումը տալիս է մի շարք մեթոդադաբանական առավելություններ նաև հիմնախնդրի վերլուծության ընթացքում: Այս առումով կարելի է նշել հետևյալ հանգամանքները:

Համակարգային մոտեցումը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ բարդ օբյեկտի՝ համակարգի էությունը պայմանավորված է ոչ այնքան այդ համակարգի բաղադրատարրերի յուրահատկություններով, որքան այդ բաղադրատարրերի միջև առկա կապերի բնույթով: Այդ կապերը նույնպես չափազանց բարդ են: Այստեղ մենք գործ ունենք ոչ թե պարզապես մեկ բաղադրատարրի մյուսի վրա ազդեցության հետ, այլ փոխադարձ ներգործության հետ: Ընդամին այդպիսի փոխներգործության ընթացքում «երկրորդական» բաղադրատարրերը կարող են էականորեն «տրանսֆորմացնել» դրանց առաջացման պատճառ հանդիսացող առաջնային բաղադրատարրերը՝ էականորեն փոփոխելով դրանք:¹³

Այսպես՝ «դատական գործառնայթ» - «դատական համակարգ» փոխադարձ կապում առաջնային է հանդիսանում «դատական գործառնայթը» առանց որի անիմաստ է դատական համակարգի գոյությունը: Ուստի դատական համակարգը կառուցվում է հիմք ընդունելով դրա առաքելությունը՝ տվյալ պետությունում դատական իշխանությանը վերապահվող գործառնայթների համակարգը: Օրինակ, սոցիալիստական պետության պայմաններում վերաքննիչ գործառնայթ չէր սահմանված: Դրան համապատասխան դատական մարմինների համակարգում բացակայում էին վերաքննիչ դատարաններ:

Սակայն այս երկու բաղադրատարրերի միջև գոյություն ունի ոչ միայն ուղղակի, այլ նաև հետադարձ կապ: Առկա դատարանների համակարգից է կախված

¹³ ի»әә İääëîää î.í. Üßí. ³ßË. :ç 81:

դրանց միջև դատական գործառույթների բաշխումը և վերաբաշխումը: Օրինակ, մասնագիտացված դատարանների առկայությունը բացառում է համապատասխան գործառույթները ընդհանուր իրավասության դատարաններին վերապահելու նպատակահարմարությունը: Բերենք մեկ այլ օրինակ: Մինչև դատական բարեփոխումների երկրորդ փուլը մեզանում գործող այն դրույթը, որի համաձայն տնտեսական գործերով դատարանի վճիռները կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ մեզանում գոյություն ուներ միայն մեկ տնտեսական գործերով դատարան:

Ասվածը վերաբերում է նաև դատական իշխանության երրորդ բաղադրատարրի հետ առաջին երկու բաղադրատարրերի փոխներգործությանը: Այսպես, դատական մարմինների համակարգում կամ դատական իշխանության գործառույթների համակարգում ցանկացած բարեփոխում կարող է իրականացվել միայն իրավական նորմերի համապատասխան համակարգերում փոփոխություններ իրականացնելու միջոցով: Միննույն ժամանակ դատական ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակարգում ցանկացած փոփոխություն իր անդրադարձն է ունենում ինչպես դատական մարմինների համակարգում, այնպես էլ դատարանների կողմից իրականացվող գործառույթների համակարգում:

Համակարգային մոտեցման կարևորագույն սկզբունք է հանդիսանում ցանկացած համակարգի վերլուծությունը արտաքին միջավայրի հետ կապերում, որն իրագործվում է համակարգի «մուտքի» և «ելքի» միջոցով: Մեր հետազոտության նպատակների համար կարևոր նշանակություն է ստանում դատական իշխանության փոխներգործությունը պետական իշխանության ընդհանուր համակարգի հետ, մասնավորապես, իշխանության երկու այլ՝ օրենսդիր և գործադիր թևերի հետ:

Դժվար չէ նկատել, որ այստեղ, ըստ էության, խոսքը գնում է իշխանությունների տարանջատման տեսանկյունից դատական իշխանության դիտարկման մասին: Այդ հիմնախնդիրը հատուկ վերլուծության առարկա է և այդ հարցը կքննարկվի հետագագայում: Այստեղ միայն նշենք, որ դատական իշխանության համակարգի «մուտք» դա օրենսդիր և գործադիր իշխանության կողմից դատական իշխանության վրա ներգործությունն է: Այդպիսի ներգործություն կարող է իրականացվել ամենատարբեր ձևերով և միջոցներով: Իհարկե օրենսդիր իշխանության կողմից դատական իշխանության կազմակերպման և ներգործության ամենաարդյունավետ միջոցը դա օրենքների միջոցով ներգործությունն է: Գործադիր իշխանության կողմից այդպիսի ներգործության լեզավ հնարավորությունները պետք է լինեն չափազանց սահմանափակ: Սակայն այդպիսի ներգործության հնարավորություններ գործադիր իշխանությունը այնուամենայնիվ ունի, մասնավորապես, կառավարությունը կարող է որոշակիորեն ազդել դատական համակարգի ֆինանսավորման և նյութատեխնիկական սպասարկման հարցերի լուծման վրա, օրինակ, բյուջեի նախագծի համապատասխան հոդվածների ֆինանսավորման վերաբերյալ դիրքորոշում հայտնելու և պարլամենտական քննարկումների ժամանակ իր դրքորոշումը հիմնավորելու և պաշտպանելու միջոցով: Սակայն դատական իշխանության վրա գործադիր իշխանության ներգործության փաստացի հնարավորությունները, մանավանդ, ոչ լիարժեք կայացած դատական իշխանության պայմաններում անհամեմատ ավելի մեծ են:

«Ելքը» դա այն ազդեցությունն է, որն իր հերթին գործում է օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա դատական իշխանությունը, մասնավորապես, սահմանադրական և վարչական արդարադատության իրականացման միջոցով:

Ընդամին դատական իշխանության համակարգի «մուտքի» և «ելքի» միջոցով իրականացվող փոխներգործական կապերը համակարգային վերլուծության մեթոդաբանության տեսանկյունից կարելի է բաժանել երեք խմբի՝ անհրաժեշտ գործառույթային կապեր, լրացուցիչ կապեր և ավելորդ կամ հակասական կապեր¹⁴: Առաջին խմբի կապերը այն կապերն են, որոնք ապահովում են իշխանությունների երեք թևերի միջև փոխադարձ զսպումներն ու հակակշիռները: Առանց այդ կապերի հնարավոր չէ դատական իշխանության արդյունավետ գործառնությունը, դրա նորմալ փոխգործակցությունը պետական իշխանության մյուս երկու թևերի հետ և որպես արդյունք՝ պետական իշխանության ամբողջ համակարգի բնականոն գործունեությունը:

Երկրորդ խմբի կապերը թեկուզև պարտադիր անհրաժեշտ չեն փոխներգործող երկու համակարգերի բնականոն գործառնության համար, սակայն դրանց առկայությունը բարձրացնում է երկու համակարգերի գործառնության արդյունավետությունը: Ասենք, վարչական դատարանների և վարչական արդարադատության ընթացակարգի բացակայության պայմաններում, սկզբունքորեն կարող են փոխներգործել պետական իշխանությունը, որպես ընդհանուր համակարգ և այդ համակարգի կոմպոնենտը հանդիսացող դատական իշխանությունը: Սակայն դրանց փոխներգործությունը դառնում է անհամեմատ ավելի արդյունավետ վարչական դատարանների և արդարադատության առկայության պայմաններում: Վարչական արդարադատության ընթացակարգը հնարավորություն է ընձեռնում արագորեն վերացնել օրենքին հակասող վարչական ակտերը, արդյունավետ ձևով և օպերատիվորեն բողոքարկել գործադիր մարմինների սպօրինի գործողությունները կամ անգործությունը և դրանով իսկ էականորեն բարձրացնում է ամբողջ պետական համակարգի գործառնության արդյունավետությունը:

Երրորդ խումբը կազմող ավելորդ կամ հակասական կապերի առկայությունը էականորեն խաթարում է համակարգի գործառնության արդյունավետությունը: Կիրառելով համակարգային մոտեցման այս դրույթը դատական իշխանության համակարգի և պետական իշխանության ընդհանուր համակարգի փոխներգործության ուսումնասիրման հիմնախնդիրներին, կարելի է եզրահանգել, որ այս դեպքում խոսքը գնում է այնպիսի կապերի, իշխանության երեք թևերի միջև այնպիսի փոխներգործության հնարավորությունների մասին, որոնք խախտում են իշխանությունների երեք թևերի միջև հավասարակշռությունը, անհիմն չափով զսպում են իշխանության որևէ մեկ թևի ներազդեցության հնարավորությունների որևէ այլ թևի նկատմամբ: Որպես կանոն, այդպիսի կապերը անհնարին են դարձնում անկախ և ինքնուրույն դատական իշխանության ձևավորումը: Դրանց առկայությունը խաթարում է նաև ամբողջ պետական իշխանության համակարգի, ինչպես նաև դրա առանձին թևերի բնականոն գործառնությունը:

Պետք է նկատել, որ այդպիսի ավելորդ և անցանկալի կապերի առկայությունը կարող է բացատրվել երկու հիմնական հանգամանքներով: Դրանց առաջացման

¹⁴ ԽՊԵ ԻՊՈՒՅԹ Է. Նեճձալուե՛ ձաձե՛ճ ա՛յ Օձձալե՛յ աձձալու՛՞՞ ը իժիլուձեձալու՛՞ իժիձեձալ. Ի., 1969, չճ 90-91:

պատճառ կարող են հանդիսանալ հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտի իրավական կարգավորման ընթացքում թույլ տրված սխալներն ու բացթողումները կամ, այլ կերպ ասած, օրենսդրական սխալներն ու բացթողումները: Օրինակ, գործադիր իշխանության անհիմն ներգործության հնարավորությունները դատական իշխանության մարմինների վրա կարող են պայմանավորված լինել սխալ օրենսդրական լուծումներով, ասենք, այն դեպքերում, երբ գործադիր մարմինների վրա է դրվում դատարանների նյութատեխնիկական սպասարկման կամ դատավորների բնակարանային հարցերը լուծելու լիազորությունները կամ այդ մարմինները էական ազդեցություն են ունենում դատական կորպուսի կազմավորման վրա: Մակայն այդ կապերի առկայությունը կարող է պայմանավորված լինել ձևավորված իրավակիրառական պրակտիկայով, երբ գործադիր իշխանության մարմինները ունենում են ոչ լեգալ հնարավորություն ներազդելու դատարանների կողմից ընդունվող որոշումների բովանդակության վրա:

Հետևաբար դատական իշխանության ոլորտում բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն առաջին և երկրորդ տիպի, այլ նաև երրորդ տիպի կապերը: Ընդամին եթե առաջին երկու դեպքերում նպատակը պետք է լինի ձևավորել և զարգացնել համապատասխան կապերը, ապա երրորդ դեպքում նպատակը պետք է լինի չեզոքացնել կամ վերացնել՝ այդ թվում օրենսդրական միջոցառումներ իրականացնելու ճանապարհով ավելորդ հակասական կապերը:

Համակարգային մեթոդաբանության հիմնական հասկացություններից է ընթացակարգի /պրոցեսի/ հասկացությունը: Ընդամին դատական իշխանության գործառնության ընթացքում կարելի է սահմանազատել երեք ընթացակարգեր:

Առաջինը դա հիմնական ընթացակարգն է, որի տակ մենք հասկանում ենք վերադաս դատարանների ներգործությունը ստորադաս դատարանների կողմից ընդունվող որոշումների բովանդակության և որակի վրա: Այդ ընթացակարգի կարևոր նշանակությունը հանգեցրել է նրան, որ դրա իրականացման հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանադրական բարեփոխման ընթացքում ամրագրվել են ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում, որի համաձայն «ՀՀ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքների միատեսակ կիրառությունը»:

Երկրորդ ընթացակարգը դա հետադարձ կապն է, որի հիմնական նպատակն է առաջին ընթացակարգի արդյունքում ստացված փաստացի արդյունքների համեմատությունը համակարգի գործառնության ցանկալի մոդելի հետ: Այդպիսի համեմատությունը հնարավորություն է տալիս դրանց մերձեցմանն ուղղված միջոցներ ձեռնարկել: Ակնհայտ է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, իր սահմանադրական առաքելությունը արդյունավետ իրականացնելու համար, պետք է ունենա օրենքների միատեսակ կիրառմանը ուղղված իր գործողությունների արդյունքների մասին տեղեկատվություն ստանալու և այդ տեղեկատվության վերլուծության հիման վրա անհարժեշտության դեպքում լրացուցիչ քայլեր ձեռնարկելու հնարավորություններ:

Երրորդ ընթացակարգը դա սահմանափակումների հաշվառման ընթացակարգն է; Վերադաս դատարանների՝ ստորադաս դատարանների իրավակիրառ քաղաքականության վրա ներգործելու հնարավորությունները չեն կարող անսահմանափակ լինել: Վերադաս դատարաններին այդպիսի անսահմանափակ իրավազորությունների վերապահումը, նախ կհակասեր դատավորների անկախության և արդարադատություն իրականացնելիս նրանց /այդ

թվում առաջին ատյանի դատարանների դատավորների/ միայն օրենքին ենթակա լինելու սահմանադրական սկզբունքին, և երկրորդը՝ փաստացի գրկելով ստորին ատյանի դատարաններին ինքնուրույն արդարադատության գործառույթ իրականացնելու հնարավորությունից, անիմաստ կդարձնեք տարբեր ատյանների դատարանների՝ դրանով իսկ դատական մարմինների ամբողջական համակարգի, գոյությունը: Ուստի սահմանափակումների հաշվառման ընթացակարգը կարող է նպաստել տարբեր ատյանի դատարանների միջև գործառույթների առավել նպատակահարմար հարաբերակցության բացահայտմանը և օրենսդրական ամրագրմանը:

Այդպիսով, դատական իշխանության սահմանադրաիրավական հիմունքների ուսումնասիրության նկատմամբ համակարգային մոտեցումը հետազոտողի ուշադրությունը կենտրոնացնում է դատական իշխանության կազմավորման և գործառնության հենց գործընթացի վրա, տվյալ համակարգի բաղադրատարրերի փոխադարձ կապի և փոխադարձ ներգործության յուրահատկությունների վրա: Արդյունքում ուսումնասիրման առարկա է դառնում ոչ թե միմիանցից անջատ բաղադրատարրերի որոշակի համակցությունը, այլ իրական գոյություն ունեցող և բնականոն գործառնող միասնական համակարգը: Այլ կերպ ասած, համակարգային մոտեցումը հնարավորություն է ընձեռնում ստեղծելու դատական իշխանության՝ իրականությանը համապատասխանող, նույնական տեսական մոդել:

Համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս նաև դատական իշխանության համակարգի «մուտքի» և «ելքի» հետազոտման միջոցով բազմակողմանիորեն ուսումնասիրել դատական իշխանության համակարգի փոխադարձ կապերը պետական իշխանության ամբողջական համակարգի և դրա մյուս երկու ճյուղերի հետ:

Պետք է հաշվի առնել, որ ցանկացած մեթոդաբանություն արդյունավետ է միայն որոշակի շրջանակներում՝ կապված ուսումնասիրման առարկայի առանձնահատկություններից: Համակարգային մոտեցումը արդեն ապացուցել է իր ակնհայտ առավելությունները գիտության տարբեր ոլորտներում, առաջին հերթին բանգիտության ասպարեզում: Ինչ վերաբերում է հասարակագիտության տարբեր ճյուղերին, այդ թվում իրավագիտությանը, ապա մասնագետների մեծամասնության կարծիքով այստեղ համակարգային մոտեցման կիրառումը առայժմ չի հանգեցրել որևէ լուրջ արդյունքների: Իհարկե այդպիսի իրավիճակը առաջին հերթին բացատրվում է հենց ուսումնասիրվող առարկայի առանձնահատկություններով: Այս իմաստով ճշմարիտ է թվում Ի.Ս. Սամոչչենկոյի այն պնդումը, որ համակարգային մոտեցումը առավել մեծ արդյունք է տալիս ոչ թե ցանկացած, այլ առաջին հերթին օրգանական համակարգերի հետազոտման արդյունքում: Մնացած դեպքերում խոսքը ավելի շուտ գնում է համակարգային մոտեցման հասկացությունների և կատեգորիաների կիրառման մասին որոշ օբյեկտների նկարագրմանը կամ պարզապես համակարգային տերմինաբանության օգտագործման մասին: Իրավունքը և առավելևս օրենսդրությունը հանդիսանում են ոչ օրգանական համակարգեր: Ուստի որպես համակարգեր դրանց ուսումնասիրման ընթացքում, խոսք պետք է գնա ոչ թե համակարգային մոտեցման ամբողջ զինանոցը օգտագործելու մասին, այլ միայն այդ

օբյեկտները նոր տեսանկյունից նկարագրելու համար համակարգային մոտեցման հասկացությունների և կատեգորիաների կիրառման մասին:¹⁵

Սկզբունքորեն համամիտ լինելով Ի. Ս. Մամոնչենկոյի կարծիքի հետ, պետք է այնուամենայնիվ նշենք, որ համակարգային մոտեցման հասկացությունների և կատեգորիաների նույնիսկ պարզունակ կիրառումը իրավական իրողությունների ուսումնասիրման նկատմամբ ավելի լայն հնարավորություններ է ընձեռնում նոր գիտական արդյունքներ ստանալու համար, քան դրանց ուսումնասիրման նկատմամբ ոչ համակարգային մոտեցումները: Ուստի իրավական երևույթների համակարգային մոտեցման հարաբերական սահմանափակ հնարավորությունների փաստը հիմք չի հանդիսանում այդ մեթոդաբանության անտեսման համար: Կարծում ենք, այդ մեթոդաբանության կիրառումը էլ ավելի հիմնավորված է, երբ խոսք է գնում դատական իշխանության տեսական հարցերի վերլուծության մասին, այսինքն պետաիրավական այնպիսի երևույթի մասին, որն իրենից անկասկած ներկայացնում է բարդ և բազմաստիճան համակարգ:

Ուստի դատական իշխանության հիմնախնդիրների գիտական վերլուծության ընթացքում համակարգային մոտեցման կիրառումը հնարավորություն է ընձեռնում հստակեցնել գիտական հետազոտության առարկան, հստակ ձևակերպել և հետևողականորեն շարադրել հետազոտական խնդիրը:

1.2. Դատակա իշխանության համակարգը

Հետսոցիալիստական տարածքում դատական իշխանության ոլորտի բարեփոխումները սկսվեցին իրականացվել անցյալ դարի 90-ական թվականների սկզբներից: Սակայն այդ ոլորտի տեսական հիմնախնդիրների առաջին հետազոտությունները թվագրվում են միայն 90-ական թվականների կեսերով և որպես կանոն, ուղղված էին միայն կատարված գործնական քայլերի մեկնաբանությանը: Դժվար է նշել դատական իշխանության հիմնախնդիրներին վերաբերող գոնե մեկ գիտական աշխատություն, որը մեր երկրում հրատարակվել է մինչև 1995 թվականը: Հանուն ճշմարտության պետք է նաև արձանագրել, որ հետխորհրդային մյուս պետություններում նույն վիճակն էր ստեղծվել: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում դատական իշխանության հիմնախնդիրների ուսումնասիրմանը նվիրված առաջին մենագրությունները հրատարակվել են նույնպես 1990 թվականների վերջում: Դժբախտաբար այս ոլորտում նույնպես ստեղծվել է այն իրավիճակը, երբ գիտական վերլուծությունները հետ էն մնում ոչ միայն հասարակական զարգացման պահանջմունքներից, այլ նաև դատական իշխանության արմատավորմանն ուղղված գործնական քայլերից:

Այդ ժամանակահատվածից սկսած նշված հիմնախնդիրները ակտիվորեն քննարկվում են: Սակայն չի կարելի ասել, որ այս ոլորտում չկան վիճահարույց հարցեր և տարաբնույթ մոտեցումներ: Բավական է միայն նկատել, որ հետսոցիալիստական երկրների իրավաբանական գրականության մեջ դեռևս ձևակերպված չէ դատական իշխանության հասկացության միանշանակ սահմանում:

¹⁵ ԻՊՊԵ. Ն. Նախախնդիր. Ինտելեկտուալ ծեօւ ռեֆորմաիաի ւաճաճ ա ԷժՕ-ձեճ ռժժՕժժժ ռիձձճճեիձի շաճիււաձձաճսնձձաձ.- Աւժինձ Օճճինիժճ, 1979, թիվ 2, չճ65:

Քննարկվող հարցում հստակ նշվարվում են երկու հիմնական ուղղություններ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել գործառույթային և կառուցակարգային /ինստիտուցիոնալ/:

Հեղինակների մի մասը համարում է, որ ընդհանուր առմամբ դատական իշխանությունը կարելի է բնորոշել որպես դատարանին տրված իրավագործություն, որը նպատակաուղղված է օրենքով սահմանված կարգով հասարակական հարաբերությունների վրա ներգործելուն կամ որպես դատարանի բացառիկ իրավասություն՝ քննելու և լուծելու իրավունքի ոլորտի սոցիալական բախումները: Օրինակ Ս. Ա. Շեյֆերը դատական իշխանությունը սահմանվում է որպես դատարանի բացառիկ իրավասություն՝ քննելու և լուծելու իրավունքի ոլորտի սոցիալական վեճերը /կոնֆլիկտները/:¹⁶ Կ. Ֆ. Գուցենկոն գտնում է, որ իշխանություն պետք է համարվի ոչ թե պետական մարմինը կամ պաշտոնատար անձը, այլ այն, ինչ նրանք կարող են և ի վիճակի են անելու: Ըստ էության դա լիազորություն է, գործառույթ, բայց ոչ նրա կրողը:¹⁷ Դժվար չէ նկատել, որ այս դեպքում դատական իշխանությունը, ըստ էության, նույնացվում է պետական որոշակի գործառնության հետ: Ուստի հատկանշական է, որ այս մոտեցման կողմնակիցները որոշ դեպքերում ուղղակիորեն նշում են, որ «դատական իշխանությունը» և «արդարադատությունը» եզրույթներ են, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են միևնույն հասկացությունը:¹⁸

Հեղինակների մեկ այլ խումբ համարում է, որ դատական իշխանությունը դա պետական մարմինների որոշակի համակարգ է: Այսպես, Ս.Ա. Ֆոյնիցկին գրում է. «Դատական իշխանությունը, նեղ առումով, կազմում է օրենքին ենթակա մարմինների համակարգ, որը կոչված է կիրառելու օրենքը»:¹⁹ Այս դեպքում էլ փաստորեն դատական իշխանությունը նույնացվում է պետական մարմինների դատարանների համակարգի հետ:

Կարծում ենք, որ քննարկվող երկու մոտեցումները ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմիանց:

Պետության և իրավունքի տեսության մեջ պետության գործառույթը բնութագրվում է, որպես պետության գործունեության հիմնական ուղղություն կամ ձև, որի միջոցով արտահայտվում են ինչպես տվյալ տիպի պետության էությունը, այնպես էլ կոնկրետ պետության առջև պատմական զարգացման առկա փուլում ծառայած խնդիրներն ու նպատակները:²⁰ Պետության գործառույթները, որպես կանոն, առաջին հերթին ստորաբաժանվում են օրենսդիր, գործադիր և դատական գործառույթների: Որոշակի գործառույթների առկայությունը ենթադրում է, որ պետք է ձևավորվեն համապատասխան պետական մարմինների համակարգեր, որոնք օրենսդրությամբ սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում ի վիճակի են առավել արդյունավետ իրականացնել համապատասխան գործառույթները: Առանց պետական մարմինների համակարգի օբյեկտիվորեն անհրաժեշտ գործառույթը չի կարող իրականացվել: Միևնույն ժամանակ եթե չկա կոնկրետ գործառույթ, ապա

¹⁶ Վ. Շեյֆեր, «Պետական իշխանությունը», Երևան, 1991, էջ 60:
¹⁷ Վ. Շեյֆեր, «Պետական իշխանությունը», Երևան, 1991, էջ 60:
¹⁸ Վ. Շեյֆեր, «Պետական իշխանությունը», Երևան, 1991, էջ 60:
¹⁹ Վ. Շեյֆեր, «Պետական իշխանությունը», Երևան, 1991, էջ 60:
²⁰ Վ. Շեյֆեր, «Պետական իշխանությունը», Երևան, 1991, էջ 60:

պետական մարմինների համապատասխան համակարգը անիմաստ է: Ուստի դատական իշխանությունը և՛ գործառույթ է և՛ համակարգ: Նույնը կարելի է ասել նաև իշխանության մյուս երկու թևերի մասին: Օրենսդիր իշխանությունը և պետական գործառույթ է և համապատասխան մարմին: Գործադիր իշխանությունը նույնպես բարդ համակարգ է, որն իր մեջ նեռառում է և գործառույթ և գործադիր մարմինների ճյուղավորված համակարգ:

Սակայն դատական իշխանության համակարգը ունի է ևս մեկ կառուցվածքային բաղադրատարր, որի մինչ այսօր դուրս է մնացել գիտական հետազոտությունների շրջանակներից: Բանն այն է, որ դատական իշխանությունը ոչ միայն որոշակի պետական գործառույթ է և պետական մարմինների որոշակի համակարգ, այլ նաև սահմանադրաիրավական ինստիտուտ, իսկ ձևավորված ժողովրդավարական համակարգերում՝ ազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ, կամ առնվազն՝ ենթաճյուղ:

Այս հանգամանքը ակնհայտ է դառնում, եթե հաշվի առնենք, որ դատական իշխանությունը դա պետական մարմինների համակարգ է, այսինքն մի համակարգ, որի հիմնական հատկանիշներն են՝ ա) ձևավորումը պետական կամքին համապատասխան և որոշակի գործառույթների իրակացումը պետության անունից, բ) հստակորեն որոշված և օրենսդրորեն ամրագրված գործունեության տեսակների և ձևերի իրականացումը, գ) իրավաբանորեն ամրագրված կազմակերպչական կառուցվածքը:²¹ Հետևաբար՝ դատական իշխանության կազմավորման և գործառնության պարտադիր նախապայման է հանդիսանում համապատասխան ոլորտի հարաբերությունները կամ միասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի որոշակի համակարգի առկայությունը: Այն չափով, որքանով հաջողվում է գտնել և օրենսդրությամբ ամրագրել դատական մարմինների օպտիմալ համակարգ, ճիշտ որոշել այդ մարմինների իրավասության շրջանակները և հստակորեն բաշխել դատական գործառույթները տարբեր ատյանների դատարանների միջև, սահմանել դատական իշխանության և դատավորների անկախության արդյունավետ երաշխիքներ դատական իշխանության դերը իշխանությունների ընդհանուր համակարգում բարձրանում է:

Սակայն պետք է նկատել, որ այդ երեք բաղադրատարրերի առկայությունը ինքնին չի նշանակում, որ տվյալ պետության մեջ ձևավորված է դատական իշխանություն: Դատական իշխանության մասին խոսք կարող է գնալ միայն այն դեպքում, երբ բոլոր այդ երեք բաղադրատարրերը միասնական համակարգի շրջանակներում սերտորեն փոխներգործում են և համապատասխանում են որոշակի չափանիշների: Մեր այս մոտեցումը լիովին համընկնում է Ա.Ն.Ավերյանովի և Ի.Տ.Ֆրոլովի կողմից ձևակերպված, մեր կարծիքով, բովանդակային առումով համակարգ հասկացության ճշգրիտ բնորոշման հետ՝ համակարգը տարրերի մի այնպիսի ամբողջություն է, որն օժտված է որոշակի կառուցվածքով և գործառնական մեխանիզմներով, իսկ նրա տարրերը օժտված են որոշակի աստիճանակարգային /հիերարխիկ/ դասավորությամբ և ֆունկցիոնալ բաժանումով:²²

Հիմնախնդրի վերլուծությունը նպատակահարմար է սկսել դատական իշխանության կառուցվածքային /ինստիտուցիոնալ/ բաղադրատարրից, քանի որ

²¹ Գրքի էջ 100-101: Մ. Ս. Մարտիրոսյան, «Պետական իշխանության կառուցվածքը», Վան, 2002, ՃԳ 345:

²² Տե՛ս՝ Մ. Ս. Մարտիրոսյան, «Պետական իշխանության կառուցվածքը», Վան, 1985, ՃԳ 35-40; Մ. Ս. Մարտիրոսյան, «Պետական իշխանության կառուցվածքը», Վան, 1989, ՃԳ 124 :

պետականորեն կազմակերպված հասարակությունում դատական իշխանությունը առաջին հերթին ներկայանում է որպես պետական մարմինների /պաշտոնատար անձանց/ համակարգ:

Իրավաբանական գրականության մեջ արդեն բազմիցս արդարացիորեն նշվել է, որ «դատարանների ամբողջությունը՝ վերադաս և ստորադաս, դա դեռ դատական իշխանություն չէ, իսկ նրանց կողմից կայացրած որոշումների և դատավճիռների ամբողջությունը դա դեռ վերահսկողության միջոց չէ պետական մարմինների նկատմամբ (օրենսդիր և գործադիր), որոնց ձեռքերում կենտրոնացված է եղել իրական, ոչնչով չսահմանափակված իշխանությունը: Մեկ անձի կամ մարմնի մոտ իրավաստեղծ, պետական կառավարման և դատավարության գործառույթների միավորումը հատկանշական է բացառակ միապետության և ավելի ուշ ժամանակների ամբողջատիրական ռեժիմների համար»:²³

Դատական համակարգը կարող է դառնալ դատական իշխանության կառուցվածքային բաղադրատարր, եթե այն համապատասխանում է որոշակի հատկանիշների: Ինչպես պետական իշխանության այլ ոլորտներում դատական համակարգը պետք է ունենա բուրգաձև կառուցվածքը՝ վերադաս և ստորադաս դատարանները պետք է իրենցից ներկայացնեն հստակ կառույց և այդ կառույցի տարբեր բաղադրատարրերի միջև պետք է ստեղծվեն ենթակայական աստիճանակարգային հարաբերություններ: Իհարկե այս առումով դատական մարմինների համակարգում ձևավորվող աստիճանակարգերի միջև հարաբերությունները պետք է էականորեն տարբերվի գործադիր իշխանության ոլորտի աստիճանակարգային կառույցից: Բանն այն է, որ պետք է ապահովվի ոչ միայն դատական իշխանության ամբողջությամբ, այլ նաև առանձին դատարանների և դատավորների անկախությունը ու ինքնավարությունը և նրանց ենթակայությունը միայն Սահմանադրությանը և օրենքներին:

Այստեղից առաջանում է կարևորագույն, շատ հակասական և նուրբ խնդիր՝ ընտրել և օրենսդրությամբ ամրագրել դատական համակարգի կառուցվածքային բաղադրատարրերի միջև այնպիսի հարաբերակցություն, որը կապահովի դատական իշխանության ինստիտուցիոնալ միասնությունը և դրանով իսկ հնարավորություն կընձեռնի ապահովվել դատական իշխանության՝ որպես միասնական կառույցի ինքնավարությունը օրենսդիր և գործադիր իշխանությունների նկատմամբ և միևնույն ժամանակ չի սահմանափակի կամ ընդհանրապես չի վերացնի այդ կառույցի առանձին օղակների ինքնուրույն կոնկրետ գործեր քննելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունը:

Դատական իշխանության գործառույթային բաղադրատարրի գիտական ուսումնասիրությունների ոլորտում առանցքային դեր ունի արդարադատության հասկացությունը: Հատկանշական է, որ ժամանակակից սահմանադրություններում արդարադատության իրականացումը բնորոշվում է որպես դատարանների հիմնական գործառույթ: Այդպիսի մոտեցումը լայն տարածում է գտել նաև իրավաբանական գրականության մեջ: Պետք է նաև նկատել, որ իրավաբանական գրականության մեջ սկզբունքային հակասություններ չի առաջացնում արդարադատության հասկացության բնորոշման խնդիրը: Արդարադատությունը հիմնականում բնորոշվում է որպես դատարանի կողմից սահմանադրական սկզբունքների և երաշխիքների վրա հիմնված դատավարական ձևի շրջանակներում

²³Ռóääáíàÿ äëàñòó, չԳ3:

Այդպիսով, կարելի է առձանագրել, որ արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները կամ, այլ կերպ ասած՝ արդարադատության իրականացումը հանդիսանում է դատական իշխանության համակարգի անկակտելի մասը: Պետք է նկատել, որ այսպիսի եզրահանգում լիովին համահունչ է ՀՀ սահմանադրության 91-րդ հոդվածում ամրագրված դրույթի հետ, որի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրության և օրենքներին համապատասխան»:

Արդարադատության բնորոշման հիմնախնդրի շուրջ առկա է նաև մեկ այլ տարածայնություն, որն ունի հետսոցիալիստական ծագումնաբանություն: Գրականության մեջ ավանդաբար պետական հարկադրանքի կիրառումը համարվում էր արդարադատության կարևորագույն հատկանիշ:³¹ Սակայն վերջին տարիներին հրատարակված գրականության մեջ այդ հատկանիշը չի ընդգծվում: Ավելին փորձեր են կատարում այս կամ այն կերպ ժխտել պետական հարկադրանքը որպես արդարադատության պարտադիր հատկանիշ, այդպիսի մոտեցումը հիմնավորելով արդի ժամանակահատվածում «պատժիչ արդարադատության» անարդյունավետության և նույնիսկ ճգնաժամային վիճակում գտնվելու հանգամանքով³²:

Կարծում ենք այդպիսի դիրքորոշումը ավելի շատ պայմանավորված է հեղինակների հոգեբանական և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումներով և չունի գիտական հիմնավորվածություն: Հատկանշական է, որ համապատասխան հիմնավորումները, որպես կանոն, կրում են հուզական բնույթ: Օրինակ, փորձելով ժխտել պետական հարկադրանքի նշանակությունը՝ որպես արդարադատության իմանենտ հատկանիշ, Ա. Ղամբարյանը նշում է, որ արդարադատության բնորոշման մեջ նշված հատկանիշի մասին առավելապես հիշատակվում էր խորհրդային գրականության մեջ, ինչը պայմանավորված էր արդարադատության պատմական ժամանակատարածքային ընկալման առանձնահատկություններով: Խորհրդային ժամանակներում արդարադատության նպատակն ընդհանուր առմամբ անձին պատժելն էր՝ հատկապես քրեական դատավարությունում: Հեղինակի կարծիքով, ներկա ժամանակաշրջանում, երբ «պատժիչ արդարադատությունը» գտնվում է ճգնաժամային վիճակում պետական հարկադրանքը չի կարող համարվել արդարադատության իմանենտ հատկանիշ:³³

Գնահատելով այդպիսի մոտեցումը, նախ նշենք, որ «պատժիչ արդարադատություն» հասկացությունը իր մեջ այնպիսի հակասականություն է պարունակում, որը այդ բարակապակցությունը անիմաստ է դարձնում, քանի որ «պատժիչ արդարադատությունը» դա ընդհանրապես ոչ թե արդարադատություն է, այլ արդարադատության անվան տակ իրականացվող պետական ահաբեկչություն: Ընդամին «արդարադատության» այդպիսի բնույթը պայմանավորված է լինում ոչ թե

Նóáááíáÿ áèàñòü è óáíèíáííá ñóáííðìèçáíáñòáí, Æèĭ, 2001, թիվ 5, էջ 49-56; Øìááíÿí Á.Á. Èííñðèðóòèíííá ìðááíñóáèá á ñèñòáíá ðàçááèáíèÿ áèàñòáè.ĭ, ĬÀÐÈÑ Ĭðáññ, 2001, էջ 34:

³¹ Stu`opññak, Ñáíáíá Á.Ĭ. Ñóá è ìðááíñóáèá á ÑÑÑÐ. Èçä. 2-á, Ĭ., 1984, էջ 9-19; Դիլբանդյան Ս.Ս. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահ մարմինները: Եր.: Տիգրան Սեօ, 1999, էջ 23:

³²Stu` Áóóáíèí È.Ó., Èíááèáá Ĭ.Á. Ĭðááíñóðáíèðáèèíá ìðááíí. Ĭíá ðáá. È.Ó. Áóóáíèí. Èçä. 4-á, ìðááðáá. è áíí.Ĭ., èçä. Çáðóóáèí, 1998, էջ 44; Նóáíóñòðíèñòáí è ìðááíñóðáíèðáèèíá ìðááíí á Ðíññèéñéíé Óáááðáðèè. Èçä. 2-á Ĭíá ðáá. Բ.È.Ĭðèíáá, Á.È. Øááðíáá. Ĭ.,Ĭðíñíáèð, 2002, էջ 11; Ղազիմյան Գ.Ս., Դիլբանդյան Ս.Ս. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահական մարմինները. Երևան, 2003, էջ 55;

³³ Ի»áè ². Ó³Ù³ñ³Ù³Ý, ÝáóÙÝ ı»ÓáóÙ, չհ 40:

պետական հարկադրանքի կիրառման հնարավորությամբ, այլ դատական ընթացակարգերի ժողովրդավարական սկզբունքների անտեսմամբ, ստալինյան հայնտնի «տրոյկաների» տիպի հատուկ «դատարանների» առկայությամբ: Մինչդեռ նույնիսկ կայացած ժողովրդավարության պայմաններում դատական ակտերի կատարումը ապահովելու նպատակով պետական հարկադրանքի կիրառումը անխուսափելի է:

Փորձելով ժխտել պետական հարկադրանքի՝ որպես արդարադատության հատկանիշի նծանակությունը Ե. Վ. Կուդրյավցևը նշում է, որ արտասահմանյան երկրների քաղաքացիական դատավարությունում ընդլայնվում է հաշտության համաձայնության ինստիտուտի կիրառումը: Արևմտյան պետություններին բնութագրական է վեճերի կոմպրոմիսային լուծման պրակտիկայի ընդլայնման միտումը: Դատավորները հաճախ փորձում են հաշտեցնել կողմերին՝ տեղեկացնելով հնարավոր անբարենպաստ հետևանքների մասին, որոնք վրա կհասնեն հաշտությունից խուսափող կողմի համար:³⁴ Ակնհայտ է, որ «անբարենպաստ հետևանքները», որոնց մասին նշում է Ե.Վ. Կուդրյավցևը, դա ոչ միայն խուսափող կողմի համար անբարենպաստ դատական վճիռն է, այլև ցանկացած վճռի իրականացումը հենց պետական հարկադրանքի միջոցներով ապահովածությունը: Ավելին՝ դատարանի հաստատած հաշտության համաձայնության իրականացումից կողմերից մեկի խուսափելու դեպքում նույնպես կիրառվում են պետական հարկադրանքի միջոցներ:

Արդարադատությունը հանդիսանում է դատական իշխանության և ամբողջությամբ՝ պետական իշխանության հիմնական գործառնություններից մեկը, իսկ պետական-իշխանական գործառնությունների իրականացումը միշտ և միանշանակ ենթադրում է անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանքի կիրառում: Իհարկե ոչ բոլոր դատական ակտերն են իրականացվում պետական հարկադրանքի միջոցով: Սակայն ցանկացած դատական ակտ պետք է ապահովված լինի պետական հարկադրանքի ուժով: Հակառակ դեպքում խոսք անգամ չի կարող լինել պետական ցանկացած գործառնության մասին: Պետական հարկադրանքը լինելով իրավունքի անբաժանելի, իմանենտ հատկանիշ, դրանով իսկ դառնում է ամբողջ իրավակիրառ գործունեության, այդ թվում արդարադատության պարտադիր հատկանիշ:

Իրավաբանական գրականության մեջ շարունակվում են բանավեճերի նաև այն հարցում՝ հանդիսանում է արդարադատության իրականացումը դատական համակարգի միակ գործառնությո՞ր, թե՛ խոսք պետք է գնա այդպիսի գործառնությունների որոշակի համակարգի մասին:

Այս հարցում նույնպես նշվարմում են երկու սկզբունքային տարբեր մոտեցումներ: Հեղինակների մի մասը համարում է, որ դատական գործունեության բոլոր ձևերն ու տեսակները ընդգրվում են «արդարադատություն» հասկացության մեջ: Մյուս մասի կարծիքով դատարանների կողմից իրագործվող գործառնությունների ամբողջությունը շատ ավելի լայն է և «չի տեղավորվում» այդ հասկացության շրջանակներում: Փորձելով «հաշտեցնել» այս երկու մոտեցումները, Վ. Նաժմովը առաջարկում է առանձնացնել արդարադատությունը՝ լայն իմաստով և նեղ

³⁴Տե՛ս ԵՕձձձձձձ Ա.Ա. ՆՕձձձձձ ձձձձձձ ձ ձձձձձձձձ ձձձձձձձձ ձձձձձձ. Ի., Աձձձձձ, 1998, էջ 41:

խմաստով: Ըստ այս հեղինակի արդարադատությունը լայն իմաստով դա իրավական նորմերի կիրառմանն ուղղված ամբողջ դատական գործունեությունն է:³⁵

Իհարկե այսպիսի տեսակետն նույապես «կյանքի իրավունք» ունի: Սակայն դրա էվրիստիկ գիտական հնարավորությունները կասկած են հարուցում: Այդպիսի մոտեցումը հարցի քննարկումը, ըստ էության, փոխադրում է տերմինաբանության ոլորտ: Իսկ բովանդակային առումով հեղինակը դրանով իսկ միանում է երկրորդ տեսակետին: Եթե արդարադատությունը լայն իմաստով իր բովանդակությամբ տարբերվում է նեղ իմաստով արդարադատությունից, ապա ակնհայտորեն մենք գործ ունեն երկու տարբեր երևույթների հետ: Այլ կերպ ասած, կան դատական գործունեության տեսակներ, որոնք չեն տեղավորվում այն շրջանակներում, որը անվանվում է «արդարադատություն»: Այլ բան է թե ինչ տերմին մենք կօգտագործենք այդպիսի «լայն իմաստով արդարադատության» բնորոշման համար: Ուստի պատահական չէ, որ այդ տեսակետը իրավաբանական գրականության մեջ քննադատության է արժանացել:³⁶

Կարծում ենք, տվյալ հիմնահարցը արժանի է ավելի լուրջ գիտական վերլուծության:

Իրավաբանական գրականության մեջ կատարվել են բազմաթիվ փորձեր բացահայտել արդարադատության էությունը, դրա սկզբունքային տարբերությունները իրավակիրառ գործունեության այլ տեսակներից: Սակայն պետք է առձանագրենք, որ հարցը դեռևս բավարար լուծում չի ստացել: Ընդամին արդարադատության հասկացության բնորոշման փորձերի անհաջողությունը նույնպես, մեր կարծիքով, բացատրվում է սխալ մեթոդաբանական մոտեցմամբ:

Բանն այն է, որ այս հարցի քննարկման ժամանակ բոլոր հեղինակները փորձում են թվարկել արդարադատության տարբերությունները իրավակիրառ գործունեության այլ տեսակներից այդ երևույթների տարբերակող հատկանիշների թվարկման միջոցով: Այսպես, Ա. Ղամբարյանի կարծիքով, արդարադատությունը իրավակիրառ գործունեության այլ տեսակներից տարբերվում է արդարադատություն իրականացնող սուբյեկտներով, արդարադատության ժողովրդավարական բնույթն արտացոլող սահմանադրական սկզբունքներով և դատավարական ձևով:³⁷ Վ. Վ. Յարկովը, Վ. Ա. Լազարևը և Գ. Ա. Շմավոնյանը արդարադատության հատկանիշ են համարում սոցիալ-իրավական վեճերի լուծումը:³⁸ Կարծիք է հայտնվել նաև, որ արդարադատությունը՝ ի տարբերություն պետական իրավակիրառ գործունեության բոլոր այլ ձևերից, իր մեջ պարունակում է իրավական երաշխիքների այնպիսի համակարգ, որը ապահովում է օրինական և արդարացի որոշումների կայացում:³⁹

Իհարկե դժվար և անիմաստ է բանավիճել այդպիսի ճշմարտացի կարծիքների հետ: Սակայն գտնում ենք, որ անհարժեշտ է այնուամենայնիվ սահմանազատել արդարադատության էությունը դրա հատկանիշներից, որոնք իրենց

³⁵ Տես՝ *Íaæèíá Á.Í. Ê áñðíííó í ìíýðèè è ñíááðæáíèè ìðááíííóáèý. Áñðíííó ìíáíøáíèý ýóðáèèðèáííííðè ìðááíííóáèý ìí óáíèíáííí ãáèàì. Êáèèèéíáðáá, 1980, էջ 8:*

³⁶ *«È Èóíèíèáý Í.Á. Ê áñðíííó í ìíýðèè ìðááíííóáèý ìí óáíèíáííí ãáèàì á ñááðá Êíííðèðóðóèè ÑÑÑÐ è ííáíáí çáèííáàðáèüíðáá í ñóáíííóðíèíðáá è ñóáíííðèçáíáííðáá.- Áèðóáèüííá áñðíííó ðàçáèðèý è ñíááðóáíííóáíáíèý çáèííáàðáèüíðáá í ñóáíííóðíèíðáá, ñóáíííðèçáíáííðáá è ìðíèðóðíðèíèí íáäçíðá. Նá. Íáó÷í. òðóáíá, Ì., 1981, չջ 17:*

³⁷ *Í»æ². Õ³Ûµ³ñÛ³Ý, ÝáóÛÝ ì»ÕáóÛ, չջ 41-42:*

³⁸ *Տես՝ Բðèíá Á. Á. Ñóáááíáý áèàíðó è çàùèðà èè÷ííðè á àðáæááííèí ìðíðáííá. Íðááíááááíèá, 1992, քիվ 1, էջ 42-50; Èàçàðáá Á. Á. Ñóáááíáý áèàíðó è óáíèíáííá ñóáíííðèçáíáííðáá, ÁèÍ., 2001, քիվ 5, էջ 49-56; Øíááííýí Á.Á. Êíííðèðóðóèííá ìðááíííóáèá á ñèíðáíá ðàçááèáíèý áèàíðáé, էջ 34:*

³⁹ *Տես՝ Õáíèíáíí-ìðíðáíííóáèüííá ìðááí. Ííá. íáíáé ðáááèðèáé Ðíðèèá Á.È.. Բðèáè÷-ñèèé óáíðð Ìðáíí, 2004, էջ 84:*

անտեսմամբ: Ինչպես արդեն նշել էինք, «Պետության և իրավունքի տեսության» գիտության մեջ պետության գործառույթները ավանդաբար բնութագրվում են որպես դրա գործունեության հիմնական ուղղությունները, որոնք պայմանավորված են դրա էությամբ և բովանդակությամբ, ինչպես նաև սովյալ պետության զարգացման այս կամ այն փուլում նրա առջև ծառայած նպատակներով, խնդիրներով և սոցիալական նշանակությամբ:⁴⁹

Այս ընդհանուր տեսական դրույթը դատական իշխանության գործառույթների հետազոտման նկատմամբ կիրառելու արդյունքում ակնհայտ է դառնում, որ չի կարող լինել դատական իշխանության իրացման լեզալ որևէ ձև, որն դուրս է գալիս այդ իշխանության գործառույթների շրջանակից: Դատական իշխանության գործառույթներից դուրս այդ իշխանության որևէ այլ ձևի իրականացում կնշանակի, որ դատական իշխանությունը դուրս է եկել իր իրավասության շրջանակից և մխրճվել է օրենսդիր կամ գործադիր իշխանության լիազորությունների շրջանակը: Ուստի խոսք կարող է գնալ ոչ թե դատական իշխանության իրացման ձևերի, այլ դատական իշխանության գործառույթների իրացման ձևերի մասին, ինչպիսիք հանդիսանում են դատավարության տարբեր ձևերը:

Վերադառնանք հարցի բուն բովանդակության քննարկմանը՝ դատական իշխանության միակ գործառույթը հանդիսանում է արդարադատության իրականացումը, թե պետք է առանձնացնել նաև, այդպես կոչված, դատարանի յուրիսդիկցիոն գործառույթները: Հարցի ճիշտ լուծման համար, կարծում ենք, դատարանի, այսպես կոչված, յուրիսդիկցիոն լիազորությունները պետք է համադրել արդարադատության էության /սոցիալական բախումների լուծում/, և դրա հիմնական հատկանիշների /դատարանների կողմից հատուկ սկզբունքների համապատասխան և հատուկ ընթացակարգերով իրականացվող գործունեություն/ հետ:

Կատարենք այդպիսի համադրման մեկ փորձ: Քրեական հետապնդման հարուցումը, կարծում ենք, ինքնին վկայում է իրավական բախման առաջացման մասին: Ընդամին կոնֆլիկտոզեն բնույթ են կրում ոչ միայն նախաքննության գործընթացը ամբողջությամբ, այլ նաև դրա ընթացքում իրականացվող առանձին քննչական գործողությունները: Օրինակ, դժվար է պատկերացնել, որ նախաքննություն վարող մարմինը և կասկածյալը կամ նրա ներկայացուցիչը միակարծիք կարող են լինել, ասենք, խուզարկության, առգրավման կամ կալանքի կիրառման հարցերում: Նախաքննության ընթացքում ծագած դատավարական կոնկրետ հարցերը լուծում է դատարանը: Այդ հարցերը դատարանը լուծում է դատավարական հատուկ կարգով, որը պարունակում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության որոշակի երաշխիքներ: Հենց դատարանի կողմից համապատասխան հարցերի լուծումը նույնպես կարևորագույն երաշխիք է հանդիսանում: Միննույն ժամանակ պետք է նաև արձանագրել, որ նախաքննության ընթացքում ծագած դատավարական կոնկրետ հարցերի լուծման ընթացակարգը ունի իր էական առանձնահատկությունները: Ասենք, խուզարկության մասին հարցը դատարանը լուծում է առանց կողմերից մեկի մասնակցության: Սակայն այդպիսի բացառություններ կան նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամանակ: Օրինակ, հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին հարցը դատարանը

⁴⁹ Տես, օրինակ, ի. ի. Իսթ-ձիբի. Օսթոնյ ֆիլոսոֆիոն և իժաա. ի., ԻԾԻՆԻՁԵՕ, 2002, էջ 327; Իժիաեաիւ իաւաե օսթոնյ իժաա և ֆիլոսոֆիոն. ի., ԻԾԻՁ-ԵԻՕԾԱ, 1999, չգ 629:

նույնպես լուծում է առանց պատասխանողի կամ նրա ներկայացուցիչի մասնակցության: Սակայն անհեթեթություն կլիներ այդ հիմնավորմամբ հայցային համապատասխան գործերի քննությունը դուրս բերել արդարադատության շրջանակներից: Ուստի, կարծում ենք, կարելի է առձանագրել, որ դատական իշխանությունը գործառույթային առումով համընկնում է արդարադատության հասկացության հետ:

Նշենք ևս մեկ հանգամանք: Բանն այն է, որ դատական իշխանությունը՝ որպես իշխանության ինքնուրույն թև, չի կարող գործառել, եթե այդ համակարգի կառույցների ֆինանսավորման և նյութա-տեխնիկական ապահովման խնդիրների վերապահված են գործադիր իշխանության մարմիններին: Ուստի դատական իշխանության մարմինները իրենք պետք է հնարավորություն ունենան օրենսդրությամբ սահմանված որոշակի շրջանակներում լուծել համապատասխան խնդիրները: Սակայն այդ հարցերի լուծումը չի կարող համարվել դատական իշխանության գործունեության հիմնական ուղղություն, այսինքն գործառույթ: Միևնույն ժամանակ այս հիմնախնդիրը վերաբերում է ոչ թե դատական իշխանության համակարգի կառուցվածքային տարրերի փոխհարաբերակցության հիմնախնդրին, այլ դատական իշխանության և պետական իշխանության մյուս երկու ճյուղերի հարաբերակցությանը:

Ավելացնենք նաև որ քննարկվող հարցը ոչ միանշանակորեն է լուծված նաև Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքներին»: Միևնույն ժամանակ Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված է, որ դատավորն անկախ է «արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս...»: Ստացվում է, որ Սահմանադրության ձևակերպումը հիմնաված է այն տեսական հայեցակարգի վրա, որի համաձայն դատական իշխանության միակ գործառույթը արդարադատության իրականացումն է, իսկ Դատական օրենսգրքում ամրագրված մոտեցումը ենթադրում է, որ բացի արդարադատությունից դատական իշխանությունը իրականացնում է նաև այլ գործառույթներ: Անտեսել այս հակասությունը կնշանակի արձանագրել, որ կամ դատական իշխանությունը բացի արդարադատության իրականացումից ունի նաև այլ՝ յուրիսդիկցիոն վերահսկողության գործառույթ, որը նա իրականացնում է առանց դատավորների մասնակցության կամ յուրիսդիկցիոն վերահսկողության գործառույթ իրականացնելիս դատավորները անկախ չեն:

Անցնենք դատական իշխանության կառուցվածքային երրորդ բաղադրատարրի հետ կապված հարցերի քննարկմանը:

Դատական իշխանության կազմակերպման և կազմավորման, ինչպես նաև գործառնության ընթացակարգերը ամրագրվում են իրավական նորմերի միջոցով: Ընդամին այդ նորմերը իրենցից ներկայացնում են ոչ թե պարզունակ ամբողջություն, այլ որոշակի համակարգ: Ինչպես հայտնի է յուրաքանչյուր պետության իրավունքի համակարգի հիմնական բաղադրատարրերն են իրավունքի ճյուղերը և ինստիտուտները: Հետևաբար առաջին հերթին պետք է քննարկվի հետևյալ հարցը. նշված համակարգը իրենից ներկայացնում է իրավունքի ինքնուրույն ճյուղ, թե կարելի է խոսել միայն իրավունքի առանձին ինստիտուտի մասին:

Պետք է նկատել, որ իրավունքի տեսության ոլորտում իրավունքի ճյուղի և իրավունքի ինստիտուտի հարաբերակցության մասին հարցը քննարկվում է այնպիսի վերացական մակարդակով, որը հնարավորություն չի տալիս նորմերի համապատասխան համակարգերը որպես իրավունքի ճյուղ կամ իրավունքի ինստիտուտ միանշանակ դասելու համար: Բոլոր հեղինակները համակարծիք են, որ իրավունքի ինստիտուտների և ճյուղերի տարանջատման համար հիմք է հանդիսանում առաջին հերթին իրավական կարգավորման առարկան: Հիմնվելով այս չափանիշի վրա, Վ. Ս. Ներսիսյանցը իրավունքի ինստիտուտը բնորոշում է որպես հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ կարգավորող միակարգ նորմերի հանրագումար, իսկ իրավունքի ճյուղը՝ որպես հասարակական հարաբերությունների որոշակի սեռը կարգավորող միակարգ նորմերի համակարգ:⁵⁰ Իհարկե տեսականորեն տարբերությունը հստակ է: Սակայն գործնականում անհայտ են մնում այն չափանիշները, որոնց հիման վրա հասարակական հարաբերությունների այս կամ այն համախումբը պետք է գնահատվի որպես տեսակ կամ սեռ: Ուստի պատահական չեն իրավունքի և օրենսդրության համակարգերի կառուցվածքի մասին իրավաբանական գրականության մեջ տասնամյակների պատմություն ունեցող բանավեճերը:

Հարցադրման կարգով մենք առաջարկում ենք հետևյալ մոտեցումը: Իրավունքի ինքնուրույն ճյուղի /կամ առնվազն՝ ենթաճյուղի/ ձևավորման վկայությունն է հանդիսանում հասարակական հարաբերությունների համապատասխան համախումբը կարգավորող օրինակարգված /կողմֆիկացիոն/ ակտի առկայությունը: Մեր այս առաջարկը ունի հետևյալ հիմնավորումը: Օրինակարգված ակտերը, որոնց շարքում առավել տարածված են օրենսգրքերը, ընդունվում են մինչ այդ գործող օրենսդրական մի քանի ակտերի նորմերի էական վերամշակման, փոփոխման և նորացման միջոցով: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի հիմքն էին հանդիսացել, մասնավորապես ՀՀ Նախագահի ընտրության մասին, ՀՀ Ազգային ժողովի ընտրության մասին և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին օրենքները: Հետևաբար օրինակարգված ակտի ընդունումը վկայում է, որ հասարակական հարաբերությունների կոնկրետ համախումբը հնարավոր է կարգավորել՝ եթե ոչ օրենսգրքի, ապա մի քանի օրենքների միջոցով:

Կարծում ենք, հենց այս հանգամանքի ուժով Դատական օրենսգրքով կարգավորվող հասարակական հարաբերությունների համախումբը պետք է գնահատվի ոչ թե միասեռ, այլ միատեսակ: Հետևաբար ՀՀ դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համատեքստում Դատական օրենսգրքի ընդունումից հետո իրավական նորմերի համապատասխան համակարգը արդեն կայացել է որպես ՀՀ իրավունքի ինքնուրույն ճյուղ՝ դատական իրավունք:

Նշենք նաև, որ մեր այս դիրքորոշման հետ համահունչ է Վ. Ս. Ներսեսյանցի դրույթը, որի համաձայն օրինակարգումը /կողմֆիկացիան/ իրավունքի ճյուղի կամ ենթաճյուղի նորմերի համակարգման եղանակ է:⁵¹ Սակայն Վ. Ս. Ներսեսյանցը որևէ ձևով չի հիմնավորում իր այս մոտեցումը, մինչդեռ իրավաբանական գրականության մեջ հայտնվել է նաև կարծիք, որ օրինակարգված ակտում ամրագրվում են իրավունքի այս կամ այն ճյուղի կամ ինստիտուտի նորմատիվ հիմքերը:⁵²

⁵⁰ ի»^aè ì. è. Û»ñè»èÛ³Ýó, Ýßí³í³ßË³i., լժ 192-193:

⁵¹ ÝáóÛÝ ì»ÕáóÛ:

⁵² Տե՛ս ìñóáèáù ìáùáé òáìðèè ìðààà è áìñóààðñòàà., ì., 1999, էջ 360:

Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել, որ իրավունքի սկզբունքները նույնպես միատարր չեն: Դրանք կարելի է դասակարգել տարբեր խմբերի, հիմնվելով դասակարգման զանազան չափանիշների վրա:

Դատական իշխանության կազմակերպման, կազմավորման և գործառնության իրավական կարգավորման սկզբունքները առաջին հերթին անհրաժեշտ է ստորաբաժանել երկու հիմնական խմբերի՝ հիմնվելով դրանց բովանդակության ընդհանրության աստիճանի վրա: Առաջին խումբն են կազմում պետական իշխանության կազմակերպման և գործառնության ընդհանուր իրավական սկզբունքները: Երկրորդ խումբն են կազմում հենց դատական իշխանության ինստիտուցիոնալ և գործառնությային սկզբունքները: Այդ երկու խումբ սկզբունքները, որպես կանոն, ուղղակիորեն ամրագրվում են կոնկրետ սահմանադրաիրավական նորմերում, դրանով իսկ վերափոխվելով նորմ-սկզբունքների:

Առաջին խմբի նորմ-սկզբունքները ամրագրված են ՀՀ Սահմանադրության առաջին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում: Այդ խմբին պետք է դասվեն՝ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդի ինքնիշխանությունը և ժողովրդական ներկայացուցչությունը, ինչպես նաև ժողովրդին պատկանող իշխանությունը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից յուրացումը արգելելը /հոդ. 2/, պետության (դրանով իսկ՝ բոլոր պետական մարմինների և պաշտոնատար անձանց) պարտավորությունը ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի համապատասխան /հոդ. 3/, պետության /դրանով իսկ՝ բոլոր պետական մարմինների և պաշտոնատար անձանց/ սահմանափակված լինելը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքով /հոդ. 3/, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասու լինելը կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով /հոդ. 5/:

Քննարկվող նորմ-սկզբունքների շարքում դատական իշխանության կազմակերպման և իրականացման համար առանձնահատուկ նշանակություն ունի Սահմանադրության 5-րդ հոդ. 1-ին մասով ամրագրված սկզբունքը, որի համաձայն «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»: Նորմի նշանակությունը կայանում է նրանում, որ այն սահմանում է երեք իշխանությունների փոխարաբերակցությունը հիմունքները:

Երկրորդ խմբի նորմ-սկզբունքները իրենց հերթին ստորաբաժանվում են երկու ենթախմբերի՝ նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են դատական իշխանության կազմակերպման հիմունքների (ինստիտուցիոնալ) և նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են դատական իշխանության գործառնությային հիմունքները, այսինքն արդարադատության սկզբունքներ: Այդ սկզբունքները ձևակերպված են սահմանադրության 6-րդ գլխի՝ «Դատական իշխանություն» մի շարք դրույթներում:

Առաջին ենթախմբին պետք է դասել՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացում միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան /հոդ. 91/, երաստիճան դատական համակարգի առկայությունը /հոդ. 92/, դատարանների անկախությունը և դրա երաշխավորումը Սահմանադրությամբ և օրենքներով /հոդ. 94/, դատավորների և

սահմանադրական դատարանի անդամների անփոփոխելիությունը /հոդ. 96/, արդարադատություն իրականացնելիս դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անկախությունը և նրանց ենթարկվելը միայն Սահմանադրությանը և օրենքներին /հոդ. 97:

Դատական իշխանության գործառույթային հիմունքների /արդարադատության սկզբունքների/ ուսումնասիրությունը միշտ եղել է քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության մասնագետների ուշադրության կենտրոնում: Նրանց կողմից ձեռնարկվել են արդարադատության սկզբունքների դասակարգման բազմաթիվ փորձեր: Մասնավորապես լայն տարածում է գտել արդարադատության սկզբունքների դասակարգումը ճյուղային և միջճյուղային սկզբունքների: Միջճյուղային սկզբունքներ են համարվում այն սկզբունքները, որոնք գործում են դատավարության երեք ոլորտներում՝ սահմանադրական, քրեական և քաղաքացիական: Ճյուղային են համարվում այն սկզբունքները, որոնք գործում են այդ ոլորտներից միայն որևէ մեկում:⁵⁶

Արդարադատության սկզբունքների տարանջատումը միջճյուղային և ճյուղային սկզբունքների, կարելի է ասել, համընդհանուր ճանաչում է գտել:⁵⁷ Սակայն որոշակի վիճաբանություններ են առաջանում առանձին կոնկրետ սկզբունքները ճյուղայինի կամ միջճյուղայինի դասելու խնդրում: Այսպես, անմեղության կազիավարկածը սովորաբար դիտարկվում է որպես քրեական դատավարության ճյուղային սկզբունք: Միևնույն ժամանակ փորձեր են կատարվում նաև հիմնավորելու այդ սկզբունքի միջճյուղային բնույթը: Խորհրդային իրավաբանական գրականության մեջ կողմերի հավասարությունը դիտարկվում էր որպես քաղաքացիական դատավարության սկզբունք:⁵⁸ Սակայն հետսոցիալիստական իրավաբանական գրականության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել տեսակետը, որի համաձայն նշված սկզբունքը դասվում է միջճյուղային սկզբունքների շարքին:

Իրավաբանական գրականության մեջ մեծ տարածում է գտել նաև նորմ-սկզբունքների ստորաբաժանումը ըստ դրանք ամրագրող նորմատիվ-իրավական ակտերի տեսակների: Այս առումով սկզբունքները ստորաբաժանվում են սահմանադրական և դատարանակազմական ու դատավարական ճյուղային օրենսդրության մեջ ամրագրված սկզբունքների:⁵⁹

Այս մոտեցմանն է հարում Գ. Ղազինյանի կողմից առաջադրված դասակարգումը, որի համաձայն քրեական դատավարության սկզբունքները կարելի է դասակարգել երեք խմբերի՝ 1. քրեական դատավարության սկզբունքներ, որոնք ամրագրված են Սահմանադրության մեջ և ուղղակիորեն վերարտադրված են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում, 2. քրեական դատավարությանը

⁵⁶ Տես՝ օրինակ, Ննախնա Ա.Լ. Իծելօելն ոնաձոնեթաի աձաաաինեթաի իծօաոնոաեւնթաի իձաա. Աաձիձաձ. աեոո. աիեձ. իձեա. իաձե. Նաձձաեթիաե, 1965, էջ 15; Ա. Ղամբարյան. Արդարադատության սկզբունքների դասակարգման խնդիրները. Դատական իշխանություն, 2005, թիվ. 4, էջ. 31-36; Իձիաեաին ոձաաաիթաի իձաա. Լ.: Իաձեա, 1983, էջ 180-193:

⁵⁷ Տես՝ Նիձձիա Ա.Ա. Իթաաե ձաթեթաթաի իծօաոնա. Նաթեձ-Իձաձաձաձա, Աեւձա, 2000, էջ 16:

⁵⁸ Տես՝ Ննախնա Ա.Լ. Իծելօելն ոնաձոնեթաի աձաաաինեթաի իծօաոնոաեւնթաի իձաա. Աաձիձ. աեոո. աիեձ. իձեա. իաձե. Նաձձաեթիաե, 1965, էջ 16:

⁵⁹ Տես՝ օրինակ, Աաձաիա Ն.Ի. Աձաաաինեթե իծօաոն. Լ., 1948, էջ 21: Էթաեթաի Ա.Օ. Նիաձոնեթե աձաաաինեթե իծօաոն. Լ., 1954, էջ 44; Իթեթիեթե Ի.Ի. Աիձիոն ձաթեթե ոնաձոնեթաի ձաթեթաթաի իծօաոն. Լ.: Էթա-աի ԼԱՕ, 1956, էջեր 84-114; Աթեւաա Ա.Ի. Էթեթեթեթեթեթե իծելօելն ձաթեթաթաի ոձաիձեթաթաթաթա// Օաթեթաթե իծօաոն. Օ-աաթեթե աեթ ԱՕՇ-թա, Լ. ՆԻԱԾԷ. 2000, էջ 75; Աեթաա Օ.Օ., Աձիա Ի.Ա. Իոնաթա իա-աեա ձաթեթաթաի ոձաիձեթաթաթաթա. Լ., 2003, էջ 12; Ա. Ղամբարյան. Արդարադատության սկզբունքների դասակարգման խնդիրները. Դատական իշխանություն, 2005, Լ. 4, էջ. 33-35:

ընթացիկ օրենսդրությամբ ամրագրված սկզբունքների միջև: Նման հակասություններ կարող են առաջանալ օրենսդրական գործընթացում թույլ տրված սխալների արդյունքում և այդ դեպքում նախապատվությունը ակնհայտորեն պետք է տրվի սահմանադրական սկզբունքներին: Ավելին պետք է հնարավորինքս կարճ ժամանակում միջոցներ ձեռնարկվեն ընթացիկ օրենսդրությամբ ամրագրված սկզբունքները սահմանադրական սկզբունքներին համապատասխանացնելու ուղղությամբ՝ ընդուպ նաև օրենսդրությամբ ամրագրված սկզբունքները հակասահմանադրական ճանաչելու միջոցով: Հենց այս հանգամանքով է բացատրվում դատավարական սկզբունքների նման սահմանազատման գործնական նշանակությունը և, հետևաբար, տեսական իմաստն ու անհրաժեշտությունը:

**ԳԼՈՒԽ 2 ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

2.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 1990-1995 Թ.Թ.

սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժից: Սահմանադրությունը պահպանեց իր բարձրագույն իրավաբանական ուժը բոլոր օրենքների նկատմամբ, բացառությամբ Հոչակագրի հիման վրա ընդունված օրենքների: Վերջիններս իրենց հերթին գործող սահմանադրության նկատմամբ ստացան ավելի բարձր իրավաբանական ուժ:⁶⁸ Հոչակագիրը՝ իր հերթին, Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգում գերակա իրավաբանական ուժ ստացավ:

Քննարկվող սահմանադրական օրենքը իրավաբանական կորեկտության տեսանկյունից իհարկե կարող է արժանանալ տարբեր գնահատականի, այդ թվում՝ քննադատական: Այսպես, Գ. Դանիելյանը գտնում է, որ այդ օրենքը զուտ իրավական տեսանկյունից այնքան էլ անխոցելի չէր, նույնիսկ չէին պահպանվել իրավական ակտերի տեսակների վերաբերյալ պահանջները, սակայն այս հարցադրումները պատմական այդ յուրահատուկ ժամանակաշրջանում որևէ հրատապություն չունեին, այդ քայլերը գնահատվում էին որպես ժողովրդավարության պահանջներով թելադրված և անխուսափելի:⁶⁹ Ամեն դեպքում այդ օրենքը հնարավորություն ստեղծեց սովորական օրենսդրական ընթացակարգերով հաղթահարել իրականացվող բարեփոխումներին խորհրդային սահմանադրության «դիմադրությունը»: Հոչակագրի և 1990 թվականի դեկտեմբերի 10-ի սահմանադրական օրենքի հիման վրա ընդունվեցին մի շարք կարևորագույն օրենքներ: Մասնավորապես 1991 փետրվարի 26-ին ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը,⁷⁰ որը Հայաստանի Հանրապետությունում բազմակուսակցական քաղաքական համակարգի սահմանադրաիրավական հիմքը դառնալով:

Սակայն այդ սահմանադրական օրենքով ստեղծված հնարավորությունները ոչ լրիվ օգտագործվեցին: Այդ ժամանակաշրջանում բարեփոխումները ընդգրկեցին միայն պետական իշխանության օրենսդիր և գործադիր թևերը: Դատական իշխանության ոլորտում իրավիճակը չփոխվեց նույնիսկ «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունումից հետո, որի 6-րդ հոդվածով ուղղակիորեն ամրագրված էր. «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների համակարգը, իրավասությունների շրջանակաը և փոխհարաբերության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»:⁷¹ Մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը դատական համակարգի սահմանադրաիրավական հիմունքները որակական փոփոխությունների չենթարկվեցին:⁷²

Միայն կլինի ենթադրել, որ դատական համակարգի բարեփոխումները չէին իրականացվում այն պատճառով, որ դրանց անհրաժեշտությունը չէր գիտակցվում: Դա արդիական խնդիր էր, որի կարևորության վկայությունն են Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1992 թվականի 23-ին և նույն թվականի նոյեմբերի 2-ին ընդունված որոշումները Հայաստանի Հանրապետության շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանների ժողովրդական

⁶⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Վ. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները 33-ում. – Օրենք և իրականություն, 2003, թիվ 19-20, էջ. 2:

⁶⁹ Դանիելյան Գ. Վարչական արդարադատության կայացման խնդիրները. Երևան, ԱՌՏ, 2004, էջ 149

⁷⁰ ԾԾՊԷ՛ 1991/4:

⁷¹ ԾԾՊԷ՛ 1991/18:

⁷² ի»^aē ēi»÷³ŸŮ³Ÿ Վ. ԿáðŮŸ ì»ŌáðŮ:

դատավորների լիազորությունների ժամկետը երկարաձգելու մասին: Առաջին որոշմամբ դատավորների լիազորությունների ժամկետի երկարաձգումը ուղղակիորեն հիմնավորվում էր «Ելնելով Հայաստանի Հանրապետությունում դատական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունից»:⁷³ Երկրորդ որոշման երկրորդ կետով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի իրավական հարցերի հանձնաժողովին արդեն հանձնարարական էր տրված մեկամսյա ժամկետում Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել դատական ռեֆորմի հիմնական սկզբունքները:⁷⁴

Դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի քննարկումը տեղի ունեցավ Գերագույն խորհրդի 1993 թվականի ապրիլի 13-ի նիստում: Հայեցակարգով նախատեսվում էր նախապատրաստել և իրականացնել մի շարք քայլեր, ուղղված գործադիր իշխանությունից դատարանների անկախության ապահովմանը, ստեղծել երաստիճան դատական համակարգ՝ նեռարյալ վերաքննիչ աստյանը, ներմուծել երդվյալների ինստիտուտը, նախնական կալանքի թույլտվության իրավունքը վերապահել դատարաններին, ազատել դատարանը մեղադրող կողմի համար ապացույցներ հայթայթելու պարտականությունից և նրան վերապահել միայն անկողմնակալ արբիտրի գործառույթը և այլ:⁷⁵ Սակայն Գերագույն խորհուրդը քվեարկությամբ հավանություն չտվեց դատաիրավական ռեֆորմի հայեցակարգի առնչությամբ ներկայացված փաստաթղթին: Կարծում ենք, այստեղ էական դեր խաղացին գերատեսչական մոտեցումները և գերատեսչական շահերը: Այսպես՝ եթե արդարադատության նախարարը պաշտպանեց ներկայացված փաստաթուղթը, ապա Հանրապետության գլխավոր դատախազը և Գերագույն դատարանի նախագահը մտահոգություն արտահայտեցին այդ պահին դատաիրավական համակարգի առաջարկվող արմատական փոփոխությունների կապակցությամբ, հաշվի առնելով այն, որ Հանրապետությունում բացակայում է միասնական դատական համակարգը:⁷⁶ Այդպիսով նոր միասնական դատական համակարգի կայացմանն ուղղված բարեփոխումների գործընթացը կասեցվեց հենց այն պատճառաբանությամբ, որ Հանրապետությունում միասնական դատական համակարգ դեռևս չի ձևավորվել: Դրա հետևանքով դատական համակարգի բարեփոխումների ուղղությամբ մինչև ՀՀ 1995 թ. Մահմանադրության ընդունումը որևէ էական քայլեր չկատարվեցին և մինչև 1999 թվականը մեզանում շարունակեց գործել իր էական հատկանիշներով դեռ խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած դատական համակարգը:

Իհարկե ճիշտ չի լինի ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում դատական համակարգի մնաց լրիվ կարծրացած վիճակում: Կատարվեցին որոշակի փոփոխություններ դատական համակարգի կառուցվածքում: Ազգային բանակի ձևավորման գուզընթաց, ինքնիշխան պետության դատական համակարգում, իհարկե, նախ և առաջ պետք է ձևավորվեր զինվորական դատարանների ենթահամակարգը: 1992 թվականի հուլիսի 25-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության դատական համակարգում զինվորական դատարան ստեղծելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն ՀՀ դատական համակարգում ստեղծվեց զինվորական դատարան

⁷³ ԾԾՊԷԻ 1992/12:

⁷⁴ ԾԾՊԷԻ 1992/21-22:

⁷⁵ Տես՝ Աիւն Ածիւն, 1993, 14 ամիսը:

⁷⁶ Տես՝ Հայաստանի Հանրապետություն, 1993, 14 ապրիլի:

(տրիբունալ), իսկ գերագույն դատարանի կազմում՝ զինվորական գործերի դատական կոլեգիա⁷⁷:

Բովանդակային փոփոխություններ կատարվեցի նաև դատարանների գործունեության կարգը սահմանող օրենսդրության մեջ: Այդպես, 1994 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում» և «Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով փոփոխություններ կատարվեցին քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության ընթացակարգերում:⁷⁸

Ինչպես հայտնի է խորհրդային օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական և քաղաքացիական գործերը, որպես կանոն, քննվում էին դատավորի և ատենակալների կազմով: Ընդամին ատենակալների ինստիտուտը, ըստ էության, ժողովրդավարական պետություններում ընդունված երդվյալների ինստիտուտի նենգափոխված ձևն էր: Եթե երդվյալները ակտիվ վճռորոշ մասնակցություն ունեին միայն գործի փաստացի հանգամանքների բացահայտման և գնահատման գործընթացներում, ապա խորհրդային համակարգում ատենակալները դատավորների հետ նույն կարգավիճակով մասնակցում էին գործերի քննության բոլոր փուլերում՝ նեռարյալ իրավաբանական որոկավորումը /կիրառվելիք իրավունքի նորմի ընտրությունը և դրա վերլուծությունը իսկության և օրինականության տեսանկյունից, ժամանակի, տարածքի և անձանց շրջանակի դրա գործողության տեսանկյունից/, ինչպես նաև նորմի բովանդակության վերլուծությունը և դատավճռի կամ վճռի կայացումը: Մինչդեռ ակնհայտ է, որ գործի փաստացի հանգամանքների իրավաբանական վերլուծությունը և նորմի բովանդակության վերլուծությունը, ինչպես նաև որոշման կայացումը գործընթացներ են, որոնք ենթադրում են իրավաբանական մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակ: Ուստի ատենակալների մասնակցությունը դատավարության այդ փուլերում, որպես կանոն, կրում էր ձևական բնույթ և վերջին խոսքը մնում էր պրոֆեսիոնալ դատավորին: Նոր պայմաններում շատ արագ բացահայտվեց այդպիսի ընթացակարգի ևս մեկ էական թերություն: Դատավորները հաճախ իրենց մասնակցությամբ կայացված ոչ հիմնավորված կամ պարզապես անօրինական դատական վերջնական ակտերը արդարացնում էին իբր թե ատենակալների դիրքորոշմամբ, դրանով իսկ փորձելով խուսափել պատասխանատվությունից: Հաշվի առնելով հենց վերը նշված հանգամանքները քննարկվող օրենքով սահմանվեց նոր կարգ, որի համաձայն միայն ծանր հանցագործությունների հետ կապված քրեական գործերի քննությունն էր իրականացվում դատավորի և ատենակալների կազմով: Մնացած քրեական գործերը դատավորները քննում էին միանձնյա կարգով:

Նույն օրենքով սահմանվեց նաև, որ քաղաքացիական գործերի քննությունն առաջին ատյանի բոլոր դատարաններում կատարվում է դատավորի կողմից միանձնյա կարգով: Վճռաբեկության կարգով գործի քննումը դատարաններն իրականացնում են դատարանի երեք անդամի կազմով: Հսկողության կարգով գործի քննումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի

⁷⁷ ՀՀԳԽՏ 1992 /15-16:

⁷⁸ ՀՀԳԽՏ 1994 /13:

քաղաքացիական գործերի դատական կոլեգիան՝ դատարանի երեք անդամի կազմով, Գերագույն դատարանի նախագահությունը՝ նախագահության անդամների մեծամասնության կազմով, իսկ Գերագույն դատարանի պլենումը՝ Գերագույն դատարանի պլենումի անդամների ոչ պակաս երկու երրորդի կազմով:

Փոփոխությունն կատարվեց նաև դատավորների կարգավիճակը սահմանող օրենսդրության մեջ: «ՀՀ դատարանների դատավորների որակավորման դասեր սահմանելու մասին» 1993 թվականի հունիսի 21 ՀՀ օրենքով սահմանվեցին դատավորների հետևյալ որակավորման դասերը՝ բարձրագույն որակավորման դաս, առաջին որակավորման դաս, երկրորդ որակավորման դաս, երրորդ որակավորման դաս, չորրորդ որակավորման դաս, հինգերորդ որակավորման դաս:⁷⁹

Անցումային ժամանակաշրջանի առաջին փուլում, երբ անձեռնմխելիության իրավունքով օժտված անձանց մի մասը ժողովրդավարացման գործընթացները ընկալում էր որպես ամենաթողություն, արդիականացավ այդ անձանց պատասխանատվության, այդ թվում թրեական պատասխանատվության, հարցը: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության 1994 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ հաստատվեց տեղական խորհրդի պատգամավորներին և պատգամավորության թեկնածուներին, Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածուներին, շրջանային և քաղաքային ժողովրդական դատարանների ժողովրդական դատավորներին, ժողովրդականատենակալներին քրեական պատասխանատվության կանչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությունների քննարկման կարգը⁸⁰

1990 թվականի դեկտեմբերի 10-ի սահմանադրական օրենքի հիման վրա էական փոփոխություններ կատարվեցին իշխանության երկու մյուս թևերի՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների կազմակերպման և գործունեության կարգը, ինչպես նաև իրավասությունը սահմանող օրենսդրության մեջ: Մասնավորապես, 1991 թվականի օգոստոսի 1-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին»⁸¹ իսկ նույն թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին»:⁸² Այդ օրենքներով արմատական փոփոխություններ կատարվեցին ՀՀ պետական իշխանության ամբողջ համակարգում՝ ներմուծվեց ՀՀ Նախագահի ինստիտուտը, փոփոխվեց գործադիր իշխանության համակարգը, ներառյալ կառավարության կազմավորման կարգը, Գերագույն Խորհուրդը զրկվեց այն լիազորություններից, որոնք յուրահատուկ չէն օրենսդիր մարմինի համար: Դրանով իսկ պետական իշխանության համակարգը որոշակիորեն համապատասխանեցվեց իշխանությունների տարանջատման սկզբունքին: Այդ օրենքների միջոցով, ըստ էության, անցում կատարվեց կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն:⁸³

Իհարկե պետական իշխանության մյուս երկու թևերում կատարված փոփոխությունները իրենց ներգործությունը ունեցան նաև դատական համակարգի ոլորտի հարաբերությունների իրավական կարգավորման վրա: Այսպես՝ համաձայն

⁷⁹ ՀՀԳԽՏ 1993 /13:

⁸⁰ ՀՀԳԽՏ, 1994/19:

⁸¹ ՀՀԳԽՏ 1991 /15:

⁸² ՀՀԳԽՏ 1991/22:

⁸³ Մ¹ Ս³ԵՇԿ Ս³ԿՆ³Ս³ԵԿ ի»Ե՝ Ե՞Ի»±³ԿՍ³Կ ի. Ի³Ե³Ի³ՆՍ³Կ ԵձՆՆ¹³ՍՇԿ Օ՝ՇՕ ¹»ձՇ ԻՇԵ³Կ³Ե³.³Ն³Ի³Կ Ն³ԿՆ³ձ»իձՕՁձՕԿ. սն՝Կն՝ ՇՆ³Ի³ԿձՕՁձՕԿ, 2003, ԱՇԻ 19-20, չԸ 1-3:

Հայաստանի ԽՍՀ 1978 թվականի Սահմանադրության 98-րդ պետական Գերագույն խորհրդը պետական իշխանության բարձրագույն մարմիններ, որի բացի սահմանադրությամբ իրեն ուղղակի վերապահված լիազորություններից, կարող էր նաև քննարկել և լուծել հասարակական և պետական կյանքի ցանկացած կարևորագույն հարց: Այս դրույթը լիովին բացառում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, մասնավորապես, Գերագույն խորհուրդին հնարավորություն տալով իրականացնել, եթե տվյալ դեպքում այդպես կարելի է ասել, արդարադատության գործառույթ: Այդպիսով բացի դատարաններից «արդարադատություն» կարող էր իրականացնել նաև «պետական իշխանության բարձրագույն մարմինը»՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը: Հենց այդ հոդվածով իրեն վերապահված հնարավորությունից էլ օգտվեց Գերագույն խորհուրդը, 1991 թվականի ապրիլի 17-ին ընդունելով «Հայաստանի կոմունիստական կուսակցության և նախկին Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքը ազգայնացնելու մասին» որոշումը: Հետաքրքիր է կոմկուսի և կոմերիտմիության գույքի ազգայնացումը որոշմամբ հիմնավորվեց նրանով, որ պետական իշխանության կառուցվածքների հետ կոմկուսի սերտաճումը և կոմկուսի ղեկավար դերը օգտագործվել է կուսակցության ձեռքբերում հսկայական նյութական կուտակման համար և կոմկուսի ունեցվածքը ստեղծվել է հանրապետության քաղաքացիների մի քանի սերունդների, պետական միջոցների հաշվին:⁸⁴ Այսինքն Գերագույն խորհուրդը իրականացրեց դատական իշխանության գործառույթ:

Ուստի «Գերագույն խորհրդի մասին» ՀՀ օրենքը, զրկելով այդ մարմինը արդարադատության գործառույթներ իրականացնելու հնարավորությունից, դրանով իսկ այդպիսի գործառույթի իրականացման հնարավորությունը վերապահեց միայն դատական մարմիններին: Այլ կերպ ասած, քննարկվող օրենքը ստեղծեց այն իրավիճակը, որը հետագայում ամրագրվեց ՀՀ Սահմանադրության մեջ՝ արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները:

Դատական համակարգի գործառնության ոլորտում կատարվեցի նաև մի շարք այլ փաստացի բնույթի փոփոխություններ, որոնք պայմանավորված էին անկախ պետականության ձևավորման գործընթացով: Մասնավորապես, ՀՀ դատական համակարգը ամբողջականացավ, քանի որ փաստացի այդ համակարգից դուրս մնաց ԽՍՀՄ Գերագույն դատարանը, որն մինչ այդ ՀՀ դատական համակարգի նկատմամբ իրականացնում էր հսկողական լիազորություններ: Նախկինում իշխող կոմունիստական կուսակցության կողմից իր «ղեկավար և ուղղություն ցույց տվող» ուժը կորցնելուց և բազմակուսակցական համակարգի ձևավորումից հետո դատարանները դուրս մնացին կուսակցական վերահսկողությունից: Միննույն ժամանակ նրանք գործում էին գործադիր իշխանության մարմնի՝ արդարադատության նախարարության, կազմակերպական ենթակայության ներքո:

Ընդհանրացնելով շարադրվածը կարելի է եզրահանգել, որ 1990-1995 թ.թ. ժամանակահատվածում դատական համակարգի ձևավորման և գործունեության սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում կատարվեցին որոշակի փոփոխություններ: Այդ փոփոխությունները վերաբերում էին դատական համակարգի կազմակերպման և գործառնության ամենատարբեր ոլորտներին՝ դատական համակարգի կառուցվածքին, դատավարական ընթացակարգերին, դատվորների նշանակաման կարգին, նրանց պատասխանատվության ենթարկելու

⁸⁴ ՀՀԳԽՏ 1991 /8:

կարգին և այլն: Սակայն այդ փոփոխությունները իրականացվում էին առանց միասնական հայեցակարգի և կրում էին ֆրագմենտար բնույթ: Իր էությամբ դատական համակարգը մնաց նույնը՝ խորհրդայինը, որի համար հատկանշական էին՝

- 1/ էական կախվածությունը գործադիր իշխանության մարմիններից,
- 2/ տարբեր ատյանի դատարանների միջև դատավարական իրավասության ոչ հստակ սահմանագատումը և մեկ դատարանում /ՀՀ գերագույն դատարան/ առաջին ատյանի, վճռաբեկ վարույթի և հսկողական վարույթի կենտրոնացումը, ինչի արդյունքում առաջին ատյանի դատարանները հայտվել էին մեծ կախվածության մեջ դատական բարձրագույն ատյանից,
- 3/ դատավորների ինքնակառավարման որևէ արդյունավետ մեխանիզմի բացակայությունը,
- 4/ արդարադատության պատժիչ բնույթը և դատարանների և դատավորների որոշակի մեղադրական գործառույթներով ծանրաբեռնումը,
- 5/ ոչ մրցակցային դատավարական կարգը և կողմերից մեկի վերահսկողական լիազորությունների դատարանի նկատմամբ,
- 6/ վերաքննիչ վարույթի բացակայությունը,
- 7/ ազատ շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում մասնագիտացված՝ տնտեսական դատարանների բացակայությունը:

Այդ ամենը հիմք է տալիս խոսել ոչ թե այդ ժամանակահատվածի դատական իշխանության մասին՝ որպես պետական իշխանության ինքնուրույն թևի, այլ սոսկ դատական համակարգի մասին և ոչ թե այդ համակարգի ինքնուրույն գործառնությունների մասին, այլ դրա կողմից օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացման մասին: Գործող դատական համակարգի այդ թերությունների վերացմանն պետք է նպաստեր Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունը:

2.2 ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (1995-2005 թ.թ.)

Դատական համակարգի բովանդակային բարեփոխումները, նրա վերափոխումը դատական իշխանության սկսվեց ՀՀ 1995 թվականից՝ Սահմանադրության ընդունմամբ: ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը երկակի դեր ուներ Հանրապետության ամբողջ պետական իշխանության համակարգի բարեփոխման գործընթացում: Նախ Սահմանադրությամբ ճշգրտվեցին և արդեն հիմնական օրենքի մակարդակով ամրագրվեցին այն բոլոր փոփոխությունները, որոնք իրականացվել էին իշխանության օրենսդիր և գործադիր թևերի կազմակերպման և գործառնության ոլորտներում «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» և «Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի մասին» օրենքներով:

Մինչև ժամանակ Սահմանադրությամբ ամրագրվեցին դատական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպման և իրականացման նոր սկզբունքներն ու նորմերը:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ նախ վերահաստատվեցին դեռևս «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրով և «Անկախ պետականության սահմանադրական հիմնադրությունների մասին» 1991 թվականի սեպտեմբերի 24-

սահմանադրական օրենքով արդեն իսկ հռչակված իշխանությունների տարանջատման մասին և դատական իշխանության անկախության մասին հիմնարար սկզբունքները: Մակայն մինչև Սահմանադրության ընդունումը այդ սկզբունքների օրենսդրական կոնկրետացման և իրագործման ուղղությամբ որևէ գործնական քայլեր չէին կատարվել: ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ ոչ միայն հռչակվեցին իշխանությունների տարանջատման և դատական իշխանության անկախության սկզբունքները, այլ նաև ամրագրվեցին այդ սկզբունքների իրականացման գործնական սահմանադրաիրավական մեխանիզմներ:

Դատական իշխանության ոլորտի հարաբերությունները կարգավորող սկզբունքներն ու դրույթները ամրագրված են Սահմանադրության տարբեր գլուխներում: Մասնավորապես, դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ սերտորեն առնչություն ունեն «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում ամրագրված այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են. Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային սկզբունքներին ու նորմերին համապատասխան մարդու իրավունքների և ազատությունների ապահովման պետության պարտավորությունը /հոդ. 4/, պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա / հոդ. 5, մաս 1/, պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունը կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար նրանք լիազորված են օրենսդրությամբ /հոդ. 5, մաս 2/, օրենքի գերակայության երաշխավորումը /հոդ. 6/:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն դրույթը, որի համաձայն ժողովրդավարական սահմանադրությունը պետք է ապահովի երկու փոխկապակցված խնդիրների արդյունավետ լուծում. ա/ ամրագրի և երաշխավորի մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, բ/ սահմանի պետական իշխանության կազմակերպման և գործառնության այնպիսի համակարգ, որն ի վիճակի է պահպանել և պաշտպանել այդ իրավունքներն ու ազատությունները: Ուստի ՀՀ Սահմանադրության երկրորդ՝ «Մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները» գլխի մի շարք նորմերի դրույթներ մեծ չափով կանխորոշում են, մասնավորապես, դատական իշխանության կազմակերպման և գործառնության առանձնահատկությունները: Այստեղ առանցքային դեր ունի Սահմանադրության 38-րդ հոդվածի դրույթը. «Յուրաքանչյուր ոք ուներ իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Դատական իշխանության մարմինների ամբողջ համակարգի ձևավորման համար սկզբունքային նշանակություն ունեւր Սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրավունք»: Ակնհայտ է, որ այս դրույթը ինքնին արդեն կանխորոշում է դատական համակարգում վերաքննիչ ատյանի գոյությունը: Այստեղ նկատենք, որ նույնիսկ ՌԴ-ի օրենսդրությամբ, ելնելով ֆինանսական հիմնավորումներից, նպատակահարմար

չհամարվեց վերաքննիչ դատարանների ձևավորումը:⁸⁵ Նույն գլխում ամրագրված մարդու և քաղաքացու որոշ իրավունքներ կանխորոշում են նաև արդարադատության սկզբունքների բովանդակությունը: Այդպիսի նշանակություն ունեին, մասնավորապես, անմեղության կանխավարկածը և հատկապես դրույթները, որոնց համաձայն մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը և չփարատված կասկածների հոգուտ մեղադրյալի մեկնաբանման իրավասու մարմինների՝ այդ թվում դատարանների, պարտավորությունը /հոդ. 41/, իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ ցուցմունք տալու պարտավորություն բացառումը /հոդ. 42 մաս 1/, ինչպես նաև 42-րդ հոդվածի 2-5 մասերի դրույթները, որոնք իրավապահ մարմիններին և դատարաններին արգելում են՝ օրենքի խախտման ձեռք բերված ապացույցների օգտագործումը /2-րդ մաս/, ավելի ծանր պատժի նշանակումը, քան կարող էր կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով /3-րդ մաս/, մարդուն հանցագործության համար մեղավոր ճանաչելը, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել /4-րդ մաս/, պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքին հետադարձ ուժ տալը /5-րդ մաս/:

Սահմանադրության 2-րդ գլխի որոշ հոդվածների դրույթներ ուղղակիորեն սահմանում էին դատարանների կոնկրետ և բացառիկ լիազորություններ: Մասնավորապես մարդն կարող է կալանավորվել /հոդ.18/, յուրաքանչյուրի հողորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել /հոդ. 20/, բնակարանը կարող է խուզարկվել /հոդ. 21/՝ միայն դատարանի որոշմամբ:

Բնականաբար, դատական իշխանության սահմանադրաիրավական մյուս սկզբունքները և դրույթները ամրագրվեցին Սահմանադրության հատուկ՝ դատական իշխանության կազմակերպան և գործառնության ոլորտի հարաբերությունները կարգավորող, 6-րդ գլխի հոդվածներով: Այս առումով կարևոր նշանակություն ունեին հետևյալ սահմանադրական դրույթները. արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքների համապատասխան /92-րդ հոդ./, երաստիճան դատական համակարգի ներմուծումը, նեոարյալ վերաքննիչ ատյանի դատարանները /92-րդ հոդ., մաս. 1/, մասնագիտացված դատարանների ձևավորումը /92-րդ հոդ. 2-րդ մաս/, արդարադատության խորհրդի ձևավորումը /հոդ. 94 և 95-րդ/, դատավորների և սահմանադրական դատարանի անդամների անփոփոխելիությունը / 96-րդ/, արդարադատություն իրականացնելիս դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անկախությունը և ենթարկվելը միայն օրենքներին /հոդ. 98, մաս 1/, սահմանադրական դատարանի ստեղծումը / հոդ. 99-102/:

Միննույն ժամանակ, ինչպես արդեն նշել էինք, Սահմանադրության մեջ տեղ գտան դատական իշխանությանը վերբերող մի շարք վիճարկելի դրույթներ: Մասնավորապես, դատարանների անկախությունը երաշխավորվում էր ոչ թե Սահմանադրությամբ և օրենքներով, այլ ՀՀ Նախագահի կողմից /հոդ. 94, մաս 1/: Սահմանադրության 94-րդ հոդվածով նախատեսված արդարադատության խորհրդի կազմը և կազմավորման կարգը ակնհայտորեն չէին համապատասխանում դատավորների անկախության ապահովման խնդրի լուծմանը: Բավական է միայն նշել, որ ՀՀ Նախագահին կից արդարադատության խորհրդի նախագահի պաշտոնը

⁸⁵Տես՝ Ἀσοάιει Ε.Ο. Νόαάάιáy ὀάοίὀια: ἐνὀίεε ε ὀάίάάίὀεε.Ἀάñὀίεε ἱñείāñείāī ὀίεεάὀñεὀάὀα, ñáὀey 11, Ἴὀááī, 1995, ὀիվ 5, էջ 7-12:

վերապահված էր հենց Հանրապետության Նախագահին: Արդարադատության խորհրդի նախագահի տեղակալներն էին, ըստ էության, գործադիր իշխանության երկու ներկայացուցիչը՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկվում էին նաև երեք դատախազ: Արդյունքում՝ արդարադատության խորհրդի 17 անդամներից միայն 9-ն էին ներկայացնում դատական կորպուսը: Դատական կորպուսի ձևավորման, դատավորների խրախուսման և պատասխանատվության ենթարկելու հարցերի լուծման վրա մեծ ազդեցություն ունեին դատական կորպուսում չընդգրկված անձինք:

Գործադիր իշխանությունից դատական իշխանության կախվածության աստիճանը ավելի մեծանում էր այն պատճառով, որ դատավորների պաշտոնական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակները արդարադատության խորհուրդը կազմում էր գործադիր իշխանության ներկայացուցիչի՝ արդարադատության նախարարի առաջարկով: Վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորների նշանակման գործընթացում նույնպես վճռորաշ դերակատարում ունեւր արդարադատության նախարարը. արդարադատության խորհուրդը միայն եզրակացություն էր տալիս արդարադատության նախարարի կողմից ներկայացված այդ դատավորների թեկնածության վերաբերյալ:

Վիճարկելի կարելի է համարել նաև Սահմանադրությամբ նախատեսված Գերագույն դատարանի վերափոխումը վճռաբեկ դատարանի: Այս փոփոխությունը իհարկե ուներ որոշակի հիմնավորումներ: Ասենք, սահմանադրական դատարանի ստեղծումը ինքնին հարցականի տակ էր դնում որևէ դատարան «Գերագույն» կոչելու նպատակահարմարությունը: Բացի դրանից, խորհուրդային «ավանդույթի» համաձայն «Գերագույն» էին հռչակվում այն պետական մարմինները, որոնք օժտված էին չափազանց լայն և բազմաբովանդակ իրավասությամբ: Այդպես, «Գերագույն Խորհուրդը» իրավասու էր քննարկել և լուծել պետական և հասարակական կյանքի ցանկացած կարևորագույն հարց: «Գերագույն դատարանում» իրավասու էր գործեր քննել և որպես՝ առաջին ատյան, և որպես՝ վճռաբեկ ատյան, և որպես՝ հսկողական ատյան: Ուստի Գերագույն դատարանի վերափոխումը վճռաբեկ դատարանի նպատակ ուներ արդեն նրա անվանման մեջ ընդգծել այդ դատարանի վճռաբեկ ատյան լինելու հանգամանքը: Սակայն այդպիսի վերափոխումը ուներ նաև իր բացասական հետևանքները: Դատական իշխանությունը դրանով իսկ որոշակիորեն զրկվեց իր համակարգային հատկանիշից, քանի որ վերացվել էր համակարգի այն կարևորագույն օղակը, որն ի վիճակի կլինեւր հանդիսանալ իշխանության այդ թևի առանցքը, ապահովել միասնական դատական քաղաքականության մշակումն ու իրագործումը, դատական պրակտիկայում օրենքների միատեսակ կիրառումը:

Հենց դրանով էր բացատրվում է դատական բարեփոխումների 2-րդ փուլի իրականացման անհրաժեշտությունը՝ նեոարյալ սահմանադրական փոփոխությունների միջոցով: Սակայն պետք է արձանագրել, որ 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ էական քայլ կատարվեց դեպի իրական դատական իշխանության ձևավորումը:

Այդպիսով, Սահմանադրությունը դատական իշխանության արմատական բարեփոխումների հիմք դրեց: Սակայն այդպիսի արմատական բարեփոխումների գործնական իրականացման համար անհրաժեշտ էր որոշակի անցումային ժամանակահատված: Այս առումով հատկանշական է, որ 1995 թ. Սահմանադրության անցումային դրույթների 11 կետերից 8-ում ամրագրված էին հենց դատական

իշխանության ոլորտում իրականացվող բարեփոխումների հետ կապված խնդիրներ: Այս հանգամանքը բացատրվում է ոչ այնքան դատական իշխանության բարդ կառուցվածքային համակարգով՝ գործադիր իշխանության համակարգը նույնպես չափազանց բարդ և ճյուղավորված է, որքան հենց նրանով, որ դատական իշխանության կայացման ոլորտում պետք է իրագործվեին էական փոփոխություններ:

Ըստ էության խնդիր էր դրված խորհրդային դատական համակարգը վերափոխել ժողովրդավարության պահանջներին համապատասխանող անկախ դատական իշխանության: Ինչպես արդարացիորեն նկատում էր Վ. Նազարյանը Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք դատաիրավական բարեփոխումների էությունը խտացված ձևով արտացոլված է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, որով մեր հանրապետությունը բնորոշվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության համարժեք դատական իշխանություն և իրավապահ մարմինների համակարգ: Այդ բարեփոխումների ծրագրի հիմքում պետք է ընկած լինի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված օրենքի գերակայության սկզբունքը: Այն պետք է ուղղված լինի ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված այն հիմնադրույթի իրականացմանը, համաձայն որի «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»:⁸⁶ Խնդրի բարդության մասին է վկայում այն հանգամանքը, որ Սահմանադրության 116-րդ հոդ. 9-րդ և 10-րդ կետերով դատական իշխանության համակարգի ձևավորման համար նախատեսված էր երեք և կես տարի ժամանակաշրջան:

Գործնականում այդ համակարգը վերջնականապես ձևավորվեց 1999 թ. հունվարին:

Քննարկվող ժամանակաշրջանում իրականացվող միջոցառումների համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել դատական իշխանության բարեփոխումների չորս հիմնական ուղղություն.

- դատական իշխանության նորմատիվ համակարգի ձևավորումը, որի վերջնական արդյունքը պետք է լիներ դատական իրավունքի՝ որպես ՀՀ իրավունքի ինքնուրույն ճյուղի ձևավորումը.

- կառուցվածքային (ինստիտուցիոնալ) բարեփոխումներ, որոնց հիմնական ուղղվածությունն էր՝ ձևավորել դատական իշխանության մարմինների ժողովրդավարության պահանջներին համապատասխանող նոր համակարգ,
- գործառնությային (ֆունկցիոնալ) բարեփոխումներ, որոնք պետք է ապահովեին դատական իշխանության մարմինների գործառնությունների օպտիմալացումը այն նպատակով, որպեսզի դատական իշխանության մարմինները հնարավորություն ունենան առանց իշխանության մյուս երկու թևերի /օրենսդիր և գործադիր մարմինների/ անհարկի միջամտություն իրականացնել արդարադատություն և միևնույն ժամանակ, դրանք ձեռքազատվեն իրենց էությամբ գործադիր իշխանության մարմինների համար յուրահատուկ գործառնությունների իրականացումից.

⁸⁶ Վ.Ն. Նազարյան, «Սահմանադրության 116-րդ հոդվածի իրականացումը», 1997, թիվ 22-29:

- դատական նոր կորպուսի կազմավորումը, այդ կորպուսի համալրումը նոր այնպիսի կադրերով, որոնք ի վիճակի են արդյունավետ գործել ժողովրդավարական դատական իշխանության կայացման պայմաններում:

Իհարկե այս բոլոր ուղղությունները սերտորեն փոխկապակցված են: Որոշակի գործառույթի արկայությունը ինքին համապատասխան կառույցի ձևավորման պարտադիր նախապայման է: Եթե չկա որոշակի հստակ գործառույթ որևէ կառույցի ձևավորում անիմաստ է: Միևնույն ժամանակ որոշակի կառույցի առկայությունը էականորեն կանխաշում է դրա բաղադրատարրերի միջև գործառույթների ներքին վերաբաշխումը: Նոր գործառույթների և նոր կառույցների ձևավորումը անհրաժեշտ է դարձնում նաև դատական կորպուսի անհատական կազմի փոփոխություններ, դատավորների կորպուսում այնպիսի անձանց ներգրավումը, որոնք ի գորու են իրականացնել նոր կառույցներում նոր գործառույթներ: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ նշված բոլոր բարեփոխումները հնարավոր էր իրականացնել միայն դատական իշխանության սահմանադրաիրավական հիմունքների ձևավորման, ընթացիկ օրենսդրության մեջ դատական իշխանության սահմանադրական սկզբունքների և նորմերի ճշգրիտ ու հստակ կոնկրետացման և ամրագրման միջոցով:

Սահմանադրության ուժի մեջ մտնելուց արդեն մի քանի ամիս հետո ընդունվեց դատական իշխանության ձևավորմանն ուղղված առաջին օրենսդրական ակտը՝ «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքը:⁸⁷ Այդ օրենքի առաջնահերթ ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր Սահմանադրության 116-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջով, որի համաձայն շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանների դատավորների լիազորությունները երկարաձգվում էին մինչև վեց ամիս ժամկետով, որի ընթացքում Հանրապետության Նախագահը արդարադատության խորհրդի առաջարկով երեք տարի ժամկետով պետք է նշանակեր շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանների դատավորներ:

Հաջորդը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն էր, որն ընդունվեց 1995 թվականի նոյեմբերի 20-ին:⁸⁸ Այդ օրենքի ընդունման հրատապությունը կայանում էր նոր Սահմանադրության հեղինակության ապահովման անհրաժեշտությամբ: Ակնհայտ է, որ ցանկացած նոր սահմանադրություն էականորեն վերափոխում է տվյալ պետության ամբողջ իրավունքի համակարգը: Ընդամին սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը ենթադրում է իրավունքի համակարգը սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու արդյունավետ մեխանիզմների առկայություն: Ժողովրդավարական պետություններում հենց սահմանադրական դատարաններն են հանդիսանում այդպիսի մեխանիզմի կարևորագույն կոմպոնենտը: Մակայն պետք է նաև նկատել, որ հենց այդ նույն Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական դատարանի մասին հիմնարար դրույթները էականորեն սահմանափակում էին նշված ուղղությամբ սահմանադրական դատարանի գործունեության արդյունավետությունը: Այստեղ բացասական դեր ուներ հատկապես սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի չափազանց սահմանափակ լինելը:

⁸⁷ ԾԾ ²Ա՛ 1995/7:

⁸⁸ ԾԾ ²Ա՛ 1995/9:

Սահմանադրական դատարանի և արդարադատության խորհրդի ստեղծումը զարգացած ժողովրդավարական երկրներում անկախ դատական իշխանության կարևորագույն երաշխիքներից է համարվում:⁸⁹ Սակայն Սահմանադրության համապատասխան դրույթների հակասական և ոչ հետևողական ձևակերպումների հետևանքով դատական բարեփոխումների առաջին փուլի արդյունում կազմավորված այդ կարևորագույն ինստիտուտները գործնականում ի վիճակի չէին արդյունավետորեն և լրիվ ծավալով իրականացնել համապատասխան առաքելությունները:

Դատական իշխանության ձևավորմանն ուղղված հետագա աշխատանքների իրականացումը ապահովելու և համակարգելու նպատակով հրատարակվեցին ՀՀ Նախագահի մի շարք հրամանագրեր: 1996 թվականի նոյեմբերի 8-ի «ՀՀ դատաիրավական բարեփոխումների մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով կառավարությանը հանձնարարվեց «3-ամսյա ժամկետում խորհրդակցելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի և դատախազության հետ, առաջարկություններ ներկայացնել ՀՀ Նախագահին Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների վերաբերյալ»:⁹⁰

ՀՀ Նախագահի 1997 թվականի փետրվարի 5-ի «ՀՀ Նախագահի 1996 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի բարեփոխման մասին» հրամանագրի կատարմանը ուղղված միջացառումների մասին» Հրամանագրով ՀՀ դատաիրավական համակարգի բարեփոխումների վերաբերյալ կառավարության առաջարկությունները քննարկելու, ծրագրի հետ կապված աշխատանքները կազմակերպելու, համակարգելու նպատակով ստեղծվեց պետական հանձնաժողով:⁹¹ ՀՀ Նախագահի 1997 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների ժամանակացույցը հաստատելու մասին» Հրամանագրով սահմանվեց, որ դատաիրավական բարեփոխումների համար անհրաժեշտ օրենսգրքերի ընդունումը պետք է ավարտվի 1998 թվականի օգոստոս ամսին:⁹² ՀՀ Նախագահի 1997 թվականի օգոստոսի 11-ի հրամանագրով հաստատվեց դատաիրավական բարեփոխումների պետական հանձնաժողովի կողմից 1997 թվականի օգոստոսի 2-ին ընդունված «Դատաիրավական բարեփոխումների ծրագիրը», որը և հիմք հանդիսացավ բարեփոխումները իրականացնելու համար:

Պետք է նկատել, որ հետագայում ընդունված օրենքների բովանդակությունը մի շարք հարցերում էականորեն տարբերվում էր ծրագրում ամրագրված մոտեցումներից: Այսպես, Ծրագրով նախատեսվում էր ստեղծել երկու տեսակ առաջին ատյանի դատարաններ՝ տեղական և մարզային /միջհամայնքային/ դատարաններ: Սակայն հետագայում ընդունված «Դատարանակազմության մասին» **ՀՀՊՏ 1998/15** ՀՀ օրենքը նախատեսեց միայն մարզային և միջհամայնքային առաջին ատյանի դատարանների ստեղծում: Ծրագրով նախատեսվում էր ստեղծել ընդհանուր իրավասության երեք վերաքննիչ դատարաններ՝ Երևանում, Գյումրիում և Արտաշատում, որոնցից յուրաքանչյուրը պետք է կազմված լիներ քաղաքացիական,

⁸⁹ ի»^աԵ Պ. ³¹ՇնՍ³Մ, ԿՅ³Ի աշխԱ., չԿ 43:

⁹⁰ ի»^աԵ ԾԾ ^աի 1996/22:

⁹¹ ի»^աԵ ԾԾ ^աի 1997/ 12:

⁹² ի»^աԵ ԾԾ ^աի 1997/ 10:

քրեական, տնտեսական և զինվորական դատական կոլեգիաներից և մեղադրական պալատից: Փոխարենը՝ «Դատարանակազմության մասին» օրենքով նախատեսվեց մասնագիտացված վերաքննիչ դատարանների ստեղծում: Ծրագրով նախատեսվում էր ձևավորել ՀՀ վճռաբեկ դատարանի պլենում, ինչը «Դատարանակազմության մասին» օրենքում իր ամրագրումը չստացավ:

Ձերժ մնալով դատաիրավական բարեփոխումների ծրագրի դրույթների և «Դատարանակազմության մասին» օրենքում ամրագրված դրույթների տարբերությունների մանրամասն վերլուծությունից, ինչը մեր քննարկման թեմայից դուրս է, նկատենք միայն, որ մեր կարծիքով «Դատարանակազմության մասին օրենքի» համապատասխան լուծումները շատ ավելի իրատեսական էին, համապատասխանում էին Հանրապետության պայմաններին:

Միննույն ժամանակ, կարծում ենք, որ և՛ ծրագրում և՛ «Դատարանակազմության մասին» օրենքում տեղ էին գտել որոշակի չհիմնավորված կամ ուղղակի սխալ մոտեցումներ: Այսպես ակնհայտ սխալ էր այն հանգամանքը, որ ծրագրով չնախատեսվեց և օրենքով չամրագրվեց առաջին ատյանի տնտեսական դատարանների ստեղծման պահանջը: Մինչդեռ այդ ժամանակաշրջանի համար այդպիսի դատարանի ստեղծման անհրաժեշտությունը ակնհայտ է թվում: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորների մասնագիտական պատրաստվածության մակարդակը ակնհայտորեն նրանց հնարավորություն չէր տալիս պատշաճ մակարդակով քննել և լուծել տնտեսական գործերը: Այս հանգամանքը շուտով ակնհայտ դարձավ և հետագայում թույլ տրված սխալը ուղղվեց՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի օրենքով ստեղծվեց առաջին ատյանի տնտեսական դատարան:⁹³ Ինչպես արդեն նշել էինք, ՀՀ Նախագահի 1997 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների ժամանակացույցը հաստատելու մասին» Հրամանագրով սահմանված էր, որ համապատասխան դատաիրավական բարեփոխումների համար անհրաժեշտ օրենսգրքերի ընդունումը պետք է ավարտվեր 1998 թվականի օգոստոս ամսին:⁹⁴

Ժամանակացույցին համապատասխան այդ օրենսգրքերը և օրենքները հիմնականում ընդունվեցին 1998 թվականի ամռանը:

«Դատավորների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվեց 1998 թ. հունիսի 17-ին, կարգավորեց դատավորների անկախության, նյութական և սոցիալական ապահովության, անվտանգության և գործունեության այլ երաշխիքների հետ կապված հարաբերությունները, սահմանեց դատավորների լիազորությունների դադարեցման և կարգապահական պատասխանատվության հիմքերը, դատավորներին շնորհվող որակավորման դասերը և դրանց հետ կապված արտոնությունները:⁹⁵

1998 թվականի հունիսի 17-ին ընդունվեց ՀՀ «Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը»,⁹⁶ իսկ նույն թվականի հուլիսի 1-ին ՀՀ «Քրեական դատավարության օրենսգիրքը»:⁹⁷ Օրենսգրքերով սահմանվեցի քաղաքացիական և քրեական գործերով վարույթի կարգը, նեոարյալ առաջին ատյանի դատարանում,

⁹³ ՀՀՊՏ 2001/32:

⁹⁴ ի»^աԵ ԾԾձի, 1997/10:

⁹⁵ ի»^աԵ ԾԾձի 1998/ 15:

⁹⁶ ԾԾձի 1998/20:

⁹⁷ ՀՀՊՏ 1998/22:

վերաքննիչ և վճռաբեկ վարույթների առանձնահատկությունները: Այդ օրենսգրքերով ամրագրվեցին արդարադատության իրականացման նոր, ժողովրդավարական սկզբունքներն ու ընթացակարգերը:

Դատական իշխանության ձևավորման գործընթացում առանցքային նշանակություն ունեւ 1998 օգոստոսի 18-ին ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքը,⁹⁸ որն ուժի մեջ մտավ 1999 թվականի հուլիսի 12-ին:

Օրենքով ամրագրվեց դատական իշխանության մարմինների համակարգը՝ 17 առաջին ատյանի դատարաններ /10 մարզային և Երևանում՝ 7 միջհամայնքային դատաններ/, 3 վերաքննիչ դատարան /քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, տնտեսական գործերով վերաքննիչ դատարան, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան/ և ՀՀ վճռաբեկ դատարան կազմված՝ վճռաբեկ դատարանի նախագահից, քաղաքացիական և տնտեսական գործերով պալատից, քրեական և զինվորական գործերով պալատից:

Սակայն տվյալ օրենքի նշանակությունը դատական իշխանության կայացման գործում շատ ավելի կարևորվում է այն հանգամանքով, որ դրանով գործադիր իշխանության մարմնի՝ արդարադատության նախարարության կողմից նախկինում իրականացվող լիազորություններ վերապահվեցին համապատասխան դատարանների նախագահներին: Այսպես, օրենքի 16-րդ, 19-րդ և 21-րդ հոդվածներով առաջին ատյանի դատարանների նախագահներին, վերաքննիչ դատարանների նախագահներին և ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված էին հետևյալ լիազորությունները՝ հետևել դատավորների աշխատանքային կարգապահությանը, օրենքով սահմանված կարգով դատավորներին տրամադրել արձակուրդ, տնօրինել դատարանի ֆինանսական միջոցները, ապահովել դատարանի բնականոն գործունեության կազմակերպումը: Վճռաբեկ դատարանի նախագահին բացի դրանից վերապահվեցին հատուկ արտոնագիր ունեցող փաստաբաններին գրանցման լիազորությունը, ինչպես նաև փաստաբանների միությունները գրանցման լիազորությունը, որն նախկինում նույնպես իրականացնում էր արդարադատության նախարարությունը:

Կազմակերպչական մի շարք լիազորություններ վերապահվեցին դատարանների նախագահների խորհուրդին: Օրենքի 77-րդ հոդվածի համաձայն այդ խորհուրդը.

-քննարկում է վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների բնականոն գործունեության առնչվող հարցեր,

-մշակում և հաստատում է առաջին ատյանի դատարաններում գործերի բաշխման, վերաքննիչ դատարաններում դատական կազմերի և դրանցում նախագահող դատավորների նշանակման, դատավորների բացարկի, ինքնաբացարկի արձակուրդի կամ հիվանդության դեպքում դատարանի նախագահների և դատավորների փոխարինման կարգերը,

-մշակում և հաստատում է «Դատավորների վարքագծի կանոնակարգը»,

-կազմում և սահմանված կարգով՝ ըստ յուրաքանչյուր դատարանի, կառավարություն է ներկայացնում դատարանների բյուջետային ֆինանսավորման հայտերը:

Օրենքի 29-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանվեց, որ ՀՀ յուրաքանչյուր դատարան ֆինանսավորվում է պետական բյուջեից առանձին տողով: Դրանով իսկ

⁹⁸ ԾՃձ 1998/15:

վերացվեց արդարադատության նախարարության կողմից դատարանների կազմակերպչական ղեկավարության և ֆինանսական և նյութատեխնիկական ապահովման գործառույթների իրականացման անհրաժեշտությունը: Ընդամին դատական իշխանության կազմակերպչական և ապահովող գործառույթների /ֆինանսական, նյութատեխնիկական, տեղեկատվական-վերլուծական և այլն/ իրագործումը դատական իշխանության մարմինների կողմից և դատական իշխանության բարձրագույն մարմինների ղեկավարությամբ՝ անկախ այլ իշխանությունների կամայական որոշումներից, համարվում է դատական համակարգը՝ դատական իշխանության վերափոխման պարտադիր պայմաններից մեկը: «Կարելի է ինչքան ուզես հռչակել դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքներին, սակայն եթե դատական համակարգի գործառնության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը կախված լինի գործադիր իշխանության այս կամ այն մարմնի կամայական որոշումներից, ապա դատական համակարգի ինքնուրույնությունը կլինի կեղծ»:⁹⁹

Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն դատարանների նախագահների խորհրդը.

- իրավասու պետական մարմիններին առաջարկություններ է ներկայացնում օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ,

- օրենքով նախատեսված դեպքերում դիմում է Հանրապետության նախագահին օրենքների, Ազգային Ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությանը վերաբերյալ սահմանադրական դատարան դիմելու միջնորդությամբ:

Նման լիազորությունների ամրագրումը ինքնին վկայում է, որ օրենսդիրը դատական իշխանությունը ընկալում է որպես պետական իշխանության ինքնուրույն թև և նրան վերապահվում են այնպիսի լիազորություններ, որոնք նպատակաուղղված են ապահովելու դատական իշխանության ներգործությունը օրենսդիր գործունեության և դրանով իսկ՝ դատական իշխանության նորմատիվ հիմքի ձևավորման վրա: Ուստի այս լիազորությունները կարելի է գնահատել որպես դատական իշխանության կողմից օրենսդիր իշխանության նկատմամբ հակակշիռների համակարգի տարր:

Դատական իշխանության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման գործում էական նշանակություն ունի ոչ միայն ինքնուրույն գործելու համար անհրաժեշտ լիազորությունների օրենսդրական ամրագրումը, այլև դատարանների բեռնաթափումը իրենց համար ոչ յուրահատուկ ծանրաբեռնվածությունից: Ուստի հատկանշական է, որ օրենքի 12-րդ հոդվածով դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների կազմակերպման և ապահովման գործառույթը վերապահվեց արդարադատության նախարարությանը: Պետք է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ դատարանների «ձեռքազատումը» իրենց համար ոչ հատուկ գործառույթների իրականացումից արդարացիորեն դիտվում է, որպես դատական իշխանության արդյունավետության և անկախության ապահովման միջոց: Այսպես, վերլուծելով Ռուսաստանի Դաշնության արդարադատության համակարգի արդյունավետության և հասանելիության

⁹⁹Նóääáíàÿ äëàñðü, էջ 17:

հիմնախնդիրները, Ա. Ա. Վլասովը նկատում է, որ դատավորները դեռևս պատասխանատու են մի շարք պահանջների կատարման համար, որոնք պետք է կատարեն ոչ թե իրենք, այլ գործադիր մարմինները: Այս հանգամանքը ոչ միայն դատավորներին շեղում է արդարադատության իրականացմանը ուղղված իրենց անմիջական պարտականությունների կատարումից, այլև հաճախ գործադիր մարմիններին հնարավորություն է ընձեռնում ուղղակի կամ անուղղակի կերպով միջամտել դատական որոշումների կայացման գործընթացին:¹⁰⁰

ՀՀ-ում դատական իշխանության մարմինների նոր համակարգի ձևավորումը սկսվեց ՀՀ վճռաբեկ դատարանի կազմավորումից: «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում վճռաբեկ դատարանի գործունեության մասին» 1998 թ. հուլիսի 1-ի օրենքով սահմանվեցին դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում /օրենքի ուժի մեջ մտնելուց մինչև 1999թ. հունվարի 12-ը/ վճռաբեկ դատարանի կազմավորման և գործունեության կարգն ու դրա հետ կապված գործող քաղաքացիական ու քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված վճռաբեկ ու հսկողական վարույթների իրականացման առանձնահատկությունները: Հատկանշական է, որ քննարկվող օրենքով ՀՀ քաղաքացիական ու քրեական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների համաձայն պարզապես վճռաբեկ դատարանին վերապահվեցին Գերագույն դատարանի նախկին լիազորությունները: Այսինքն նոր ձևավորված դատական ատյանը անցումային ժամանակաշրջանում իրականացնում էր նախկին Գերագույն դատարանի դատական գործառույթները, շարունակելով գործեր քննել և որպես՝ առաջին ատյան, և որպես՝ վճռաբեկ ատյան, և որպես՝ հսկողական ատյան: Օրենքի 5-րդ հոդ. համաձայն 1998 թ. հուլիսի 10-ից վճռաբեկ դատարանը համարվում էր կազմավորված և նույն օրվանից դադարում են ՀՀ գերագույն դատարանի անդամների լիազորությունները:

ՀՀ Նախագահի կողմից 1998 թվականի հուլիսի 18-ին հրատարակվեց հրամանագիր «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահներ և դատավորներ նշանակելու մասին»:¹⁰¹ Վերը նշված օրենքների և հրամանագրերի ընդունումից հետո արդեն լրիվ ձևավորված էր դատական իշխանության ոլորտի հարաբերությունների կարգավորող օրենսդրական համակարգը:

1991 թվականի հունվարի 5-ին հրապարակվեց ՀՀ Նախագահի հրամանագիրը «Վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների նախագահներ և դատավորներ նշանակելու մասին»:¹⁰² Հրամանագիրը ուժի մեջ մտավ 1999 թվականի յունվարի 12-ին: Նույն օրը ուժի մեջ մտան «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքը և Քրեական դատավարության օրենսգրքը և ուժը կորցրեց «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում վճռաբեկ դատարանի գործունեության մասին» օրենքը: Այդպիսով 1999 թվականի հունվարի 13-ից լրիվ ծավալով սկսեց գործել ՀՀ նոր դատական իշխանության համակարգը: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքը ուժի մեջ էր մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

¹⁰⁰ Տես՝ Ա.Ա. Անանյան. *Իմպիւնտը յոթնամյա ղեկավարումը և անհանգստացնող իրավիճակը*. ԱԵԻ, 2004, թիվ 2, էջ 16:

¹⁰¹ ՀՀ ՊՏ 1998/15:

¹⁰² ԾՃՁ 1999/1:

ՀՀ 1995 թ. Սահմանադրության դերը նոր ժողովրդավարական դատական իշխանության ձևավորման գործում հայրենական իրավաբանական գրականության մեջ արժանացել է հակասական նույնիսկ իրարամերժ գնահատականի: Այսպես Ա. Ղամբարյանը գտնում է. «...բարեփոխումների առջև դրված խնդիրները չիրականացան: Իհարկե իրավական իդեալիզմով /ռոմանտիզմով/ չտառապող յուրաքանչյուր ոք կհասկանա, որ բարեփոխումների արդյունքները շոշափելի չեն կարող լինել դրանցից անմիջապես հետո, դրա համար անհրաժեշտ է ժամանակ: Այստեղ խնդիրն այլ է. դատական համակարգում բարեփոխումներից հետո ոչ միայն չնկատվեց նախկին համակարգի արատավոր երևույթների նվազեցման միտում, այլև դրանք ստացան ծայրահեղ դրսևորումներ: Դատարանի անկախությունը շփոթվեց դատարանի բացարձակ ազատության հետ, պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին գերակա դարձավ դատավորի՝ պատասխանատվությունից խուսափելու վստահությունը և համոզմունքը, ինչն ապացուցվում է պրակտիկայում առկա մի շարք օրինակներով:¹⁰³ Նման իրավիճակը Ա. Ղամբարյանը բացատրում է հոգեբանական գործոնի ազդեցությամբ, մասնավորապես այն հանգամանքով, որ դեռևս պատրաստ չէին դատավորների այնպիսի կադրեր, որոնք կարող էին նոր պայմաններում իրականացնել արդարադատություն:¹⁰⁴

Նախ նշենք, որ մենք սկզբունքորեն չենք կարող համաձայնվել 1995 թվականից հետո ձևավորված դատական համակարգի գործունեության այդպիսի նեգատիվիստական գնահատականի հետ: Կարծում ենք, որ Սահմանադրության ընդունումից հետո դատական համակարգը չհայտնվեց ավելի վատ վիճակում, քան կար խորհրդային ժամանակաշրջանում կամ անկախության առաջին տարիներին: Բացի դրանից, ըստ էության հեղինակը հանգում է այն եզրակացության, որ դատական բարեփոխումներ կարելի է անցկացնել միայն այն բանից հետո, երբ պատրաստ են նոր պահանջներին համապատասխանող դատավորների կադրեր: Սակայն բաց է մնում այն հարցը՝ թե որտեղից պետք է հայտնվեին այդ կադրերը մինչև դատական բարեփոխումների իրականացումը: Կարծում ենք, որ այս հարցում ավելի օբյեկտիվ է Գ. Բադիրյանի դիրքորոշումը: Նա համարում է, որ ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ «համապարփակ լուծված են անկախ դատական իշխանության ստեղծման և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերը: Նրանում նախատեսված են մարդկության նվաճումներ հանդիսացող համարյա բոլոր առաջադիմական սկզբունքները, որոնք ներառված են զարգացած և ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրների օրենսդրություններում...»:¹⁰⁵ Սակայն պետք է նաև նկատել, որ Սահմանադրության համապատասխան դրույթները իդեալական չէին: 1995 թ. Սահմանադրության մեջ տեղ գտան նաև դատական իշխանության համակարգին վերաբերող մի շարք ոչ հետևողական, հակասական և ոչ արդյունավետ դրույթներ: Ուստի կարծում ենք այս հարցում առավել հավասարակշռված է Ա. Հարությունյանը դիրքորոշումը: Նա նշում է. «Սահմանադրությամբ հաստատագրվեց նոր, ժողովրդավարական զարգացած երկրներին բնորոշ դատական համակարգ,

¹⁰³ Ղամբարյան Ա. Արդարադատության սահմանադրական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում. Երևան, ՌԳՀ հրատարակչություն, 2006, էջ 18:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 18-19:

¹⁰⁵ Բադիրյան Գ.Ս. Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը. Երևան, Անտարես, 2002, էջեր 42-43:

սահմանվեցին դատական համակարգի կազմավորման ու գործունեության՝ իրավական պետությանը համարժեք և միջազգային չափանիշներին համապատասխանող առաջադիմական սկզբունքներ... Պատմության դասերից հայտնի է, սակայն, որ կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ ստեղծել դատական անթերի համակարգ և կատարյալ օրենսդրություն: Դատաիրավական բարեփոխումները, հատկապես, եթե նախատեսվում են արմատական հայեցակարգային վերափոխումներ, կարող են լիարժեքորեն իրականացվել միայն տևական ժամանակաշրջանում»:¹⁰⁶

ԳԼՈՒԽ 3. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

3.1 Դատական իշխանության համակարգի բարեփոխումների երկրորդ փուլի հիմնական ուղղությունները

¹⁰⁶Տե՛ս Գ. Բաղիրյան. Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը. Ներածություն /հեղ. Ա. Հարությունյան/, էջ 6:

2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեյով իրականացված սահմանադրական փոփոխությունները հնարավորություններ ստեղծեցին անցնել դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլին, որի նպատակն է վերջնականորեն ձևավորել անկախ և արդյունավետ գործող դատական իշխանության համակարգ: Այդ բարեփոխումների էության գիտական վերլուծության և գնահատման համար, բնականաբար նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել դրանց հիմնական ուղղությունները և լուծման ենթակա կոնկրետ խնդիրները:

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ բարեփոխումների երկրորդ փուլը պետք է ուղղված լինի արդեն իսկ ձևավորված դատական իշխանության համակարգի հիմնական կառուցվածքային և գործառնական թերությունների վերացմանը, դատական իշխանության և իշխանության մյուս երկու թևերի միջև զսպումների և հակակշիռների առավել օպտիմալ համակարգի ձևավորմանը: Սակայն այս շատ ընդհանուր նպատակի ձևակերպումը չի կարող բավարար տեսական հնարավորություններ ստեղծել դատական համակարգի արդի հիմնախնդիրների գիտական վերլուծության համար:

Կարելի է առանձնացնել սահմանադրական բարեփոխումների երկու հիմնական ուղղություն: Առաջինը՝ դա հենց դատական իշխանության ընդհանուր համակարգի, դրա հիմնական բաղադրատարրերի օպտիմալացումն է, ինչպես նաև դատական իշխանության հիմնական կոմպոնենտների միջև լիազորությունների առավել նպատակահարմար վերաբաշխման միջոցով ամբողջ համակարգի և դրա էլեմենտների գործառնության արդյունավետության բարձրացումը: Երկրորդ ուղղությունը՝ դա դատական իշխանության համակարգի և իշխանության մյուս երկու թևերի միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմների այնպիսի հստակեցումն է, որն կարող է նպաստել դատական իշխանության՝ որպես պետական իշխանության ինքնուրույն թևի իրական անկախության մակարդակի որակական բարձրացմանը:

Ատենախոսության տվյալ բաժնում քննարկվում են սահմանադրական բարեփոխումների առաջին ուղղության հիմնախնդիրները:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում առաջին հերթին էականորեն ընդլայնվեցին դատական իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները: Սահմանադրության մեջ ներառվեցին մի շարք նոր և անհրաժեշտ իրավական դրույթներ, որոնք նորույթ էին ընդհանրապես ՀՀ իրավունքի համակարգի համար: Դրանք վերաբերում են մասնավորապես դատական իշխանության գործառնության բաղադրատարրերին: Այս առումով դժվար է թերագնահատել բարեփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի նշանակությունը: Քննարկվող հոդվածի առաջին մասով սահմանվում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ երկրորդը նախատեսվում է. «Պետությունը սաամանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով՝ որպես ամիջականորեն գործող իրավունք»: Մրանք այն կարևորագույն արժեքներն ու գլխավոր ողենիշներն են, որոնցով պետք է ղեկավարվի պետական իշխանության ամբողջ համակարգը և հատկապես դատական իշխանության համակարգը՝ արդարադատություն իրականացնելիս: Արդարադատության իրականացման համար կարևորագույն նշանակություն ունեն նաև. Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասում ազատությունից զրկման

սպառիչ ցանկի ամրագրումը, նույն հոդվածի 5-րդ մասի դրույթը, որի համաձայն մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու իր քաղաքացիաիրավական պարտավորությունները, ինչպես նաև 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ մասի դրույթները:

Վարչական արդարադատության համար կարևոր նշանակություն ունի սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխությունը, որի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ոչ թե օրենսդրությամբ /ինչպես դա նախատեսված էր մինչև սահմանադրական բարեփոխումները/, այլ Սահմանադրությամբ և օրենքներով:

Մեր կողմից որդեգրված համակարգային մոտեցման տեսանկյունից ցանկացած համակարգի, այդ թվում նաև դատական իշխանության համակարգի, կատարելագործման հիմնական ուղղությունների և հետապնդվող կոնկրետ նպատակների բացահայտման և գիտական վերլուծության համար առաջին հերթին անհրաժեշտ է գնահատել տվյալ համակարգի արդի վիճակը և դրա գործառնության արկա արդյունքները և համամատել ցանկալի վիճակի և ցանկալի արդյունքների հետ, այդպիսի համեմատության հիման վրա բացահայտել դրանց միջև եղած խզումները և արդյունքում ձևակերպել բարեփոխումների հետապնդվող նպատակները: Ընդամին ակնհայտ է, որ ընդհանուր համակարգի կատարելագործումը ինքնին ենթադրում է առաջին հերթին հենց այդ համակարգի հիմնական բաղադրատարրերի կատարելագործման անհրաժեշտություն:

Ուստի համակարգային մոտեցումը ենթադրում է, որ բարդ համակարգերի ուսումնասիրության համար անհրաժեշտ է բացահայտել նաև այդ համակարգի հիմնական կոմպոնենտների արկա վիճակը և ցանկալի վիճակի հետ համեմատության հենքի վրա տեսականորեն կանխատեսել համակարգի հիմնական բաղադրատարրերի կատարելագործման հիմնական ուղղություններն ու նպատակները:

Մենք արդեն հիմնավորել ենք, որ դատական իշխանության համակարգը բաղկացած է երեք հիմնական կոմպոնենտներից. դատական իրավունք՝ որպես դատական իշխանության նորմատիվ հիմք, դատական իշխանության գործառնություն, դատական իշխանության ինստիտուցիոնալ (դատարանների) համակարգ:

Նախ վերլուծենք դատական իշխանության նորմատիվ հիմքը՝ դատական իրավունքի, որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղի, ձևավորման հիմնախնդիրները:

Իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է գտել այն դրույթը, համաձայն որի յուրաքանչյուր պետության իրավունքի համակարգը առանձին ճյուղերի և ինստիտուտների ստորաբաժանման օբյեկտիվ չափանիշ է հանդիսանում հասարակական հարաբերությունների տարբեր համալիրների բազմազանությունը, որն կոչվում է իրավական կարգավորման առարկա:

Բացի իրավական կարգավորման առարկայից իրավունքի յուրաքանչյուր ճյուղը մյուսներից սահմանազատվում է նաև իրավական կարգավորման մեթոդի առանձնահատկություններով: Այսպես քաղաքացիական, ընտանեական, հիմնականում նաև աշխատանքային իրավունքի ճյուղերի համար յուրահատուկ է դիսպոզիտիվ մեթոդը, որը համապատասխան իրավահարաբերությունների կողմերին լայն հնարավորություններ է ընձեռում սեփական կամքով վարքագծի տարբերակի ընտրության համար: Մինչդեռ պետության և նրա մարմինների

գործունեությունը կարգավորող իրավունքի ճյուղերի համար յուրահատուկ է հիմնականում իրավական կարգավորման իմպերատիվ մեթոդի օգտագործումը՝ այնպիսի իրավական նորմերի գերակշռությունը, որոնք պարտադիր են համապատասխան իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից կատարման համար: Ընդամին իրավական կարգավորման առարկան համարվում է այդպիսի ստորաբաժանման հիմնական չափանիշ, իսկ մեթոդը՝ երկրորդական:¹⁰⁷ Այդպիսի մոտեցումը լայն տարածում է գտել նաև ճյուղային իրավաբանական գիտությունների ոլորտներում: Այսպես, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքի հեղինակները սահմանադրական իրավունքի ճյուղի հասկացությունը բնորոշում են այդ ճյուղի առարկայի և մեթոդի առանձնահատկությունները շեշտադրելու միջոցով:¹⁰⁸

Չնայած այս մոտեցումը ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ ճյուղային իրավաբանական գիտությունների ոլորտներում համընդհանուր ճանաչում է գտել, այնուամենայնիվ կարծում ենք, որ իրավունքի համակարգը տարբեր ճյուղերի և ինստիտուտների ստորաբաժանման համար միակ չափանիշ պետք է ճանաչվի իրավական կարգավորման առարկան: Ինչ վերաբերում է իրավական կարգավորման մեթոդին, ապա այդ չափանիշը, մեր համոզմամբ, հանդիսանում է ոչ թե իրավունքի համակարգը ճյուղերի և ինստիտուտների, այլ իրավունքի ճյուղերը հանրային և մասնավոր իրավունքի ճյուղերի ստորաբաժանման համար: Դրա ապացույցն է այն հանգամանքը, որ գրականության մեջ առանձնացվում են իրավական կարգավորման երկու հիմնական մեթոդներ՝ իմպերատիվ մեթոդը, որն յուրահատուկ է հանրային իրավունքի ճյուղերի համար և դիսպոզիտիվ մեթոդը, որն հիմնականում կիրառվում է մասնավոր իրավունքի ճյուղերում:

Այս ընդհանուր տեսական դրույթները հիմք են տալիս Հայաստանի Հանրապետության ժամանակակից դատական իրավունքի հետ կապված հիմնախնդիրների գիտական վերլուծության համար, մասնավորապես գնահատելու համար՝ կարելի է արդյոք պնդել, որ մեզանում դատական իրավունքը արդեն ձևավորվել է որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ, թե այդ ճյուղը դեռևս ձևավորման փուլում է գտնվում:

Պետք է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ լայն տարածում է գտել այն անտարակույս հիմնավորված թեզը, որի համաձայն իրավական նորմերի այս կամ այն համալիրը, որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ ձևավորված լինելու ամենակարևոր հատկանիշն է հանդիսանում հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտների կարգավորումը օրինակարգված ակտի՝ օրենսգրքերի, օրենսդրության հիմունքների, կանոնակարգերի, կանոնադրությունների միջոցով: Հայաստանի Հանրապետության իրավունքի բոլոր հիմնական ճյուղերում առկա են այդպիսի ակտեր, որպես կանոն՝ օրենսգրքեր: Ընդամին օրենսգրքերը կարող են հանդիսանալ հասարակական հարաբերությունների համապատասխան համալիրները կարգավորող միակ

¹⁰⁷ Տես՝ օրինակ, *Γένεσις τῆς ἀρχαίας ἰουδαίας ἐκ τῆς ἀρχαίας ἐβραϊκής ἀποστολικῆς ἐκκλησίας*. Ἰ., *Ἰστορία-Εἰσὸς*, 1999, էջ 328-329; *Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն*. Երևան, Նաիրի, 2001, էջ 197-202; *Γένεσις τῆς ἀρχαίας ἰουδαίας ἐκ τῆς ἀρχαίας ἐβραϊκής ἀποστολικῆς ἐκκλησίας*. Ἰ., *Ἰστορία*, 2002, հոմ. 566-567:

¹⁰⁸ Տես՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, Երևանի պետ. համալս.

նորմատիվ-իրավական ակտը (օրինակ՝ քրեական օրենսգիրքը) կամ պարունակել այդ համալիրները կարգավորող իրավական նորմերի ամենակարևոր և իրենց ծավալով հիմնական մասը: Բոլոր դեպքերում հենց օրենսգրքերում են ընդգրկվում համապատասխան ոլորտների իրավական կարգավորման հիմք հանդիսացող նորմ-սկզբունքներն ու նորմ-բնորոշումները: Սակայն օրենսգրքերում ընդհանրացվում են նաև անմիջական կարգավորման նորմեր, որոնք սահմանում են հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծի կոնկրետ կանոններ:¹⁰⁹

Իհարկե իրավունքի տարբեր ճյուղերի կարգավորման առարկայի տարանջատումը կապված է որոշակի տեսական դժվարությունների հետ՝ թեկուզ այն պարզ պատճառով, որ հասարակական հարաբերությունների համապատասխան համալիրների առանձին մասեր հաճախ համընկնում են միմիանց հետ: Այսպես գույքային հարաբերությունների առանձին տարատեսակներ հանդիսանում են ոչ միայն քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկա, այլ նաև հողային, աշխատանքային իրավունքի: Որոշ դեպքերում համընկնում են նաև նյութական իրավունքի կարգավորման և իրավունքի դատավարական ճյուղերի կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների առանձին տարատեսակներ (օրինակ՝ դատական իրավունքի և քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության իրավունքի): Այդ իսկ պատճառով համապատասխան օրինակարգված ակտի (առաջին հերթին՝ օրենսգրքի) առկայությունն է հանապատասխան ճյուղի կայացման ամենաեական հատկանիշը:

Պետք է նկատել, որ Դատական օրենսգիրք ստեղծելու հնարավորության կամ նպատակահարմարության խնդիրը հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ բավականին լուրջ քննարկման առարկա է դարձել: Այս հարցով գոյություն ունեն իրարամերժ կարծիքներ: Հեղինակների մի մասը ժխտում է դատական օրենսգրքի ստեղծման հնարավորությունը: Այսպես, Ի.Լ.Պետրուխինը նշում է, որ դատական իրավունքը հանդիսանալով իրավունքի ճյուղերի մերձեցման միջոց, այնուամենայնիվ չի կարող օրինակարգվել առանձին իրավական ակտում:¹¹⁰ Ա. Գուսկովը և Ն. Մուրատովան նույնպես ժխտում են դատական օրենսգրքի անհրաժեշտությունը: Միննույն ժամանակ Ջ. Խ. Լուսիգենովան հիմնավորում է դատական իշխանության մասին օրենսդրության օրինակարգման և ապագայում դատական օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը:¹¹¹ Դատական օրենսգրքի ստեղծման գաղափարը այս կամ այն կերպ պաշտպանում է նաև Մ.Բ. Կլեանդրովը:¹¹²

Մենք մանրամասն չենք շարադրում և քննարկում վերը նշված հեղինակների իրարամերժ կարծիքները հետևյալ պարզ պատճառաբանությամբ: Տեսական դրույթների ճշմարտացիության գլխավոր չափորոշիչը հասարակական պրակտիկան է: Հայաստանի Հանրապետությունում ընդունված է և արդեն գործում է բավականին հաջողված Դատական օրենսգիրք, որում օրինակարգված է դատարանների և դատավորների մասին օրենսդրությունը և որը հանդիսանում է դատական բարեփոխումների երկրորդ փուլի գլխավոր նորմատիվ-իրավական հիմքը:

¹⁰⁹ *Stu' ĩđiaėaiũ iaũae oaiđeė iđaãã e aińoaãđńoaã, tğ 362:*

¹¹⁰ *Stu' Óaiėiaíiúe iđiđaññ. ĩ., 2001, չգ 35:*

¹¹¹ *Stu' Eońeãaiíiãã Ç. Ñ. Óaiđãđeėi-iđãaiiãũ ińiíiãũ ñoaãaiíe aeããđe a Đińńeėńeíe Óãããđãđeė. Aãđiđãđ. aeññ. ... eaiã. ðđeã. iaóe. Đińđiã ia Aiío, 2000, tğ 18:*

¹¹² *Stu' Eeãaiãđiã ĩ.Ĕ. ĩ oãeãńiãđãçiíńđe eiaėeđeėãđeė çãeíiíããoãeũńoaã ĩ ñoaãđ e ñoãũyđ. Đińńeėńeãy ðńđeđeý, 2006, ìիվ 1, tğ 12:*

Սակայն հանուն արդարության պետք է նշենք, որ այն հեղինակները, որոնք ժխտում են դատական օրենսգրքի ստեղծման հնարավորությունը կամ նպատակահարմարությունը, ելնում են այն կանխավարկածից, որ դատական օրենսգրքում պետք է ներառվի ոչ միայն դատարանների և դատավորների մասին օրենսդրությունը, այլ նաև քաղաքացիական դատավարական և քրեական դատավարական օրենսդրությունը: Մինչդեռ ի տարբերություն Ուկրաինայի, Բելառուսի և այլ ԱՊՀ երկրների Հայաստանի Հանրապետության օրենսդիրը օրենսգրքում ներառեց միայն դատավորների և դատարանների մասին օրենսդրությունը, օրենսգրքի կարգավորման առարկայի շրջանակներից հիմնականում դուրս թողելով դատավարական նորմերը: Այս մոտեցումը մենք գնահատում ենք ավելի նպատակահարմար, քանի որ խոսքը գնում է նյութական իրավունքի ճյուղի և պրոցեսուալ իրավունքի ճյուղերի մասին:

Օրենսգրքի 2-դ հոդվածով տրվում է օրենսգրքի կարգավորման առարկայի հետևյալ սահմանումը. «օրենսգիրքը կարգավորում է դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները այնքանով, որքանով դրանք չեն վերաբերում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին»:¹¹³ Կարծում ենք, որ այս ընդհանուր բնորոշումը հետագայում անհրաժեշտ կլինի որոշակիորեն հստակեցնել, քանի որ ներկա վիճակում այն որոշ չափով նույնացնում է դատական իրավունքի՝ որպես իրավունքի նյութական ճյուղի, կարգավորման առարկան իրավունքի համապատասխան դատավարական ճյուղերի (քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության, ինչպես նաև՝ վարչական դատավարության) կարգավորման առարկայի հետ: Թերևս ավելի ճիշտ կլինի սահմանել, որ օրենսգիրքը ոչ թե կարգավորում է դատական իշխանության գործունեության հետ կապված հարաբերությունները, այլ սահմանում է դատական իշխանության գործառնությունները, քանի որ դատական իշխանության գործունեության ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունները կարգավորվում են ոչ թե դատական իրավունքի, այլ դատավարական իրավունքի ճյուղերի նորմերով:

Մասնագիտական գրականության մեջ արդեն ճշմարտացիորեն նշվել է այն հանգամանքը, որ օրենսդիրը ոչ միշտ է ՀՀ դատական օրենսգրքում բացառել պրոցեսուալ (դատավարական) բնույթի նորմերը:¹¹⁴ Սակայն օրենսգրքում առանձին դատավարական բնույթի նորմերի առկայությունը չի բացառում մեր կողմից առաջարկվող ձևակերպումը, քանի որ ինչպես արդեն նշել էինք իրավունքի տեսության մեջ այդպիսի մասնակի համընկումների հնարավորությունը չի մերժվում և չի բացառում իրավունքի համապատասխան ինքնուրույն ճյուղերի գոյությունը:

Իրավունքի տեսության մեջ լայն տարածում է գտել նաև այն դրույթը, համաձայն որի իրավունքի յուրաքանչյուր ճյուղի կարգավորման առարկան որոշվում է համապատասխան օրինակարգված ակտով: Հենց այդ հիմքի վրա են զատվում իրավունքի առանձին ճյուղերի նորմերը և սահմանափակվում են հասարակական հարաբերությունների այս կամ այն տեսակների նկատմամբ իրավունքի տվյալ ճյուղի կիրառման շրջանակները:¹¹⁵

¹¹³ ՀՀ ՊՏ 2007/20:

¹¹⁴ Տես՝ Ա. Դավթյան. Նոստալգիկ էմոցիոնալ ժամանակահատվածները Արևելքի Եվրոպայի օրենսդրության համեմատումում: Երևան, 2007, էջ 14-15:

¹¹⁵ Տես՝ Դավթյան Իսահանյան, էջ 342:

Ելնելով այդ ճշմարտացի դրույթից, փորձենք Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի կառուցվածքի վերլուծության հիման վրա որոշել հասարակական հարաբերությունների այն համալիրը, որն կարգավորվում է դատական իրավունքի նորմերով՝ այսինքն իրավունքի ուսումնասիրվող ճյուղի կարգավորման առարկան: Օրենսգրքի համապատասխան մասերի, բաժինների և գլուխների կառուցվածքը ինքնին հնարավորություն է ընձեռնում հստակ սահմանագատելու դատական իրավունքի կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների ոլորտը: Նման վերլուծությունը մինևույն ժամանակ հնարավորություններ է տալիս ի հայտ բերել օրենսգրքի առանձին կառուցվածքային անճշտությունները և մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, ուղղված այդ կարևորագույն նորմատիվ-իրավական ակտի հետագա կատարելագործմանը:

Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրքը ստեղծվեց օրենսգրքերի համար դասական ճանապարհով: Այն հիմնականում ձևավորվեց մինչ այդ գործող երեք օրենքների՝ «Դատավորների կարգավիճակի մասին»,¹¹⁶ «Դատարանակազմության մասին»¹¹⁷ և «Արդարադատության խորհրդի մասին»¹¹⁸ Հայաստանի Հանրապետության օրենքների օրինակարգման եղանակով: Այս առումով հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը ուժի մեջ մտնելու մասին»¹¹⁹ օրենքի 2-րդ հոդվածով օրենսգիրքը ուժի մեջ մտնելու պահից այդ երեք օրենքները ուժը կորցրած ճանաչվեցին: Սակայն պետք է նաև հատուկ կարևորել այն հանգամանքը, որ օրենսգրքի իրավական կարգավորման առարկա է հանդիսանում հասարակական հարաբերությունների ավելի լայն համալիր, քան դա նեոարված էր վերը նշված օրենքներում: Այս իրողությունը պայմանավորված է նախ այն հանգամանքով, որ օրենսգիրքը հիմնված է դատական իշխանության որպես պետական իշխանության ինքնուրույն թևի միասնականության հայեցակարգի վրա: Այդ իսկ պատճառով նրանում տեղ են գտել բազմաթիվ իրավական դրույթներ, որոնք սահմանում են ոչ միայն դատական իշխանության կառուցվածքը և դրա առանձին կոմպոնենտների միջև կապերը, այլ դատական իշխանության որպես պետական իշխանության առանձին ինքնավար թևի առանձնահատկությունները՝ դատական իշխանության հասկացությունը, դատական իշխանության գործունեության սկզբունքները, դատական իշխանության ինքնակառավարումը:

Օրենսգրքի և նախկինում գործող երեք օրենքների իրավական կարգավորման առարկայի ծավալների տարբերությունները պայմանավորված են նաև դատական կադրերի ընտրության, վերապատրաստման օրենսգրքով սահմանված նոր կառուցակարգերով՝ օրինակ՝ դատական դպրոցի ինստիտուտի ներմուծմամբ: Ասվածը իհարկե չի նշանակում, որ Օրենսգրքով միայն ընդլայնվել է դատական իշխանության ոլորտի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առարկայի ծավալը: Այս ոլորտի հասարակական հարաբերությունների բազմաթիվ տեսակներ ստացել են անկախ և արդյունավետ դատական իշխանության պահանջներին համապատասխանող նորարական իրավական լուծումներ: Այդ հարցերը մանրամասն վերլուծության կենթարկվեն

¹¹⁶ ՀՀԴՏ 1998/15:

¹¹⁷ ՀՀԴՏ 1998/15:

¹¹⁸ ՀՀԱԺՏ, 1995/7:

¹¹⁹ ՀՀԴՏ, 2007/20:

հետագայում: Այժմ մենք դրանք դիտարկում ենք միայն դատական իրավունքի կարգավորման առարկայի հստակեցման տեսանկյունից:

Օրենսգրքի առաջին բաժնի նորմերով կարգավորվում են առաջին հերթին դատարանակազմության հետ կապված հարաբերությունները՝ սահմանվում են ընդհանուր իրավասության դատարանների, քաղաքացիական, քրեական և վարչական դատարանների, ինչպես նաև վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի իրավասությունների շրջանակը, տարբեր դատարանների դատական ակտերի ուժի մեջ մտնելու կարգը, յուրաքանչյուր դատարանի դատավորների թվակազմը և նստավայրերը և ամրագրվում են դատարանների նախագահների իրավական կարգավիճակները: Իրենց բնույթով դատարանակազմական են նաև տվյալ բաժնի նորմերով ամրագրված դատարանի բնականոն գործունեության ապահովման երեշխիքները:

Սակայն կարծում ենք, որ տվյալ բաժնի վերտառությունը՝ «Դատարանակազմություն» այնուամենայնիվ ավելի նեղ է, քան այդ բաժնի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների համալիրը: Բաժնի առաջին «ընդհանուր դրույթներ», երկրորդ՝ «դատական իշխանության գործունեության սկզբունքները» և տասներորդ՝ «դատական իշխանության ինքնակառավարումը» գլուխների նորմերով կարգավորվող հարաբերությունների տեսակները իրենց բնույթով դատարանակազմական բնույթի չեն: Դրանք վերաբերում են ոչ թե դատական իշխանության ներքին կառուցվածքին և դրա բաղադրատարրերից յուրաքանչյուրի գործառնությանը, այլ բնորոշվում են դատական իշխանության՝ որպես պետական իշխանության որոշակի ամբողջականության, որպես պետական իշխանության ինքնուրույն թևի հիմնական հասկացությունները, դրա գործունեության սկզբունքները և ամրագրում են դատական ամբողջական իշխանության ինքնակառավարման կառուցակարգերը:

Օրենսգրքի «դատավորների կարգավիճակը» վերտառությամբ երկրորդ բաժնի նորմերով կարգավորվում է հասարակական հարաբերությունների այն համալիրը, որը նախկինում կարգավորվում էր հիմնականում «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Դրանք են. դատավորների գործունեության նյութական, սոցիալական և այլ երաշխիքները, դատավորների վարքագծի կանոնները:

Օրենսգրքի երրորդ՝ «Արդարադատության խորհուրդը» բաժնի իրավական կարգավորման առարկան հիմնականում համընկնում է ուժը կորցրած նույնանուն օրենքով կարգավորվող հասարակական հարաբերությունների ծավալի հետ: Այդ առարկան են կազմում.

- արդարադատության խորհրդի կազմը և լիազորությունները,
- դատավորների ցուցակների կազմումը և հաստատումը,
- առաջին աստիճանի դատարանների դատավորների և դատարանի նախագահների նշանակման կարգը,
- դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմումը և հաստատումը,
- վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների և դատարանների նախագահների նշանակման կարգը,
- դատավորների կարգապահական պատասխանատվությունը և լիազորությունների դադարեցումը,
- դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու

համաձայնություն տալու հարցի քննարկումը Արդարադատության խորհրդում,

- ներման հարցերի քննությունը Արդարադատության խորհուրդում:

Կարծում ենք, որ այդ բաժնում ընդգրկված իրավական նորմերի ամբողջությունը կարելի է բնութագրել, որպես դատական իրավունքի կոմպլեկս ինստիտուտ, որն նեոարում է ինչպես նյութական իրավունքի նորմեր, այնպես էլ պրոցեսուալ բնույթի իրավանորմեր՝ այսինքն՝ նորմեր, որոնք սահմանում են համապատասխան հարցերի քննության ընթացակարգերը: Այս գնահատականը դառնում է ավելի հիմնավոր, եթե հաշվի առնենք, որ քննարկվող բաժնում ընդգրկված մի շարք նորմեր (օրինակ՝ դատավորների կարգապահական պատասխանատվությունը և լիազորությունների դադարեցումը, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցի քննարկումը Արդարադատության խորհրդում), սահմանելով Արդարադատության խորհրդում համապատասխան հարցերի քննության կարգի, առնչվում են նաև դատավորի կարգավիճակի հետ:

Օրենսգրքի երկրորդ մասում ամրագրված է մեր օրենսդրության համար նորամուծություն հանդիսացող իրավական ինստիտուտ՝ դատական դպրոցի ինստիտուտը: Այս բաժնի նորմերով, մասնավորապես սահմանվում է. դատական դպրոցի կարգավիճակը և կառուցվածքը, դատական դպրոցի ունկնդրի և դատավորների պաշտոնեական պիտանիության ցուցակում ընդգրկված անձի կարգավիճակը, դատական դպրոցում ուսուցման ընթացքը և դասավանդումը, դատական դպրոցում ուսուցման ավարտը, դատավորների և պաշտոնեական պիտանիության ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստումը:

Օրենսգրքի երրորդ մասում ընդգրկված նորմերի համակարգը կարելի է բնորոշել որպես միջճնադային կոմպլեկս ինստիտուտ, որի կարգավորման առարկան է հանդիսանում դատական իշխանության և քաղաքացիական ծառայության ոլորտի հասարակական հարաբերությունների համալիրը:

Պետք է նկատել, որ Դատական օրենսգիրքը ոլորտի հարաբերությունները կարգավորող հիմնական, բայց ոչ միակ նորմատիվ իրավական ակտն է: Հենց Օրենսգրքի մի շարք հոդվածներում հղումներ են կատարվում այլ օրենսդրական ակտերի վրա: Մասնավորապես Օրենսգրքի.

- 85-րդ հոդվածի համաձայն դատավորների գործուղման ծախսերը վճարվում են **օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով** /ընդգծված է մեր կողմից՝ չ.Մ/.
- 96-րդ հոդվածով սահմանվում է, որ դատավորը, ինչպես նաև նրա հետ փոխկապակցված հայտարարատու հանդիսացող անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայկտարարագրման համար **օրենքով սահմանված կարգով** ներկայացվող հայտարարագրի պատճենը ուղարկել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին.
- 172-րդ հոդվածի համաձայն Դատական դպրոցի գործունեությունը կարգավորվում է Օրենսգրքով, դատական դպրոցի կանոնադրությամբ,

ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով¹²⁰

- 195-րդ հոդվածի համաձայն դատական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,¹²¹ դատական ծառայության հետ կապված աշխատանքային հարաբերությունները՝ **աշխատանքային օրենսդրությամբ**.
- 197-րդ հոդվածով սահմանվում է, որ օրենսգրքով սահմանված դեպքերում դատական կարգադրիչների ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹²² դրույթները այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են դատական կարգադրիչների նկատմամբ և չեն հակասում օրենսգրքին:

Ակնհայտ է, որ վերը նշված նորմատիվ իրավական ակտերում պարունակվող նորմերն ու ինստիտուտները նույնպես կազմում են դատական իրավունքի քաղադրատարրեր:

Դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի մի շարք կետերով Դատարանների նախագահների խորհրդին՝ այլ լիազորությունների հետ միասին, վերապահված են նաև զանազան տեսակի կանոններ, կարգեր, աշխատակարգեր, պաշտոնների անձնագրեր և ցանկեր հաստատելու լիազորություններ: Այդ բոլոր փաստաթղթերը պարունակում են կամ պետք է պարունակեն վարքագծի ընդհանուր կանոններ: Ըդսմին դրանք այնպիսի կանոններ են, որոնք պարտադիր են կատարման համար և որոնց խախտումը հղի է անբարենպաստ հետևանքներով: Այլ կերպ ասած՝ բոլոր նշված փաստաթղթերը հանդիսանում են նորմատիվ իրավական ակտեր: Պետք է նաև նկատել, որ քաղաքացիական ծառայության մյուս ոլորտների, ինչպես նաև համայնքային ծառայության ոլորտի համար համապատասխան նորմատիվ իրավական ակտեր հաստատելու լիազորությունը վերապահված է համապատասխան պետական մարմիններին՝ քաղաքացիական ծառայության խորհրդին և տարածքային կառավարման նախարարին: Դատավորների ինքնակառավարման մարմնին՝ դատարանների նախագահների խորհրդին այս իրենց էությամբ պետական իշխանական լիազորությունների վերապահումն նույնպես հանդիսանում է դատական իշխանության անկախության արտահայտություններից մեկը:

Այսպես, դատարանների նախագահների խորհուրդ հաստատում է. դատական քննության հետ կապված դատավարական օրենսդրության պահանջների կատարումը ապահովող կանոններ /կետ 4/, դատարանների գործավարության կանոնները /կետ 5/, հաստատում է դատավորի պատմուճանի նկարագրությունը, դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման ցանկը /կետ 7/, դատական ծառայության պաշտոնների անձնագրերը /կետ 9/, դատական ծառայության պաշտոնների անվանացանկը /կետ 10/, դատական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար փակ մրցույթի անցկացման կարգը, ինչպես նաև բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման կարգը, մրցույթային հանձնաժողովների ձևավորման

¹²⁰ ՀՀԳՏ 2001/37:.

¹²¹ ՀՀԳՏ 2006/40:

¹²² ՀՀԳՏ 2005/52:

կարգը և դրանց աշխատակարգը /կետ 11/, դատավորների և դատական ծառայողների վերապատրաստում անցկացնելու կարգը /կետ 12/, և այլն:

Ելնելով վերը նշվածից դատական իրավունքը կարելի է բնորոշել որպես Հայաստանի Հանրապետության իրավունքի ինքնուրույն ճյուղ, որի բաղկացած է մի շարք իրավական ինստիտուտներից (նեոարյալ կոմպլեկս ինստիտուտները) և որի կարգավորման առարկան է հանդիսանում դատական իշխանության կազմակերպման և գործառնության, դատավորների նախապատրաստման, ընտրության և նշանակման, դատավորների կարգավիճակի ամրագրման, ինչպես նաև դատական ծառայության իրականացման հետ կապված հասարակական հարաբերությունների համալիրը: Դատական իրավունքի աղբյուրներ են հանդիսանում ՀՀ Սահմանադրությունը, օրենքներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև պետության նախնական սանկցիայով /թույլատրությամբ/ Դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունված և իրավունքի նորմեր պարունակող փաստաթղթերը՝ նորմատիվ իրավական ակտերը:

Դատական իշխանության բարեփոխումների կարևորագույն ուղղություններից են նաև դատական մարմինների համակարգի կառուցվածքային բարեփոխումները, ինչպես նաև դատական տարբեր ատյանների լիազորությունների այնպիսի վերաբաշխումը, որը կնպաստի այդ ատյանների առավելագույն արդյունավետ (օպտիմալ) փոխգործակցությունը՝ արդյունավետ արդարադատության իրականացման նպատակով:

Այս առումով նայնպես դժվար է թերագնահատել 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների նշանակությունը: Բարեփոխված Սահմանադրությամբ նախ հստակեցվեց վճռաբեկ դատարանի իրավական կարգավիճակը: 1995 թվականի Սահմանադրությունը վճռաբեկ դատարանի կարգավիճակի վերաբերյալ որևէ դրույթ չէր պարունակում: Ավելին Սահմանադրությամբ ՀՀ Գերագույն դատարանի վերակազմակերպվեց վճռաբեկ դատարանի: Իհարկե կարելի է հասկանալ այն շարժառիթները, որոնք ստիպեցին գնալ այդ քայլին: Խորհրդային ժամանակաշրջանում դատական մարմինների համակարգը՝ պետական կառավարման մյուս համակարգերի նման, չափազանց կենտրոնացված էր, ինչը մեծ չափով խոչընդոտում էր բացի Գերագույն դատարանից դատական մյուս բալոր ատյանների կողմից ինքնուրույն արդարադատություն իրականացնելու հնարավորությունները: Սակայն կարծում ենք, որ 90-ական թվականների կեսերին իրականացված այդ քայլերը հանգեցրեցին մյուս ծայրահեղության: Դատական մարմինների համակարգը լիովին գրկվեց իր համակարգային կարևորագույն հատկանիշից՝ համակարգի միասնական գործառնությունը ապահովող բախադրատարրից: Ավելին՝ Գերագույն դատարանի վերակազմակերպումը վճռաբեկ դատարանի՝ ուղղակիորեն նշանակում էր դատական բարձրագույն ատյանի վերացում:

Ինչպես արդեն նշել էինք, դատական մարմինների համակարգը՝ ցանկացած այլ համակարգի նման պետք է ունենա բուրգաձև կառուցվածք: Սակայն ի տարբերություն, ասենք, գործադիր իշխանության մարմինների համակարգի դա պետք է լինի այնպիսի բուրգ, որը չի խոչընդոտում բուրգի ստորին օղակների կողմից իրենց գործառնությունների ինքնավար իրականացմանը: Դատական գործառնության արդյունավետությունը կախված է դատավորներից յուրաքանչյուրի

գործունեությունից:¹²³ Կարծում ենք, որ սահմանադրական բարեփոխումները հնարավորություն տվեցին այդ հարցի ճշգրիտ լուծման համար: Մասնավորապես, Սահմանադրությամբ ամրագրվեց, որ վճռաբեկ դատարանի հանդիսանում բարձրագույն դատական ատյանի բացառությամբ սահմանադրական արդարադատության հարցերի:

Վճռաբեկ դատարանի կարգավիճակի մանրամասն ուսումնասիրությունը դուրս է գալիս մեր հետազոտական խնդիրների շրջանակից: Դա հատուկ գիտական ուսումնասիրության թեմա է: Ատենախոսության հետազոտական խնդիրների իրացման համար կարևոր է միայն բացահայտել և հետազոտել բարձրագույն դատական ատյանի կողմից իր սահմանադրորեն ամրագրված առաքելության՝ օրենքների միասնական կիրառման ապահովման, հիմնական ուղղությունները և միջոցները: Այս հարցի պատասխանը իհարկե նախ պետք է փնտրել գործող օրենսդրության մեջ:

Որպես ելակետ այստեղ պետք է ընդունել Դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, որոնց համապատասխան վճռաբեկ դատարանը բողոքը ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝

- 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ
- 2) վերանայվող դատական ակտը առերևույթ (*prima facie*) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ
- 3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Կարծում ենք, առաջին դրույթի բովանդակությունը միանշանակ է և պարզ, ուստի լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունի:

Մեր կարծիքով, երկրորդ դրույթի հիմնական նպատակն է ընդգծել և օրենսդրորեն ամրագրել վճռաբեկ դատարանի որոշումների ավելի բարձր իրավական ուժը և որպես ուղեցույց պարտադիր լինելը բոլոր ստորադաս դատարանների համար:

Լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունեն երրորդ դրույթում օգտագործած «դատական սխալ» և «ծանր հետևանքներ» հասկացությունները: Այդ դրույթների համադրումից միանշանակ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ որպես «դատական սխալ» են գնահատվում ոչ միայն օրենքի պահանջներին հակասող, այլ նաև վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին հակասող ստորադաս դատարանների դատական ակտերը: Ինչ վերաբերում է «ծանր հետևանքներ» հասկացությունը, ապա այն կարելի է մեկնաբանել երկու առումներով՝ ծանր հետևանքներ փաստացի առումով և ծանր հետևանքներ ֆորմալ-իրավական առումով: Կարծում ենք, առաջին դեպքում խոսքը գնում դատավարության կողմերից մեկի համար ծանր հետևանքների մասին: Երկրորդ դեպքում խոսքը գնում է արդարադատության համար ծանր հետևանքների մասին, նկատի ունենալով, որ

¹²³ Համակարգը արմատական փոփոխությունների պետք է ենթարկվի. Դատական իշխանություն, 2005, թիվ 6, էջ 2:

նմանատիպ դատական սխալը առերևույթ (prima facie) պայմանավորված է այնպիսի պատճառներով, որոնք տիպային են, կրկնվող և կարող են որոշակի «նախադեպային» նշանակություն ունենալ:

Այստեղ մենք մոտենում ենք հետսոցիալիստական գիտական գրականության մեջ լայն տարածում գտած «դատական քաղաքականության» և «օրենքների միատեսակ կիրառում» հասկացությունների հարաբերակցության բացահայտման խնդրին:

Դատական քաղաքականության հիմնախնդիրների հետազոտմանը հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ մեծ ուշադրություն է հատկացվում:¹²⁴ Այս հիմնախնդրի վերաբերյալ, կարելի է ասել, ձևավորվել է սկզբունքորեն միատեսակ մոտեցում: Այդ մոտեցումը առավել հստակորեն ձևակերպել է դատական քաղաքականության հիմնախնդիրներին հատուկ հետազոտություն նվիրած Ա. Բարակը, որը դատական քաղաքականությունը բնորոշում է որպես «գործոնների համալիր, որը ուղղություն է տալիս դատական իշխանությանը՝ իրավունքով իրեն ընձեռնված հնարավորություններից ընտրություն կատարելու ընթացքում»:¹²⁵ Այս բնորոշումից կարելի է հանգել որոշակի եզրակացությունների:

Նախ դատական քաղաքականությունը իրականացվում է օրենքի շրջանակներում: Այն ենթակա է և իր հիմքում ունի օրենսդրական քաղակականությունը: Միննույն ժամանակ, եթե դատական քաղաքականության բնույթը և ուղղությունները միանշանակ պայմանավորվեին գործող օրենսդրության բովանդակությամբ, ապա օրենքների միասնական կիրառման կամ դատական քաղաքականության հասկացությունը կլիներ ավելնորդ:

Սակայն օրենսդիրը դատավորին հնարավորություն է տալիս ոչ միայն մեկնաբանելու կիրառվող իրավական նորմերը, այլև նրա հայեցողությանն է թողնում իր առջև կանգնած հարցերի լուծման օրենքով թույլատրվող տարբերակներից մեկի ընտրությունը: Ա. Բարակի կարծիքով, դատական քաղաքականության հիմքում ընկած է «այն կշռադատությունների գիտակցական ձևակերպումը, որոնց համաձայն դատավորը ընտրություն է կատարում իրավունքին համապատասխանող այլընտրանքների միջև, որոնք հնարավոր են բարդ գործերում»:¹²⁶ Առավել ակնհայտորեն դատական քաղաքականության համեմատական ինքնուրույնությունը արտահայտվում է պատիժների նշանակման ոլորտում, որտեղ դատարանների քաղաքականությունը նույնիսկ խորհրդային ժամանակաշրջաններում ուներ իր անվանումը՝ քրեակատարողական կամ պատժիչ քաղաքականություն:

Դատական քաղաքականության մշակումը և իրականացումը դա որևէ ատյանի դատարանի մենշնորհը չի կարող համարվել: Դատական քաղաքականություն իրականացնող սուբյեկտ պետք է ճանաչվի ոչ թե առանձին դատարանը, այլ դատական իշխանությունը ամբողջությամբ՝ որպես իշխանության ինքնուրույն թև: Սակայն տարբեր ատյանի դատարանների դերը այդ քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում տարբեր է: Դատական քաղաքականությունը չի կարող իր

¹²⁴ Stu' opihnal, Áaðæ À. Nõááéñéíá óñííððáíéá. Í., 1999; Nõáááíáý æeáñóú. Ííá ðáá. È.È. Íáððóðéíá. Í., 2003; Ðíññééñéáý íðááíááý ííééðééá. Ííá ðáá. Íáðóçíáá Í.È., Íæüéí Á.Á. Í., 2003; Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. Երևան, 2005:

¹²⁵ Áaðæ À., նշվ. աշխ., էջ 299:

¹²⁶ Նույն տեղում, էջ 294-295:

արտահայտությունը գտնել ծրագրերի, հոչակագրերի և այլ տեսքով: Դատական քաղաքականության արտահայտման միակ ձևը կարող են լինել դատական ակտերը: Այստեղից ակնհայտ է դառնում դատական քաղաքականության մշակման և իրագործման ընթացքում վճռաբեկ դատարանի վճռորոշ դերը, որն մյուս բոլոր դատական ատյանների համար պարտադիր ակտերում ընդհանրացնում և ուղղություն է տալիս դատական քաղաքականությանը: Հենց դա է պատճառը, որ ԱՄՆ-ի իրավաբանների ընկերակցության փորձագետ Ա. Ղազարյանի պնդմամբ «այսօր միջազգային դոնոր կազմակերպությունները, դատաիրավական բարեփոխումները գնահատելիս, առաջին հերթին ուշադրություն են դարձնում ոչ թե ընթացիկ օրենսդրական փոփոխություններին, այլ վճռաբեկ դատարանի որոշումներին... Վճռաբեկ դատարանի որոշումներն այսօր յուրահատուկ ինդիկատորի դեր են խաղում դատական բարեփոխումների արդյունավետությունը գնահատելու համար»¹²⁷

Ուստի մենք չենք կարող համաձայնվել Ա. Բարակի հետ, ով համարում է, որ հենց իրենց բնույթով դատական քաղաքականության սկզբունքները «պարտադիր չեն դատավորի համար: Եթե այդ սկզբունքները պարտադիր լինեին, ապա դատական հայեցողությունը կչքվեր»:¹²⁸ Կարծում ենք, դատական հայեցողությունը կարող է և պետք է «տեղավորվի» ոչ միայն գործող օրենսդրության, այլ նաև միասնական դատական քաղաքականության շրջանակներում: Խոսքը կարող է գնալ ընդհանուր դատական քաղաքականության, այսինքն միասնական դատական իշխանության քաղաքականության, այլ ոչ թե առանձին դատավորի կամ դատարանի «քաղաքականության» մասին:

Սակայն վերը նշվածը հիմք չի տալիս քննարկվող երկու՝ «դատական քաղաքականություն» և «օրենքների միատեսակ կիրառում» հասակացությունների՝ նույնացման համար: Բանն այն է, որ ցանկացած քաղաքականության կարևորագույն բնութագրիչը՝ դա նպատակահարմարությունն է: Ընդամին դատական քաղաքականության նպատակները կարող են լինել միայն իրավական՝ օրենքների արդարացի կիրառությունը և իրավակարգի ամրապնդումը: Այդ քաղաքականությունը չի կարող հետապնդել քաղաքական կամ տնտեսական նպատակներ, ինչպես դա հաճախ լինում է ամբողջատիրական համակարգերում: Ասենք, Խորհրդային կարգերի պայմաններում դատարանների և դրանով իսկ այդպես կոչված «դատական քաղաքականության» առջև խնդիր էր դրվում ուժեղացնել պայքարը, օրինակ, այլախոհության, կաշառակերության կամ արժույթային գործարքների դեմ: Դրանով իսկ իրավական նպատակահարմարությունը ենթարկեցվում էր քաղաքական կամ տնտեսական նպատակահարմարությանը:

Ուստի, կարծում ենք, վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը պետք է համարել ոչ թե օրենքների պարզապես միատեսակ կիրառության ապահովումը, այլ դրանց իրավական տեսանկյունից առավել նպատակահարմար և միատեսակ կիրառությունը: Սակայն նույնիսկ այսքանով գործնականում չի սահմանափակվում վճռաբեկ դատարանի՝ որպես դատական բարձրագույն ատյանի (բացի սահմանադրական արդարադատության հարցերի) առաքելությունը:

Օրենքներում արժեաբանական հասկացությունների առկայությունը, օրենսդրության մեջ տեղ գտնող հակասությունները, առկա բացերի լրացման

¹²⁷ Ա. Ղազարյան. Վճռաբեկ դատարանը որպես քաղաքականություն ձևավորող մարմին. Դատական իշխանություն, 2007, թիվ, էջ 3:

¹²⁸ Նույն տեղում, էջ 297:

անհրաժեշտությունը՝ այդ ամենը կազմում է մի յուրահատուկ ոլորտ, որն դուրս է դատական քաղաքականության, բայց ոչ դատական իշխանության շրջանակներից, առաջին հերթին՝ վճռաբեկ դատարանի առաքելության շրջանակից: Այս ոլորտներում վճռաբեկ դատարանի առաքելությունը չի «տեղավորվում» դատական քաղաքականության ավանդական շրջանակներում, եթե դատական քաղաքականության տակ հասկանում ենք օրենքների միատեսակ և նպատակահարմար կիրառությունը: Այդ առաքելությունը կարելի է բացահայտել միմիայն «դատական նախադեպի» հասկացության շրջանակներում:

Պետք է նկատել, որ խորհրդային իրավաբանական գրականության մեջ դատական նախադեպը չէր ճանաչվում որպես իրավունքի աղբյուր:¹²⁹ Սակայն հետխորհրդային ժամանակաշրջանում իրավիճակը արմատապես փոխվեց: Մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում դատական նախադեպի կիրառման հնարավորության և այդպիսի կիրառման շրջանակների հիմնախնդրի քննարկմանը նվիրված են բազմաթիվ գիտական հետազոտություններ:¹³⁰ Այդ աշխատություններում հիմնավորվում է վերադաս դատական ատյանների որոշումներին նախադեպային նշանակություն տալու անհրաժեշտությունը, նշվում է որ.

- դատարանի ճանաչումը որպես իշխանության ինքնուրույն թև ինքնին ենթադրում է նրա կողմից իրավական նորմեր ընդունելու թույլատրելիությունը,
- դեպի իրավական պետության շարժման ճանապարհի սկզբնական փուլում հիմքեր կան ընդունելու դատարանների կողմից իրավական նորմեր ստեղծելու իրողությունը կամ դատական պրակտիկան իրավունքի աղբյուր ճանաչելու համար,
- իշխանության այլ թևերի նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը հնարավոր է միայն դատարաններին նորմաստեղծ իրավունքի վերապահման դեքպում,
- իրավական նորմերի ձևավորումը հնարավոր է ոչ միայն օրենսդրական ճանապարհով, այլ նաև դատարանների գործունեության արդյունքում:

Թերևս դժվար է հերքել տվյալ փաստարկների հիմնավորվածությունը: Սակայն պետք է նկատել, որ դեռևս հաղթահարված չէ դատական նախադեպային իրավունքի նպատակահարմարությունը կամ առկայությունը ժխտելու միտումը: Այսպես, Ս.Կ. Զազայնովը, մերժելով դատական նախադեպի՝ որպես ռուսական իրավունքի աղբյուրի դերը, նշում է. «... Մեր երկիրն ունի զարգացման սեփական պատմություն, օրենսդրության կայացման և զարգացման սեփական ուղի, այլ իրավական

¹²⁹ **Տես՝ օրինակ**, Նոժմիաիաե՝ Ի. Ն. Օաիեիաիի-իժիժաճոճոճաեւիւիւե շաեիւի - աաեիճոճաիւիւե եճոճիւեճ օաիեիաիի-իժիժաճոճոճաեւիւիւաի իժաաա. *Ա. Էի.:* Նիաճոճեճ օաիեիաիի-իժիժաճոճոճաեւիւիւե շաեիւի Է իժիաեաիւ աաի յժժաեճեաիիճոճ. Ի., 1974. Ն. 10:

¹³⁰ **Տես՝ օրինակ**, Էեաթեճ Թ.Շ. Նիաճաիաիայ օաիժեյ իժաաա /իւաճե/.Ի., 1992, էջ 50-51; Իաճիա Ա. Նոճաիւիւե իժաճաիաիժ Էաե եճոճիւեճ օաիեիաիիաի իժաաա. *Ըիճոճեճեայ* քոճեճեյ, 1994, թիվ 1, էջ 8-11; Օեճիճեճ Ա. Ա. Օաիժաճեճ-աճեճա իժիաեաիւ յժժաեճեաիիճոճ իժաաիճոճաեյ իի աճաաաիճեճի աաեաի. *Իիաիճաեաեճոճ. 1997, էջ. 340;* Եճոճեաիաիա Կ. Ն. Օաիժաճեճ-իժաաիաիա իճիաիա ճոճաաիւե աեաճոճ ա *Ըիճոճեճեայ* Օաաճաճեճ. *Աաճիժաճ աեճոճ. ... Էաիա. քճեա. իաճե. Ըիճոճիա-իա-Աիճ. 2000; Ըիաիա Ա. Ի. Իժաաիւճեիաիեճաեւիւայ իժաեճեճա Էաե իաճժաաեճեիւիւե եճոճիւեճ Ըիճոճեճեիաի իժաաա. *Աաճիժաճ աեճոճ. ... Էաիա. քճեա. իաճե. Նաճաճիա. 2003; Դատական նախադեպը* որպես իրավունքի աղբյուր. *Երևան. 2005, էջ 7-35:**

մտածողություն: Այդ պատճառով պետք է խուսափել... արտասահմանյան օրենսդրական ինստիտուտները առանց կշռադատելու փոխառնելուց»:¹³¹

Դատական նախադեպի դերը ժխտելու համար սկզբունքորեն նույնատիպ փաստարկներ է օգտագործում Օ. Ե. Կուտաֆինը, ում կարծիքով «... Ռուսաստանի իրավական համակարգը կա և մնում է այնպիսի պետության համակարգ, որը չի ճանաչում իրավունքի այնպիսի աղբյուր, ինչպիսին է դատական նախադեպը: Պետք է ենթադրել, որ ներկայիս պայմաններում դժվար է ապասել իրավական համակարգի այնպիսի արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով Ռուսաստանում ևս ճանաչում կստանա նույն դիրքորոշումը ինչ ԱՄՆ-ում կամ Բրիտանիայում է: Բացի դրանից «ընդհանուր իրավունքը», որին հատուկ է դատական նախադեպը, իր հնարավոր դրական կողմերով հանդերձ, ստավիզվում է ռուսական իրավունքի համար»:¹³² Ինչպես տեսնում ենք, վերը նշված մոտեցումը որևէ ռացիոնալ փաստարկներով չի հիմնավորվում: Դատական նախադեպի ժխտումը հիմնավորվում է Ռուսաստանի իրավական համակարգի պատմական զարգացման առանձնահատկություններով, ինչպես նաև «ազգային մենթալիտետի» առանձնահատկություններով: Ինչ վերաբերում է Օ.Ե. Կուտաֆինի այն «փաստարկին», որ դվար է ապասել «իրավական համակարգի այնպիսի արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով Ռուսաստանում ևս ճանաչում ստանա նույն դիրքորոշումը ինչ ԱՄՆ-ում կամ Բրիտանիայում է», ապա պետք է նկատել, որ վերջին տասնամյակների ընթացքում հետսոցիալիստական պետություններում կատարվել են տնտեսական, քաղաքական և իրավական համակարգերի շատ ավելի սկզբունքային և գլոբալ փոփոխություններ: Ավելին, մայրցամաքային և «ընդհանուր իրավունքի» համակարգերի մերձեցման միտումը, որն իր արտահայտությունն է գտնում առաջին հերթին մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում դատական նախադեպի ներմուծման ոլորտում, յուրահատուկ է ոչ միայն ցնցումներ ապրած հետսոցիալիստական երկրների իրավական համակարգերի համար, այլև արդեն կայացած և կայուն այնպիսի իրավական համակարգերի համար, ինչպիսին է օրինակ Ֆրանսիայի իրավական համակարգը:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ այդ փաստը ընդգծել է Գ.Հարությունյանը. «Իշխանության տարանջատման եվրոպական իրավամտածողության չափանիշներից ելնելով՝ արմատական վերանայման անհրաժեշտություն ունեն դատական պրակտիկայի՝ որպես իրավունքի աղբյուրի մասին պատկերացումները: Խորհրդային իրավական համակարգը հիմքերից մերժում էր նման հնարավորությունը, ձևախեղել էր իրավունքի անմիջական գործողության իրավական բովանդակությունը: Այս մտայնությունը լուրջ հակասության մեջ մտավ, մի կողմից՝ սահմանադրական դատարանի ստեղծման և նրա գործառնական դերի, ինչպես նաև եվրոպական իրավունքի նոր դերակատարության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիր բնույթի, մյուս կողմից՝ իրավական պետության սահմանադրական սկզբունքի ընդունման և մարդու իրավունքների անմիջական գործողության ճանաչման իրադրության հետ: Որքան էլ դժվար լինի փշրել մտայնության կաղապարները,

¹³¹ St'u çaaâeíîâ Ñ. Ê. İðíáeâíú iðââíiðèíâíâíeý. Ì., 2002, էջ 158:

¹³² Êóðàðèí î. Å. Êñðí-ièèè èííñðèðòèíííîâí iðâââ ðíññèèñèíé Ôâââðâðèè. Ì., 2002, էջ 144:

այնուհանդերձ, անհնար է իրավունքի գերակայությունը ճանաչելով, փորձել կառչել իրավական համակարգերի մասին իր դարն ապրած պատկերացումներին: Այս մտայնության հաղթահարումը, դատական պրակտիկան որպես իրավունքի աղբյուր ճանաչելը միայն հնարավորություն կտա ընկալել ու հասկանալ, որ դատական իշխանությունը ոչ թե միջոց է իշխանության այլ ինստիտուտների առաքելությունն իրականացնելու համար, այլ ինքնուրույն առաքելությամբ օժտված իշխանություն»:¹³³

Դեռևս 2005 թվականին մենք արձանագրել էինք, որ «վերջին տասնամյակներում իրավունքը զարգանում է երկու գլոբալ համակարգերի՝ մայրցամաքային և անգլո-սաքսոնական իրավունքի առանձին տարրերի մերձեցման ուղղությամբ»:¹³⁴ Սահմանադրական փոփոխությունների նախագծի քննարկման ժամանակ ուղղակիորեն ընդգծել էինք, որ 92-րդ հոդվածի դրույթը լուծում է նաև հետևյալ կարևորագույն հարցը. սահմանում է Հայաստանի իրավական համակարգում դատական նախադեպի ներդրման հիմքը և ամրագրում է դատական իրավունքի ստեղծման գործում վճռաբեկ դատարանի դերակատարությունը:¹³⁵ Այդ մոտեցումը պաշտպանեցին նաև դատական կորպուսի բազմաթիվ այլ ներկայացուցիչներ՝ Ա. Մկրտումյանը, Է. Մուրադյանը, Տ. Սահակյանը և այլոք:¹³⁶ Մեր իրավական համակարգում դատական նախադեպի նշանակությունը բազմիցս ընդգծել է նաև Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը: Ուստի կարելի է պնդել, որ համենայնդեպս դատական կորպուսի ներկայացուցիչները միանշանակորեն կարևորում են դատական նախադեպի ինստիտուտի դերը ՀՀ իրավունքի համակարգում:

Որևէ կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի պետություններում դատական նախադեպեր կարող է ձևավորել միմիայն բարձրագույն դատական ատյանը: Դրա մասին է վկայում նաև ՀՀ և բազմաթիվ այլ եվրոպական երկրների (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա և այլն) դատական պրակտիկան:¹³⁷

Այստեղ սկզբունքային կարևոր ենք համարում հետևյալ հանգամանքի հաշվառումը: Դատական նախադեպերի ձևավորման առաքելությունը՝ դա համապատասխան դատական ատյանի դատավորների համար ոչ թե լրացուցիչ հնարավորություն է իրագործելու որևէ անձնական, խմբակային կամ գերատեսչական շահեր, այլ շատ դժվար և պատասխանատու պարտականություն: Ինչպես արդեն արդարացիորեն նշվել է իրավաբանական գրականության մեջ, դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր ճանաչելու համար առաջնային նախապայման են հանդիսանում դատավորի մեթոդաբանական դիալեկտիկական, մշակութաբանական գրագիտությունը և այլն: Դատական նախադեպ ձևավորող դատավորը չի կարող օժտված լինել միայն պրակտիկ իրավաբանին հատուկ հատկանիշներով:¹³⁸ Այս հանգամանքը մենք կարևորում ենք այն պատճառով, որ

¹³³ Հարությունյան Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները. Երևան, 2003, էջ 67-68:

¹³⁴ ՀՀ դատական համակարգում նախատեսվում է դատական նախադեպի իրավունքի կիրառում. - Դատական իշխանություն, 2005, թիվ 8, էջ 3:

¹³⁵ Տես՝ Հ.Սահակյան. Բարեփոխումների առանցքային դրույթները.- Դատական իշխանություն, 2005, թիվ 9-10, էջ 5:

¹³⁶ Տես՝ Դատական իշխանություն, 2005, թիվ 9-10, էջ 6-12:

¹³⁷ Այդ մասին տես՝ Ա. Ղազարյան. Նախադեպի իրավունքը քաղաքացիական իրավունքի երկրներում. - Դատական իշխանություն, 2005, թիվ 11-12, էջ 30-37:

¹³⁸ Այս մասին մանրամասն տես՝ Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. Գիտական հոդվածների ժողովածու.-Եր.: Տիգրան Մեծ, 2005:

մայրցամաքային իրավական համակարգերում դատական նախադեպի նշանակությունը ժխտող հեղինակների մոտ հաճախ նկատվում է մտայնություն՝ դատական կորպուսի անդամների կողմից նախադեպի կարևորելու հանգամանքը մեկնաբանելու որպես սեփական լիազորությունների շրջանակների ընդլայնելու փորձ:

Ուստի այսօր գիտական հետազոտությունների առարկա պետք է հանդիսանա ոչ թե ՀՀ իրավունքի համակարգում դատական նախադեպի առկայության կամ բացակայության մասին հարցի քննարկումը, այլ նախադեպերի ձևավորման կոնկրետ ուղղությունները ու մեխանիզմների բացահայտումը:

Կարծում ենք, որ վերը նշված բոլոր դեպքերում (օրենսդրության մեջ արժեաբանական հասկացությունների առկայություն, օրենսդրության հակասություններ և բացեր) դատական նախադեպի կիրառման անհրաժեշտությունը որևէ կասկած չի հարուցում, նույնիսկ դատական նախադեպ հասկացության ամենակարծր սահմանման դեպքում: Փորձենք մեր այս դիրքորոշումը հիմնավորել կոնկրետ օրինակներով: Որպես ելակետ ընդունենք այն տեսական դրույթը, որ դատական նախադեպը դա իրավունքի աղբյուր է, այսինքն՝ սահմանում է նոր վարքագծի կանոն, պարունակում է իրավական նորմ:

Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1 մասի հանրային շահը գերակա ճանաչվելու համար այն պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահից: Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կառավարությունը իր որոշման մեջ պետք է նշի այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը: Ընդ որում օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված է նաև, որ գերակա հանրային շահի առկայությունը կարող է վիճարկվել դատական կարգով:¹³⁹ Ենթադրենք վճռաբեկ դատարանը քննում է երկու գործ. առաջինով կառավարությունը որպես բացառիկ՝ գերակա հանրային շահ նշել է երկրի պաշտպանության հետ կապված շահը, իսկ երկրորդով՝ կոմունալ տնտեսության զարգացման հետ կապված շահը: Եթե վճռաբեկ դատարանը առաջին դեպքում մերժում է սեփականատիրոջ վճռաբեկ բողոքը այն պատճառաբանությամբ, որ երկրի պաշտպանության շահը գերակա է, ասենք, հողի սեփականատիրոջ շահից, ապա դրա արդյունքում ըստ էության որոշակիորեն փոփոխվում է՝ կոնկրետացվում է կիրառվող նորմի հիպոթեզը: Երկրորդ դեպքում սեփականատիրոջ վճռաբեկ բողոքի մերժումը կունենա նույն հետևանքները: Տեսականորեն նմանառիպ հարցերով վճռաբեկ բողոքների որոշակի ամբողջության քննությունը և համապատասխան դատական նախադեպերի համակարգի կայացումը կարող է փոփոխել տվյալ նորմի հիպոթեզը բովանդակությունը ամբողջությամբ: Բացառիկ՝ գերակա հանրային շահի փոխարեն նախադեպերի միջոցով կրթարկվեն այն բոլոր դեպքերը, երբ հմարավոր է օտարումը, ինչպես նաև այն բոլոր դեպքերը, երբ այդպիսի օտարումը չի թույլատրվում: Ժխտել վճռաբեկ դատարանի այդպիսի որոշումների նախադեպային բնույթը, կարծում ենք դա նույն է, ինչ բացառել կառավարության այն որոշումների նորմատիվ բնույթը, որոնցով կոնկրետացնելով օրենքների ընդհանուր դրույթները, կառավարությունը սահմանվում է, ասենք, այն հիվանդությունների ցանկը, որոնց

¹³⁹ ՀՀ ՊՏ 2006/20:

բուժումը իրականացվում է պետպատվերի շրջանակներում կամ այն անձանց ցանկը, որոնց վրա տարածվում են որոշակի արտոնություններ:

Դիտարկենք իրավիճակը վճարել դատարանի կողմից օրենքի կամ իրավունքի համանմանության (անալոգիայի) սկզբունքի կիրառման դեպքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹⁴⁰ 9-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն. «այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 1-ին հոդվածով նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերությունները կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա)»: Եթե վճարել դատարանը քննում է բողոք, կապված գույքի անհատույց օգտագործման հետ և չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառում է վարձակալության ինստիտուտի համապատասխան նորմը, ապա այս դեպքում ոչ թե պարզապես փոխվում նորմի հիպոթեզը, այլ գույքի անհատույց օգտագործման ինստիտուտի բացը լրացվում է նոր նորմով:

Իրավունքի համակարգում տեղ գտած բացերի և դրանց հաղթահարման ընթացքում վճարել դատարանի կողմից ընդունվող նախադեպային նորմերի հիմնախնդրի քննարկման ընթացքում, պետք է հաշվի առնել մեկ հանգամանք ևս: Տեսականորեն հնարավոր են և գործնականում ստեղծվում են այնպիսի վիճակներ, երբ վիճահարույց է հենց բացի առկայության կամ բացակայության հարցը:

Օրենսդրական հակասությունների ոլորտը՝ այն ոլորտն է, որտեղ դատական նախադեպը կարող մինչև ՀՀ օրենսդրության համակարգային կատարելագործումը կարևոր դեր խաղալ օրենսդրական հակասությունների մեղմելու և դրանց բացասական հետևանքների նվազեցնելու առումով: Մինչև բուն հարցին անրադառնալը նախ նշենք, որ ոչ միշտ են հիմնավոր և մեծամասամբ գործառնական առումով կիրառելի հակասությունների լուծման այն կանոնները, որոնք ամրագրված են «Իրավական ակտերի մասին»:¹⁴¹ ՀՀ օրենքում: Այսպես, օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն «միևնույն մարմնի նոր ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտերը»:

Իհարկե հասկանալի է օրենսդրի ձգտումը «կարգապահեցնել» իրավաստեղծ մարմիններին, ստիպել նրանց նոր հավասար ուժ ունեցող ակտերի ընդունման դեպքում անհրաժեշտ փոփոխություններ կատարել նախկինում ընդունված ակտերում և դրանով իսկ նվազեցնել օրենսդրական հակասությունները: Մակայն չի կարելի նաև անտեսել այն հանգամանքը, որ միևնույն թեմայով նոր իրավական ակտի ընդունումը գործնականում միշտ պայմանավորված է հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտների զարգացման օրինաչափություններով և նշված կանոնի կիրառումը կարող է մեծ չափով խոչընդոտել հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտների զարգացմանը համընթաց և անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն «նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասությունների դեպքում գործում են այն մասերի դրույթները,

¹⁴⁰ ՀՀ ԳՏ 1998/17

¹⁴¹ ՀՀ ԳՏ 2002/15

որոնք բխում են տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի սկզբունքներից...»: Այս դրույթը ընդհանրապես գործնականում անկիրառելի է: Նախ միշտ չէ, որ հակասությունը ակնհայտ է: Հաճախ տարբեր իրավադրույթների բովանդակության տարբերությունը կարելի է մեկնաբանել և որպես հակասություն և որպես բացառություն: Երկրորդը՝ կարծում ենք, որ գործնականում ցանկացած ակտի դրույթները բխում են տվյալ ակտի էությունից իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքներից: Ուստի կարծում ենք, որ նպատակահարմար է պարզապես ուժը կորցրած ճանաչել քննարկվող օրենքի 24-րդ հոդվածի գործադրությունը, քանի որ այն փորձելով տալ օրենսդրական հակասությունների լուծման մեխանիկական լուծումներ, կարող է էականապես խոչընդոտել դատական նախադեպերի միջոցով համապատասխան հակասությունների արդյունավետ հաղթահարմանը:

Մինչդեռ, կարծում ենք, որ մինչև ՀՀ օրենսդրության ամբողջական կանոնակարգումը, հենց դատական նախադեպն է հանդիսանում օրենսդրական հակասությունների լուծման ամենարդյունավետ և նպատակահարմար միջոցը: Հենց նախադեպերի միջոցով կարելի է որոշել միմիանց հակասող, որ իրավադրույթն է նպատակահարմար կիրառել և որը գործնականում համարել իրավաբանական ուժ չունեցող:

Դատավորների 5-րդ կոնֆերանսի զեկույցում մենք արդեն նշել ենք, որ նախադեպային /դատական/ իրավունքը ձևավորվում է իրավական նորմերի մեկնաբանման միջոցով: Ընդամին գոյություն ունի դատական /նախադեպային/ իրավունքի միջոցով իրավունքի համակարգի զարգացման չորս ուղղություն.

1. Առաջին ուղղությունը պայմանականորեն կարելի է անվանել «իրավական մեկնաբանում», այսինքը այնպիսի պարզաբանումը, որը հիմնաված է Եվրոպական Կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների հաշվառման վրա.
2. Երկրորդ ուղղությունը պայմանականորեն կարելի է կոչել «լրացուցիչ մեկնաբանում», որի հիմնական բովանդակությունը իրավունքի գերակայության և մարդու իրավունքների և ազատությունների հաշվառմամբ իրականացված պարզաբանման միջոցով գործող օրենսդրության մեջ բացերի լրացումն է:

Հաջորդ երկու ուղղությունները պայմանականորեն կարելի է անվանել «մերժող մեկնաբանում»: Այդ ուղղություններն են.

3. դատարանի կողմից օրենքին չհամապատասխանող և մարդու իրավունքներն ու ազատությունները խախտող պետական մարմնի ակտը չկիրառելը.

4. դատարանի կողմից Կոնվենցիայի նորմերին հակասող և մարդու իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքը չկիրառելը:¹⁴²

Բարեփոխված Սահմանադրությամբ ամրագրված վճռաբեկ դատարանի առաքելությունը՝ ապահովել օրենքների միատեսակ կիրառությունը, սահմանադրաիրավական հիմք է հանդիսանում նաև վճռաբեկ դատարանի դատավարական լիազորությունների շրջանակների ճշգրտման համար: Ակնհայտ է, որ վճռաբեկ դատարանի օրենքների միատեսակ կիրառումը կարող է ապահովել

¹⁴² Գ. Մանուկյան

միայն կոնկրետ գործերով ընդունվող դատական ակտերի միջոցով: Հետևաբար վճռաբեկ դատարանի դատավարական լիազորությունների շրջանակներից դուրս են գտնվում բոլոր այն գործերը, որոնցով կայացվող դատական ակտերը որևէ նշանակություն չեն կարող ունենալ օրենքների միատեսակ կիրառության համար:¹⁴³ Իր սահմանադրական առաքելությունը արդյունավետ կատարելու համար վճռաբեկ դատարանը պետք է ձեռքարկված լինի այնպիսի գործերի քննության պարտավորությունից, որոնք էական դեր չեն կատարում օրենքների միատեսակ կիրառության գործընթացում: Հենց այս հանգամանքով են հիմնավորվում Դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կառուցվածքային կարևորագույն բարեփոխումներից նշենք նաև առաջին ատյանի դատարանների տարանջատումը երկու օղակների՝ ընդհանուր իրավասության դատարանների և մասնագիտական դատարանների և այդ դատարանների միջև դատավարական լիազորությունների վերաբաշխումը:

ՀՀ դատական օրենսգրքը չի բացահայտում առաջին ատյանի դատարանի հասկացությունը: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը միայն սահմանում է, որ ՀՀ-ում գործում են նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն առաջին ատյանի դատարաններ են հանդիսանում ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները: Ուստի միանշանակորեն ճիշտ են այն հեղինակները, որոնք համարում են, որ առաջին ատյանի դատարանների գործառնական դերի վերաբերյալ ամբողջական պատկերացում կարելի է կազմել միայն տեսության մեջ տրված բնորոշումից:¹⁴⁴ Առավել ընդունելի է Կ. Ֆ. Գուցենկոյի և Մ. Ա. Կովալևի կողմից տրված բնորոշումը, որի համաձայն առաջին ատյանի դատարան ասելով հասկացվում է այն դատարանը, որը լիազորված է ըստ էության որոշումներ կայացնել տվյալ գործի համար հիմնական համարվող հարցերի վերաբերյալ:¹⁴⁵

ՀՀ Դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ քաղաքացիական, քրեական և վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի: Ինչպես արդեն նշվել է մասնագիտական գրականության մեջ, ընդհանուր իրավասության դատարանները կազմում են դատական համակարգի հիմնական մասը, քանի որ իրենց թվաքանակով բավականին շատ են և քննում են դատական կարգով լուծվող գործերի մեծ մասը:¹⁴⁶ Համաձայն Դատական օրենսգրքի 24-րդ հոդվածի Երևանում ստեղծված են և գործում են ընդհանուր իրավասության յոթ դատարաններ, իսկ մարզերում՝ ընդհանուր իրավասության ինը դատարաններ: Համայնքի /համայնքների/ ընդհանուր իրավասության դատարանի նստավայրը գտնվում է համապատասխան համայնքի /համայնքներից մեկի/ տարածքում: Մարզի ընդհանուր իրավասության դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է մարզկենտրոնի վարչական տարածքում:

¹⁴³ Տե՛ս նաև Ա. Ղամբարյան. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում. Երևան, 2007, էջ 6:

¹⁴⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները. Երևան, 2007, էջ 192:

¹⁴⁵ Տե՛ս Абоаіеі Е.О., Еіааеаа І.А. Іоааііооаіеоаеüіüâ іоâаіü. І., 1995, էջ 45:

¹⁴⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, էջ 193:

Քաղաքացիական դատարանների իրավասությունը սահմանված է ՀՀ Դատական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն «քաղաքացիական դատարաններն ըստ էության քննում են նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող հայցագին ունեցող վեճեր և դատավարական օրենսգրքով նախատեսված ոչ գույքային բնույթի այլ գործեր, վարում են սնանկության գործեր»: Դատական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ստեղծված են երեք քաղաքացիական դատարաններ՝ Երևանի քաղաքացիական դատարան, որի վարչական տարածքը Երևանի վարչական տարածքն է, Հյուսիսային քաղաքացիական դատարան, որի դատական տարածքն է Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիկի մարզերի վարչական տարածքները և Հարավային քաղաքացիական դատարան, որի դատական տարածքն է Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի վարչական տարածքները:

Օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «քրեական դատարաններն ըստ էության քննում են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը»: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն ստեղծված են նույնպես երեք քրեական դատարաններ, որոնց դատական տարածքները համընկնում են համապատասխան քաղաքացիական դատարանների վարչական տարածքների հետ:

Դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը»: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն ՀՀ-ում ստեղծված է և գործում է մեկ վարչական դատարան, որի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Նախ նկատենք, որ առաջին աստիճանի դատարանների երկօղակ կառուցվածքը և տարբեր օղակների դատարանների միջև լիազորությունների նման վերաբախումը կիրառվում է բազմաթիվ պետություններում: Այդպիսի մոտեցման նպատակն է ապահովել սոցիալ-իրավական կոնֆլիկտների առավել արդյունավետ և առավել պրոֆեսիոնալ լուծումները: Դատարանների մասնագիտացումը դա ժամանակակից աշխարհում տիրապետող ընդհանուր օրինաչափություն է: Այդպիսի մասնագիտացումը արդար դատաքննության լրացուցիչ երաշխիք է հանդիսանում: Որոշ պետություններում դատարանների մասնագիտական միտումը ավելի խորն է արտահայտվում՝ ստեղծվում են նաև այլ դատարաններ. աշխատանքային, հարկային, արտոնագրային, սնանկացման գործեր քննող և այլ մասնագիտական դատարաններ:¹⁴⁷ Նման մոտեցումը հնարավորություն է տալիս մասնագիտացված՝ քաղաքացիական, քրեական և վարչական դատարաններում կենտրոնացնելով պրոֆեսիոնալ առավել բարձր ունակություններ ունեցող դատավորներին:

Բացի դրանից կան մասնագիտացված դատարանների առանձին տեսակների ստեղծման անհրաժեշտության մասին վկայող լրացուցիչ փաստարկներ: Այսպես, մասնագիտացված քաղաքացիական դատարանների ստեղծումը հնարավորություն ընձեռնեց առավել արդյունավետ կերպով լուծել ՀՀ դատարանակազմության տեսությունում և պրակտիկայում հակասական լուծումներ ստացած

¹⁴⁷St'u A.A. Aeania. Ioiaseia yodaseoainone e ainodoinone idaaionoey a dinnee.-

Äëĭ, 2004, թիվ 2, էջ 12:

հիմնախնդիրներից մեկը: Խոսքը գնում է մասնագիտացված տնտեսական դատարաններ ստեղծելու անհրաժեշտության մասին:

ՀՀ 1995 թվականի Սահմանադրության ուղղակիորեն նախատեսվում էր տնտեսական դատարանի առկայությունը ՀՀ-ի դատական համակարգում: Սակայն 1996 թվականի «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով տնտեսական դատարաններ այդպես էլ չձևավորվեցին: Ենթադրվում էր, որ տնտեսական վեճերը հաջողությամբ կարող են քննել առաջին ատյանի դատարանները: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ ընդհանուր իրավասության դատարանների ոչ բոլոր դատավորները ունեն տնտեսական վեճեր լուծելու համար անհրաժեշտ գիտելիքներ և ընդհանուր պատրաստվածություն: Հենց դա էր պատճառը, հետագայում ստեղծվեց հատուկ տնտեսական դատարան: Սակայն շուտով ի հայտ եկան նաև հիմնախնդրի այնպիսի լուծման բացասական հետևանքները: Տնտեսական դատարանը մարզերում գտնվող տնտեսավարող սուբյեկտների համար դարձավ դժվար հասանելի: Բացի դրանից, պարզ դարձավ, որ գործնականում անհնար է հստակ սահմանագատել տնտեսական դատարանի և առաջին ատյանի դատարանի ընդատությունը ենթակա վեճերը: Բարդություններ առաջացան նաև կապված տնտեսական վեճերի վերաքննության հետ:

Մասնագիտացված քաղաքացիական դատարանի ստեղծումով, կարծում ենք, հաջողվեց հաղթահարել նախորդ երկու լուծումների բացասական կողմերը: Նախ՝ միայն մեկ՝ Երևանում գտնվող տնտեսական դատարանի փոխարեն արդեն գործում են երեք տարածքային տնտեսական դատարաններ, ինչը մեծ չափով լուծում է տնտեսական դատարանի մատչելիության խնդիրը: Երկրորդը՝ հնարավոր դարձավ երեք մասնագիտացված դատարաններում տնտեսական գործերի լուծման համար համապատասխան փորձ և գիտելիքներ ունեցող դատավորներ կենտրոնացնել և դրանով իսկ լուծել տնտեսական գործեր քննող դատավորների համապատասխան որակավորման ապահովման հիմնախնդիրը: Լուծվեց նաև տնտեսական գործերի վերաքննության արդյունավետ մեխանիզմի ձևավորման հարցը:

Քրեական դատարանների ստեղծման օգտին կա նաև մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր փաստարկ: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ ապահովել ծանր և առանձնապես ծանր գործեր քննող դատավորների անվտանգությունը և դրանով իսկ ամրապնդել նրանց ինքնուրույնությունն ու անկախությունը:

Հատուկ ուշադրության է արժանի մասնագիտացված վարչական դատարանների հիմնախնդիրը: Դատական բարեփոխումների առաջին փուլում ՀՀ-ում մասնագիտացված վարչական դատարաններ նույնպես չձևավորվեցին: Վարչական արդարադատության իրականացման գործառնությունը վերապահվեց ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին: Սակայն ինչպես արդարացիորեն նշում է Գ. Դանիելյանը, «Հայաստանի Հանրապետության պարագայում արդեն իսկ ակնհայտ է, որ գործադիր իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ապօրինի իրավական ակտերի և գործողությունների /անգործության/ դեմ քաղաքացիների և հասարակական միավորումների կողմից բողոք բերելու, դրանք քննարկելու և լուծելու ընթացակարգերը չեն կարող բավարար չափով համապատասխանել մարդու իրավունքների և ազատությունների

պաշտպանության ներկայիս հայեցակարգի պահանջներին»¹⁴⁸ Բիարկե ստեղծված իրավիճակը բացատրվում է բազմաթիվ հանգամանքներով, առաջին հերթին մեզանում վարչական արդարադատության միասնական հայեցակարգի բացակայությամբ: Սակայն մեկ հանգամանք ակնհայտ է: Ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանները ի վիճակի չէին արդյունավետորեն իրականացնել վարչական արդարադատության գործառնությունը:

Նախ պետք է հաշվի առնել, որ վարչական դատավարությունը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք կանխորոշում են դատավարական ձևերի վերափոխման և հանրային իրավունքի առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը:¹⁴⁹ Թերևս գլխավոր պատճառը առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների և վարչատարածքային միավորումների տարածքների համընկնումն է: Այդ տարածքների համընկնումը բացասական հետևանքները առավել ցցուն են վարչական արդարադատության դեպքում «քանզի, եթե մյուս գործերում կառավարման մարմինները հանդես չեն գալիս որպես դատավարության մասնակից, ապա քննարկվող դեպքում վերջիններս ոչ միայն հանդես են գալիս որպես ինքնուրույն պահանջներ ներկայացնող դատավարության մասնակիցներ, այլև այնպիսի կողմի կարգավիճակով, երբ պարտավոր են իրավական ընդունելի եղանակներով հիմնավորել իրենց կողմից ընդունված իրավական ակտերի կամ որոշումների իրավաչափությունը: Այլ կերպ ասած, այս դեպքում արդեն, անմիջականորեն շոշափվում են կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կենսական շահերը, առանձին դեպքերում՝ այդ պաշտոնատար անձանց պաշտոնում մնալ չմնալու, պատճառված վնասը փոխհատուցելու և նմանաբնույթ այլ հարցերը:

Ասվածից, թերևս, միանշանակ բխում է, որ վարչական արդարադատության պարագայում դատարանների կողմից սպասարկվող տարածքի ճիշտ ընտրության հիմնախնդիրը ձեռք է բերում այնպիսի նրբերենգներ, որոնց առկայության դեպքում անհրաժեշտ է դառնում դատական այնպիսի համակարգի կազմավորումը, որն առավել ունակ կլինի դիմակայելու տարածքային կառավարման մարմինների հնարավոր միջամտություններին»:¹⁵⁰ Միաժամանակ Գ. Դանիելյանը նկատում է, որ տվյալ խնդիրը պարզունակ չէ, քանի որ տարածքային անհամապատասխանությունը նպաստում է գործադիր իշխանության մարմիններից դատարանների անկախությանը, սակայն, միաժամանակ լուրջ բարդություններ է ստեղծում բնակչության համար, քանզի դատարանին դիմելը գուտ հեռավորության հանգամանքով այնքան էլ մատչելի չէ վերջիններիս:¹⁵¹ Կարծում ենք, որ այդ բարդության հաղթահարման ուղին ոչ թե մասնագիտացված վարչական դատարանների ստեղծման գաղափարից հրաժարվելն է, այլ հետագայում մասնագիտացված քաղաքացիական և քրեական դատարանների համակարգի նմանօրինակ, երեք տարածքային դատարանների ձևավորումը:

Այսպիսով, դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլում էական փոփոխություններ կատարվեցին դատական իշխանության ընդհանուր

¹⁴⁸ Դանիելյան Գ. Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները. Երևան, 2004, էջ 5:

¹⁴⁹ Տե՛ս Ա.Ա. Դեմոնի. Նույն տեղում

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 176-177:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 177:

համակարգի երեք բաղադրատարրերում: Ըստ էության ձևավորվեց ՀՀ իրավունքի և օրենսդրության համակարգի նոր ճյուղ՝ դատական իրավունք և դատական օրենսդրություն: Էական փոփոխություններ տեղի ունեցան դատական իշխանության կառուցվածքում՝ ստեղծվեց առաջին ատյանի նոր՝ մասնագիտացված դատարանների համակարգ և վերացվեց տնտեսական դատարանը: Գործառույթային առումով նույնպես լուրջ փոփոխություններ իրականացվեցին: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին տրվեց իրեն հարիր բարձրագույն դատական ատյանի կարգավիճակ, այս հանգամանքից բխող նոր իշխանական լիազորությունների համակարգով հանդերձ, էական վերաբախշում կատարվեց դատական համակարգի տարբեր բախադրատարրերի միջև:

3.2 Դատական իշխանությունը պետական իշխանության ընդհանուր համակարգում

Դատական իշխանության համակարգային հատկանիշների ամրապնդումը անհրաժեշտ նախապայման է, սակայն ոչ բավարար պարագա դատական իշխանության և օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև առավել արդյունավետ փոխներգործության համար: Այդ խնդիրը կարող է լուծվել իշխանությունների տարանջատման ճիշտ մոդելի ընտրության, երեք իշխանությունների միջև փոխադարձ զսպումների և հակակշիռների առավել արդյունավետ համակարգի օրենսդրական ամրագրման և գործնական կիրառման միջոցով: Ինչպես նկատել է իրավական պետության կառուցման խնդիրը պահանջում է արմատական փոփոխություններ կատարել արդարադատության իրականացման ոլորտում՝ դատական իշխանության վերափոխում պետական իշխանության գործնականում անկախ և ինքնուրույն թևի: Մինչդեռ դատական իշխանության որպես պետական իշխանության անկախ և ինքնուրույն թևի արդյունավետության ամրապնդման հիմնախնդիրը մեծ չափով լուծված չէ:¹⁵² Այս միտքը լիովին վերաբերում է նաև ՀՀ դատական իշխանության համակարգին:

Դատական իշխանության արագ կայացումը, դրա վերածումը իրական արդյունավետ ուժի արժանացան իրավագետների ուշադրությանը: Այդ խնդրին նվիրված են մի շարք ֆունդամենտալ հետազոտություններ: Սակայն դրանք որպես կանոն վերաբերում են դատական իշխանության ձևավորման առաջին փուլի տեսական հիմնախնդիրներին:¹⁵³

¹⁵² Աթաթիա Ա.Ա. Իժիաթիա յժաթեթաիինժե է աինժոժիինժե յժաթինժաթյ ա ժինթեթ.-Աթի, 2004, թիվ 2, էջ 17:

¹⁵³ Տե՛ս Էթաթժաթա Ա.Ա. Նժաթիաթյ աթաթժե է ա ժաթթեթաթյ ա ժիթիթիին յժիթաթնա. Նալաթժ, 1999; Ժթաթթեթե Ա.Ա., յաթիթիթա ի.Ի. Նժաթիաթյ աթաթժե է ժինթեթեթե Օթաթթաթթե: էինթեթոթեթիինա ինիթա յժաթիթեթեթե է աթթաթեթիինժե. Ի., 1998; Աթեթիա Ա.Ա. Օթաթյ աթաթժե ժինթեթ. Ի., 1997; Աթինթեթիա Ա.Ա. Նժաթիաթյ աթաթժե է ժինթեթեթեթե Օթաթթաթթե: Նեթժաթի է յթեթեթեթ. Ի., 2002; Գ. Բադիրյան. Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը. Երևան, 2002; Գ. Դանիելյան. Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները. Երևան, 2004; Ա. Ղամբարյան. Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում. Երևան, 2006, և այլն:

Սահմանադրական բարեփոխումները հնարավորություն տվեցին կատարելագործել ոչ միայն ՀՀ դատական իշխանության ընդհանուր համակարգը, այլ նաև ձևավորել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների հավասարակշռված համակարգ: Այս իմաստով կարևորագույն նշանակիություն ունեն հետևյալ փոփոխությունները.

- բարեփոխված Սահմանադրության 5-րդ հոդվածով ոչ միայն ընդհանուր ձևով ամրագրված է իշխանությունների բաժանման /տարանջատման/ սկզբունքը, այլ նաև այդ իշխանությունների հավասարակշռման սկզբունքը.
- դատարանների անկախության երաշխավորն է հանդիսանում ոչ թե Հանրապետության Նախագահը, այլ Սահմանադրությունը և օրենքները.
- էականորեն փոփոխվել է Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը. արդարադատության խորհրդի կազմի մեջ չեն ընդգրկվում Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և դատախազները.
- ընդլայնվել է խորհրդի գործունեության կոլեգիալության սկզբունքը՝ վերացվել է խորհրդի նախագահի և նախագահի տեղակալների ինստիտուտը և ամրագրվել է, որ խորհրդի նիստերը վարում է վճարեկ դատարանի նախագահը, այն էլ առանց քվեարկելու իրավունքի.
- բարձրացել են խորհրդի կողմից ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորությունները՝ դատավորների թեկնածուների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները խորհուրդը կազմում է ինքնուրույնաբար, այլ ոչ թե արդարադատության նախարարի առաջարկությամբ.

Վերը թվարկված սահմանադրական փոփոխությունները նոր հնարավորություններ ընձեռնեցին երեք իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի բարելավման միջոցով դատական իշխանության անկախության աստիճանը որակապես բարձրացնելու համար:

Մինչև այդ մեխանիզմի վերլուծությունը, թերևս արժե անրադառնալ, մեր կարծիքով, մեթոդաբանական նշանակություն ունեցող երկու հիմնախնդրի:

Նախ արժանի է քննարկման հարցը. ինչ եզրույթն է առավել հստակ բնորոշում երեք իշխանությունների փոխհարաբերությունները՝ իշխանությունների տարանջատում թե՛ իշխանությունների բաժանում: Կարծում ենք ավելի ճիշտ է օգտագործել իշխանությունների տարանջատման եզրույթը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածի համաձայն իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իր իշխանությունը իրականացնում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ուստի ժողովրդին պատկանող իշխանությունը իր էությամբ միասնական է և անբաժանելի: Իշխանության «տերը» հենց ժողովուրդն է և այդ իշխանությունը չի կարող բաժանվել տարբեր պետական մարմինների միջև: Օրենսդիր, գործադիր և դատական համակարգերի միջև կարող են միայն տարանջատվել ժողովրդիին պատկանող միասնական իշխանության իրականացման գործառույթները:

Այս հանգամանքից բխում է նաև երկրորդ հետևությունը: Գրականության մեջ և օրենսդրական ակտերում հաճախ օգտագործվում է դատական իշխանության և

երաշխիքներ, քան արդեն կայացած ժողովրդավարական ռեժիմների պայմաններում, որտեղ գոյություն ունեն դատական իշխանության անկախ գործելու ավանդույթներ:

Իշխանությունների տարանջատման ընդհանուր պահանջի շրջանակներում դատական իշխանության անկախության հիմնախնդիրները, մեր կարծիքով, կարելի է բաժանել երկու հիմնական ուղղության՝ 1/ դատական իշխանություն և օրենսդիր իշխանության փոխներգործություն, 2/ դատական իշխանություն և գործադիր իշխանություն փոխներգործություն: Այս առումով մենք լիովին համամիտ ենք այն հեղինակների կարծիքի հետ, որոնք համարում են, որ «...դատական համակարգը դառնում է դատական իշխանություն այն դեպքում, երբ նա օժտվում է իշխանության այլ թևերի նկատմամբ ներգործության որոշակի հնարավորություններով, ներգրավվում է զսպումների և հակակշիռների համակարգում, որն խոչընդոտում է ամբողջ պետական իշխանության բռնատիրմանը նրա որևէ ճյուղի կողմից»:¹⁵⁶

Մակայն այստեղ կարևոր է խուսափել վտանգավոր ծայրահեղությունից: Իշխանությունների տարանջատման սկզբունքի, զսպումների և հակակշիռների առկա մեխանիզմի կիրառման հիմնական նպատակը պետք է լինի ոչ միայն դատական իշխանության անհրաժեշտ անկախության մակարդակի երաշխավորումը, այլ երեք իշխանությունների միջև հավասարակշռության ապահովումը, քանի որ դատական իշխանության գերիշխանությունը իշխանության մյուս երկու թևերի նկատմամբ հղի է նրա նկատմամբ անհրաժեշտ վերահսկողելիության կորուստի և կամայականության վտանգով: Հետևաբար խոսելով զսպումների և հակակշիռների համակարգի մասին անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատական իշխանությունը այստեղ հանդես է գալիս որպես պետության իշխանական լիազորությունների սահմանափակման ոչ միայն սուբյեկտ, այլ նաև օբյեկտ:¹⁵⁷

Իհարկե երեք իշխանությունների միջև փոխհարաբերությունների ցանկալի մեխանիզմը տեսականորեն շատ պարզ և անվիճելի է. օրենսդիրը օրենքների միջոցով սահմանում է փոխհարաբերությունների կանոնները, գործադիրը խստորեն պահպանելով օրենքների պահանջների, կիրառում է դրանք, իսկ դատարանը օրենքի հիմնան վրա լուծում է հասարակության մեջ առաջացող բախումները: Մակայն դա միայն իդեալական տարբերակ է, ցանկալի մոդել որի գործնական իրականացումը կապված է բազմաթիվ խոչընդոտների հետ:

Դատական իշխանության և իշխանության մյուս երկու թևերի միջև զսպումների և հակակշիռների համակարգի առանձնահատկությունների գիտականորեն ճշգրիտ և հստակ բացահայտելու և գնահատելու համար, այդ համակարգի կատարելագործմանն ուղղված լիարժեք և գիտականորեն հիմնավորված հանձնարարականների մշակման համար, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է նախ և առաջ պարզել իշխանության տարբեր թևերի միջև փոխներգործության հիմնական, եթե կարելի է այդպես ասել՝ շփման եզրերը: Ընդամին կարելի է ավստոսանք հայտնել, որ գրականության մեջ տեսական վերլուծության առարկա են հանդիսանում հիմնականում դատական իշխանության և գործադիր իշխանության միջև առկա կապերը: Տպավորություն է ստեղծվում, որ դատական և օրենսդիր իշխանությունների փոխհարաբերությունների ոլորտում գիտական վերլուծության կարոտ որևէ հիմնախնդիրներ ընդհանրապես գոյություն չունեն:

¹⁵⁶ Ռóáááíàÿ áèàñòù, էջ 20:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

Պետության բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը, որոշում է դատական իշխանության կազմակերպման, կազմավորման և գործունեության սկզբունքները:

Ստենախոսության երրորդ գլխի առաջին բաժնում, Դատական օրենսգրքի վերլուծության հիման վրա մենք արդեն ներկայացրել ենք հասարակական հարաբերությունների այն ոլորտները, որոնք ստացել են իրավական կարգավորում հենց օրենսդրի կողմից: Չկրկնելով շարադրվածը, այստեղ մենք կարևորում հենք այն հանգամանքը, որ օրենսդրական լուծումները միանշանակորեն կանխորոշված չեն: Դրանք միշտ էլ կարող են լինել տարբեր, այլընտրանքային: Տարբեր կարող է լինել նաև համապատասխան դատավարական օրենսգրքերով ամրագրված դատական իշխանության գործունեության պրոցեսուալ կարգը:

Իհարկե հասարակական հարաբերությունների կարգավորման համապատասխան ոլորտներում օրենսդրի «ազատությունը» էականորեն սահմանափակված է Սահմանադրությամբ, դրանում ամրագրված սկզբունքներով և կանկրետ նորմերով: Սակայն հենց Սահմանադրական համապատասխան սկզբունքների և նորմերի բովանդակությունը նույնպես կանխորոշված չէ: Սահմանադրության բովանդակությունը էականապես կախված է նաև սուբյեկտիվ գործոնից՝ տվյալ պատմական ժամանակաշրջանում իշխանության ղեկի մոտ կանգնած քաղաքական ուժերի աշխարհայացքային դիրքորոշումներից, ծրագրերից, ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու իրական քաղաքական կամքից: Բացի դրանից սահմանադրական նորմերն ու սկզբունքները միշտ էլ հետագա կոնկրետացման կարիք ունեն, որի ընթացքում օրենսդիրը այնուամենայնիվ օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունների լայն շրջանակով:

ՀՀ 1995 թվականի Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն դատական իշխանության անկախություն երաշխավորն էր հանդիսանում ՀՀ Նախագահը: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Սահմանադրության նույն հոդվածով ամրագրվեց, որ դատական իշխանության անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Երկրորդ մոտեցումը թերևս ավելի հիմնավորված է: Մինևնույն ժամանակ Սահմանադրությամբ և օրենքներով կարող են ամրագրվել ինչպես դատական իշխանության և առանձին դատավորների անկախությունը ապահովող իրական երաշխիքներ, այնպես էլ դատական համակարգը ամբողջությամբ և առանձին դատավորներին, ասենք, իշխող կուսակցության կամ գործադիր իշխանության կամակատարը դարձնող մեխանիզմներ՝ դատական կադրերի ընտրության և նշանակման, դատարանների ֆինանսավորման և նյութատեխնիկական սպասարկման, դատավարական գործընթացների կարգավորման և այլն:

Այսպես, մինչև 1990 թիվը դատարանները գտնվում էին կուսակցական խիստ վերահսկողության ներքո: Բոլոր դատավորների պաշտոնները նոմենկլատուրային էին և այդ պաշտոնները զբաղեցվում էին միայն համապատասխան կուսակցական մարմինների ցուցումով: Դատավորների մինչև 90 տոկոսը կոմունիստական կուսակցության անդամներ էին և կենսագործում էին այդ կուսակցության քաղաքականությունը: «Կուսակցական կարգապահությունը» դատավորների վրա ճնշման հիմնական կովանն էր: Շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանների դատավորները և Գերզույն դատարանի անդամները ընտրվում էին որոշակի ժամկետով, ինչն նույնպես սահմանափակում էր դատավորների

ինքնուրույն դատական ակտեր ընդունելու հնարավորությունները: Արդյունքում տիրում էր «հեռախոսային իրավունքը»՝ դատարանների վճիռների և դատավճիռների համաձայնեցվում էին կուսկումիտեների և Գերագույն դատարանի հետ:

Դատական իշխանության գործունեության արդյունավետությունը մեծ չափով կախված է նաև դատարանների ֆինանսավորման և նյութատեխնիկական ապահովման մակարդակից: Ֆինանսավորման պակասը, որի արդյունքում դատարանները ոչ լրիվ են ապահովված նյութատեխնիկական միջոցներով, կարող է խոչընդոտել դատական իշխանության պատշաճ գործառնությանը: Ֆինանսավորման պակասը սահմանափակում է գործավարության ընթացքում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու դատավորների հնարավորությունները, ինչն իր հերթին հանգեցնում է գործերի քննության ժամկետների խախտման, դատավարության քաշքշուկի և դանդաղկոտության և բացասականորեն է ներգործում դատարանների գործունեության վերջնական արդյունքների վրա:¹⁵⁸

Օրենսդրական լուծումները մեծ չափով կանխորոշում նաև դատական իշխանության փոխհարաբերությունների բնույթը գործադիր իշխանության մարմինների հետ: Ասենք, դատական իշխանության ֆինանսավորման հայտերի նախագծեր կազմելու լիազորությունը կարելի է վերապահել գործադիր իշխանության մարմին՝ արդարադատության նախարարությանը /ինչպես դա կար խորհրդային ժամանակաշրջանում/ և մենք կունենանք ֆինանսավորման պակաս, այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Այդ լիազորությունները կարելի է նաև վերապահել դատական իշխանության համապատասխան կառույցներին և կստանանք այլ արդյունքներ:

Դատարաններում դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանության և հանցավոր ու հակաիրավական այլ ոտնձգություններից դատարանի տարածքի պահպանման պարտականությունը խորհրդային ժամանակաշրջանում դրված էր գործադիր իշխանության մարմիններին գործերի նախարարության վրա: Արդյունքում այդ գործառույթների իրականացման մակարդակը հաճախ անարդյունավետ էր և հայտնվում էր կախվածության մեջ գործադիր իշխանության երկու մարմինների՝ դատարանների կազմակերպչական ղեկավարումը իրականացնող արդարադատության նախարարի և ներքին գործերի նախարարի փոխհարաբերություններից:

Դատարանների գործունեության հետ կապված ենթաօրենսդրական ակտերի ընդունումը կարելի է վերապահել գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ կառավարությանը, կամ դատարանների նախագահների խորհրդին՝ կստանանք տարբեր արդյունքներ:

Վերջապես Արդարադատության խորհրդի կազմում կարելի է ընդգրկել հնարավորինս շատ գործադիր իշխանության ներկայացուցիչներ և դրանով էականորեն սահմանափակել կամ պարզապես բացառել դատական իշխանության անկախությունը կամ բացառել հենց գործադիր իշխանության ներկայացուցիչների ներգրավումը և ունենալ դատական իշխանության անկախության արդյունավետ երաշխիք:

¹⁵⁸ Տե՛ս Ա. Ա. Բեռնիձ. Նույն տեղում, էջ 17

Հետևաբար ակնհայտ է, որ դատական իշխանության գործունեության ոլորտից գործադիր իշխանության մարմինների «մեկուսացումը» դատական իշխանության ինքնավարության անհրաժեշտ նախապայման է:

Այդպիսով ընթացիկ օրենքներով դատական իշխանության անկախությունը կարող է ոչ միայն երաշխավորվել, այլ նաև ընդհակառակը՝ սահմանափակվել:

Հարց է առաջանում՝ որոնք են օրենսդիր իշխանության նկատմամբ դատական իշխանության այն հակակշիռները, որոնք կարող են դրանց միջև որոշակի հավասարակշռություն ապահովել: Կարծում ենք սահմանադրական սկզբունքների և նորմերի մակարդակով ամրագրված անհավասարակշռությունը հաղթահարելու համար դատական իշխանությանը որևէ հակակշիռներ հնարավոր չէ վերապահել: Այստեղ մենք գործ ունենք քաղաքական լուծումների, ընդհանրապես քաղաքականության հետ:

Ընթացիկ օրենսդրության մակարդակով այդպիսի հակակշիռներ հնարավոր են և պարտադիր: Իհարկե չի կարելի կասկածի տակ դնել բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմնի հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում, նեոարյալ դատական իշխանության ոլորտը, սկզբնական իրավական կարգավորում տալու լիազորությունը: Այնուհանդերձ դա չի նշանակում, որ օրենսդիր մարմինը կարող է ամրագրել կամայական լուծումներ, այդ թվում սահմանափակել դատական իշխանության սահմանադրությամբ ամրագրված անկախությունը, խախտել իշխանության երեք թևերի միջև հավասարակշռությունը, սահմանել փոխադարձ զսպումների և հակակշիռների չհավասարակշռված համակարգեր: Մինչդեռ այդպիսի հնարավորություն միշտ էլ առկա է, մանավանդ դեռևս ձևավորման փուլում գտնվող ժողովրդավարության պայմաններում: Հետևաբար, դատական իշխանությունը պետք է ունենա այդպիսի կամայական ոտնձգություններից պաշտպանվելու սահմանադրորեն ամրագրված հնարավորություններ:

ՀՀ սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանադրական դատարաններ կարող են դիմել նաև դատարանները՝ «իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով»: Կարծում ենք, այդ կետում նպատակահարմար է ավելացնել նոր դրույթ, որով, ասենք, վճռաբեկ դատարանին կվերապահվի իրավունք դիմել սահմանադրական դատարան դատական իշխանության անկախությունը սահմանափակող ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով: Իհարկե մեր առաջարկությանը կարող է բերվել հետևյալ հակափաստարկը՝ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն Հանրապետության Նախագահը ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը և օժտված լինելով նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով սահմանադրական դատարան դիմելու իրավունքով, հենց նա քննարկվող դեպքերում կարող է դիմել սահմանադրական դատարան: Սակայն ակնհայտ է, որ դատական իշխանության անկախությունը օրենսդիր իշխանության հնարավոր կամայականությունից կարող է արդյունավետ ապահովվել միայն այն դեպքում, եթե դատական իշխանության համակարգի որևէ ինստիտուցիոնալ կառույց /տվյալ դեպքում՝ վճռաբեկ դատարանի/ ստանա իշխանության այդ թևի անկախության ապահովման ոչ թե միջնորդավորված, այլ անմիջական հնարավորություն:

Դատական իշխանության անկախության հիմնախնդիրը չափազանց բարդ և համալիր հիմնախնդիր է, որն արձաձուլ է բազմաթիվ ոլորտներ՝ սկսած դատական իշխանության և առանձին դատարանների ֆինանսավորման և նյութաթեխնիկական սպասարկումից մինչև արդարադատության իրականացման ընթացակարգերի օրենսդրական կարգավորումը, սկսած դատական կադրերի ընտրության և նշանակման ընթացակարգերից մինչև դատավորների լիազորությունների դադարեցման և նրանց կարգապահական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը:

Դատական իշխանության ինքնավարությունը, բնականաբար, կարող է լինել միայն հարաբերական, քանի որ այն գոյություն չունի անկախ այլ իշխանություններից՝ դատարանների կողմից քննվող կոնֆլիկտների շրջանակը սահմանվում է օրենքով (այսինքն՝ օրենսդիր իշխանության որոշումներով), դատական իշխանության որոշումների համապարտադիր ուժի իրագործումը բազմաթիվ դեպքերում ենթադրում է գործադիր մարմինների կողմից որոշակի գործողությունների կատարում:¹⁵⁹

Դատական իշխանության հարաբերական ինքնավար գործառնության համար նախ անհրաժեշտ է ապահովել որոշակի կազմակերպչական պայմաններ: Դա նշանակում է, որ նյութատեխնիկական, կադրային, տեղեկատվական-վերլուծական և այլ գործառնությունների իրագործումը պետք է կախված չլինի այլ իշխանությունների կամայական որոշումներից՝ պետք է իրականացվի դատական իշխանության բարձրագույն մարմնի ղեկավարությամբ, դատավորների ինքնակառավարման մարմինների ակտիվ մասնակցությամբ: Ապահովող գործառնությունների իրագործումը պետք է կախված չլինի այլ իշխանությունների կամայական որոշումներից: Ինչքան ուժեղ կարելի է հռչակել դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքներին, սակայն եթե դատական համակարգի գործառնության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը կախված լինի գործադիր իշխանության այս կամ այն մարմնի կամայական որոշումներից, ապա դատական համակարգի ինքնուրույնությունը կլինի ձևական, ֆիկտիվ:¹⁶⁰

Այստեղ պետք է նկատել, որ մինչև դատական բարեփոխումների առաջին փուլի իրականացումը այդ բոլոր գործառնությունները ուղորդվում էին գործադիր իշխանության մարմնի՝ արդարադատության նախարարության կողմից: Իհարկե դատական որոշումներ կայացնելիս դատավորը կարող է անկախ լինել միայն այն դեպքում, եթե նա պատասխանատվություն է կրում միայն դրանց բովանդակության համար: Միայն այդպիսի մոտեցման դեպքում կարող է գործնականում իրագործվել դատավորների անկախության սահմանադրական սկզբունքը: Սակայն դա չի նշանակում, որ այդ հարցերի լուծումը պետք է իրականացվի դատական իշխանության ընդհանուր համակարգից դուրս և դրանից անկախ գործող իշխանության այլ թևի՝ գործադիր իշխանության մարմինների կողմից:

Թերևս «Դատական օրենսգրքով» ամրագրված են արդարադատության իրականացման ոլորտում կազմակերպչական խնդիրների լուծման արդյունավետ, սակայն ոչ բոլոր դեպքերում՝ հետևողական տարբերակներ:

Մանավորապես, օրենսգրքի 64-րդ հոդվածով մանրամասն սահմանված է դատարանների ֆինանսավորման կարգը: Դատարանների ֆինանսավորումը

¹⁵⁹ Տե՛ս ՌՕԱԱՅ՝ 2011 թ. հունիսի 19:

¹⁶⁰ Տե՛ս ՆՇՎ. աշխ., էջ 18:

իրականացվում է դատական դեպարտամենտի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների ֆինանսավորումը արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեյում առանձին տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատարաններ: Դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջետային հայտը Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից ներկայացվում է Դատարանների նախագահների խորհրդի հաստատմանը: Հաստատված բյուջետային հայտը և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը սահմանված ժամկետում ներկայացվում է կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Օրենսգրքի նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում ամրագրված են դատական իշխանության ֆինանսական անկախության ապահովման երկու կարևորագույն երեժիքներ: 5-րդ մասին համաձայն բյուջետային հայտը պետք է պարունակի դատարանների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը: 4-րդ մասի համաձայն գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ ՀՀ կառավարությունը չի կարող կամայական փոփոխություններ կատարել դատարանների բյուջեի նախագծում, այլ պարտավոր է պարզապես ընդունել այն և ընդգրկել պետական բյուջեի նախագծում: Բյուջետային հայտի նկատմամբ առարկություններ ունենալու դեպքում կառավարությունը կարող է միայն այդ առարկությունները բյուջեի նախագծի հետ ներկայացնել Ազգային Ժողով: Սակայն այն դեպքում կառավարությունը պետք է ոչ միայն Ազգային խորհով, այլ նաև Դատարանների նախագահների խորհրդին ներկայացնել բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորում: Ինչ խոսք այս կարգը կարող է ապահովել դատական իշխանության ֆինանսական անկախությունը:

Դատական իշխանության նյութատեխնիկական ապահովումը առավել ինքնուրույն և արդյունավետ դարձնելու համար թերևս արժե դատական իշխանության համակարգը հանել «Գնումների մասին»¹⁶¹ ՀՀ օրենքի գործողության շրջանակներից և դատական իշխանությանը հնարավորություն ընձեռնել ինքնուրույն լուծելու այդ հարցերը: «Դատական օրենսգրքի» 69-րդ հոդվածի համաձայն դատարանների նյութատեխնիկական ապահովումը իրականացնում է Դատական դեպարտամենտը: Կարծում ենք, որ նպատակահարմար է դատարանների նյութատեխնիկական ապահովմանը ուղղված Դատական դեպարտամենտի գործունեության վրա չտարածել «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակներից, ինչը հնարավորություն կտա դատարանների նյութատեխնիկական ապահովումը իրականացնել՝ առանց գործադիր իշխանության կառուցվածքում գործող մարմնի՝ պետական գնումների գործակալության միջամտության: Որպես կոմպրոմիսային քայլ կարելի է քննարկել «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով դատական իշխանությանը՝ ի դեմս Դատական դեպարտամենտի ինքնուրույն գնումներ կատարելու հնարավորությունների ընդլայնման հարցը: Հակառակ դեպքում անհնար է մեկնաբանել ինչու նույն օրենքը Կենտրոնական բանկին հնարավորություն է տալիս իր գործառնական ծախսերի շրջանակներում ինքնուրույն իրականացնել գնումներ /«Գնումների մասին» օրենքի 59-րդ հոդված/, իսկ պետական իշխանության ինքնուրույն և անկախ թև հանդիսացող դատական իշխանությունը պետք է տվյալ

¹⁶¹ ՀՀ ՊՏ 2000/13

ուղորտում գործի մյուս պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված ընդհանուր կարգով:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության կարևորագույն կազմակերպչական երաշխիքներից է հանդիսանում նոր ձևավորված դատական կարգադրիչների ինստիտուտը: Ակնհայտ է, որ արդյունավետ արդարադատություն կարող է իրականացվել միայն այն պայմաններում, երբ ապահովված է դատավորների, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից, երբ դատարանի տարածքում ապահովված է հասարակական կարգն և անվտանգությունը, երբ հուսալի պահպանված են դատարանի գույքը, շենքը և սպասարկման տարածքը, եթե օպերատիվ կարգով իրականացվում են տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունները: Հաշվի առնելով նշված հանգամանքները դատարանների անկախության ապահովման ուղղությամբ կարևորագույն քայլ կարելի է համարել մեզանում առաջին անգամ ձևավորվող դատական կարգադրիչների ինստիտուտը: Մինչև դատական բարեփոխումների երկրորդ փուլը այդ բոլոր զարձառույթները վերապահված էին գործադիր իշխանության մարմինն՝ ոստիկանությանը: Սակայն փորձը ցույց տվեց, որ դատական իշխանության համակարգից դուրս և դրանից անկախ ծառայությունը անարդյունավետ է լուծում նշված խնդիրները: Ինչ խոսք՝ դատական իշխանության համակարգում գործող Դատական դեպարտամենտի կազմում դատական կարգադրիչների ինստիտուտի միջոցով նշված խնդիրների կարող են լուծվել և լուծվում են ավելի արդյունավետ:

Արդարադատություն իրականացնելիս դատարանների և դատավորների անկախության կազմակերպչական երաշխիքներից է նաև Դատական օրենսգրքի 63-րդ հոդվածով ամրագրված դատարանի կողմից կիրառվող դատական սանկցիաների համակարգը: Դատարանների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու և նմանատիպ այլ խախտումների դեպքում դատարանը իրավունք ունի դատավարության մասնակիցների, գործին մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները՝ նախազգուշացում, նիստերի դահլիճից հեռացնել, դատական տուգանք: Դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու նպատակով դատարանը կարող է դիմումներ ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ:

Ողջունելի է այն հանգամանքը, որ քննարկվող հոդվածով սահմանված են նաև դատական սանկցիաների կիրառման արագ գործող և արդյունավետ ընթացակարգեր: Այսպես 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նախազգուշացումը և նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշումն անհապաղ կամովին չկատարելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով դատական կարգադրիչների միջոցով:

Դատական իշխանության անկախության ապահովման կարևորագույն երաշխիք է սահմանադրական բարեփոխումների ընթացքում Արդարադատության խորհրդի իրավական կարգավիճակի փոփոխությունը: Դժվար է գերագնահատել Արդարադատության խորհրդի դերն ու նշանակությունը դատական իշխանության

ամբողջ համակարգի կազմակերպան, կազմավորման և գործառնության ընթացակարգերում:

Ոչ բարեփոխված Սահմանադրությունը, ոչ՝ Դատական օրենսգիրքը Արդարադատության խորհրդի իրավական կարգավիճակի մասին որևէ ընդհանուր բնորոշում չեն պարունակում: Սակայն Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետերում թվարկված լիազորություններից միանգամայն ակնհայտ է դառնում այդ սահմանադրական մարմնի որոշիչ դերը ոչ միայն դատական կորպուսի կադրերի ընտրության և նշանակման գործում, այլ նաև դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, լիազորությունները դադարեցնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում: Ուստի դատական իշխանության ամբողջ համակարգը էականորեն կախման մեջ է հայտնվում արդարադատության խորհրդի գործունեությունից:

Այս պարագայում չափազանց մեծ նշանակություն են ստանում Արդարադատության խորհրդի կազմի և կազմավորման կարգի հետ կապված հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները: Կարծում ենք, որևէ կասկած չի հարուցում արդարադատության խորհրդի կազմից դատախազների դուրս բերումը և դատախազության կադրային հարցերի լուծման հետ կապված Արդարադատության խորհրդի լիազորությունների վերացումը: Նպատակահարմար էր նաև Հանրապետության Նախագահին Արդարադատության խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնելու պարտականությունից ազատելը, քանի որ գործնականում Հանրապետության Նախագահը մասնակցում էր միայն նոր կազմավորված խորհրդի առաջին նիստերին և դատավորների երդման արարողությանը: Ինչ վերաբերում է արդարադատության նախարարին խորհրդի կազմից դուրս բերման հանգամանքին, ապա այս հարցում, ինչպես նշում է Պ. Կորնուն ամենուրեք նույն պատասխանը չի տրվում: Այնուամենայնիվ, Դատավորների կանոնակարգի Եվրոպական Խարտիայի /ԴԿԵԽ/ պարբերություն 1.3-ը նախատեսում է հետևյալը. «Դատավորի ընտրության, աշխատանքի ընդունման, նշանակման, կարիերայի կամ պաշտոնի դադարեցման վրա ազդող յուրաքանչյուր որոշման առումով, կանոնակարգը թույլ է տալիս գործադիր և օրենսդիր ուժերից անկախ որևէ իշխանության միջամտում, որի մասնակիցների առնվազն կեսը բաղկացած է դատավորներից՝ ընտրված իր գործընկերների կողմից՝ պահպանելով դատական համակարգի ներկայացման ամենալայն մեթոդը»: Ելնելով այս հանգամանքից Պ.Կորնուն ըստ էության սկզբունքորեն թույլատրելի է համարում գործադիր մարմնի ներկայացուցչի մասնակցությունը Արդարադատության խորհուրդում:¹⁶²

Բարեփոխված Սահմանադրությամբ Արդարադատության խորհրդի նախագահի և նախագահի տեղակալների պաշտոնները վերացվել են: Սահմանադրության 94.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահ՝ առանց քվեարկության իրավունքի: Այս դրույթը որոշակի կասկածներ է հարուցում: Անհասկանալի է ինչու դատական բարձրագույն ատյանի նախագահը չի կարող մասնակցել քվեարկությանը: Եթե դա արվում է, հաշվի առնելով, որ վճռաբեկ

¹⁶² «Արդարադատության խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը. Պ. Կորնուի փորձաքննությունը. Դատական իշխանություն. 2003-2004, թիվ 7-8, էջ 12:

դատարանի նախագահը կարող է իր դիրքորոշմամբ քվեարկության ժամանակ ազդել Արդարադատության խորհրդի մյուս անդամների դիրքորոշումների վրա, ապա պետք է ուղղակի զրկել վճռաբեկ դատարանի նախագահին նիստերի ժամանակ քննարկվող հարցերի վերաբերյալ նաև կարծիք արտահայտելու իրավունքից; Սակայն այդ դեպքում էլ անհասկանալի է դառնում թե ինչպես այդ պայմաններում վճռաբեկ դատարանի նախագահը կարող է վարել Արդարադատության խորհրդի նիստերը: Նորմատիվ-իրավական լուծումները պետք է տրամաբանված լինեն: Կամ վճռաբեկ դատարանի նախագահին պետք է վերապահվի քննարկվող հարցերի վերաբերյալ քվեարկելու իրավունք կամ նա ընդհանրապես պետք է որևէ առնչություն չունենա Արդարադատության խորհրդի գործունեության հետ:

Սակայն երկրորդ դեպքում պետք է փոփոխվի Արդարադատության խորհուրդի ամբողջ տեսական հայեցակարգը: Մասնավորապես, Դատական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Արդարադատության խորհրդի աշխատակազմի գործառույթները իրականացնում է Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը, այսինքն այն կառույցի ստորաբաժանումը, որի ղեկավարին նույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետի համաձայն նշանակում և ետ է կանչում Դատարանների նախագահների խորհուրդը՝ վճռաբեկ դատարանի նախագահի առաջարկությամբ: Ընդամին ակնհայտ է, որ ցանկացած կոլեգիալ մարմնի՝ ներառյալ Արդարադատության խորհուրդը, գործունեության արդյունավետությունը և բովանդակությունը կախված է նիստերը նախապատրաստող անձանց աշխատանքից և եթե կա նպատակ լրիվ չեզոքացնելու վճռաբեկ դատարանի նախագահի ազդեցությունը Արդարադատության խորհրդի կողմից կայացվող վճիռների վրա, ապա պետք է գտնել և օրենսդրորեն ամրագրել Արդարադատության խորհրդի աշխատանքների կազմակերպման որևէ նոր մեխանիզմ: Սակայն այդ դեպքում, կարծում ենք, նորից կառաջանա Արդարադատության խորհրդի նախագահի պաշտոնը վերականգնելու անհրաժեշտություն, մի պաշտոնի, որը զբաղեցնող անձ պետք է պատասխանատվություն կրի ոչ միայն նիստերը վարելու, այլ նաև աշխատակազմի աշխատանքների կազմակերպելու համար և այդ պաշտոնատար անձը կրկին կստանա որոշակի հնարավորություններ ներազդելու խորհրդի կողմից կայացվող որոշումների բովանդակության վրա: Անհասկանալի է՝ ում վրա պետք է դրվի այդ պարտականությունը, եթե ոչ դատական բարձրագույն ատյանի նախագահի վրա: Արդյունքում մենք ընգնում ենք փակ շրջանակի մեջ: Հետևաբար առավել նպատակահարմար լուծումը դա վճռաբեկ դատարանի նախագահին Արդարադատության խորհրդի նիստերում քվեարկության իրավունքի վերապահումն է:

Հարկ է նկատել, որ գործադիր իշխանության ազդեցությունից դատական իշխանությանը զերծ պահելու խնդիրը Դատական օրենսգրքով միշտ չէ որ ստացել է իր հետևողական լուծումը: Այսպես, Դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, բացի Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովից, առաջին ատյանի և վերաքննիչ դատարարի դատավորի և այդ դատարանների նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի նաև արդարադատության նախարարը: Թերևս պարզ են այն փաստարկները, որոնք հաշվի առնելով օրենսդիրը ձեռնպահ է մնացել վճռաբեկ դատարանի նախագահին՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ

հարուցելու իրավունք վերապահելուց: Մակայն անհասկանալի է արդարադատության նախարարին համապատասխան լիազորություն վերապահելու հիմնավորումը: Տպավորություն է ստեղծվում, որ օրենսդիրը պարզապես չի կարողացել «գտնել» Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովից բացի այն երկրորդ սուբյեկտին, որին կարելի էր օժտել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքով:

Մինչդեռ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով կարգապահական վարույթի շրջանակներում վարույթ իրականացնող անձին վերապահված են այնպիսի լայն լիազորություններ /մասնավորապես՝ դատարանից պահանջելու և ուսումնասիրելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութեր. դատարանում ծանոթանալու քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութերի, որոնց վերաբերյալ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ. **դատավորից պահանջելու բացատրություններ**/, որոնց իրականացումը գործադիր իշխանության ներկայացուցիչ՝ արդարադատության նախարարի կողմից միանշանակ կարելի է գնահատել, որպես գործադիր և դատական իշխանությունների միջև հակակշիռների համակարգի խախտում: Ուստի, մեր համոզմամբ, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը պետք է վերապահել միայն Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին:

Կարծում ենք, հիմնավորված չէն նաև Դատական օրենսգրքի 116-րդ հոդվածի այն դրույթների, որոնց համաձայն Դատական դեպարտամետը պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից ստացված՝ կոնկրետ դատավորի թեկնածուի վերաբերյալ այնպիսի տեղեկատվությունը /այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը/, որը կասկած է հարուցում տվյալ անձի հեղինակության և նրա կողմից դատավորի լիազորությունները պատշաճ իրականացնելու վերաբերյալ, պարտավոր են տրամադրել բացի Արդարադատության խորհրդի բոլոր անդամներից և վճռաբեկ դատարանի նախագահից նաև արդարադատության նախարարին: Ավելին՝ արդարադատության նախարարը կարող է նաև հավակնորդների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ստանալ ամիջապես պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից, հարցումներ կատարել երաշխավորագիր-նամակ տված անձանցից: Դատավորների թեկնածությունների կազմելու և հաստատելու գործընթացում արդարադատության նախարարին օրենսդրությամբ որևէ լիազորություն վերապահված չէ: Ուստի կարծում ենք, որ քննարկվող դրույթները Դատական օրենսգրքում ամրագրվել են ուղղակի «ինտերցիայի ուժով»:

Գոյություն ունի դատական իշխանության և գործադիր իշխանության փոխհարաբերությունների ևս մեկ ոլորտ, որտեղ առկա է էական հիմնախնդիր: Բանն այն է, որ դատական ակտերի կատարման պարտականությունը «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին»¹⁶³ և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»¹⁶⁴ ՀՀ օրենքներով դրված է արդարադատության նախարարության համակարգում գործող համանուն ծառայության վրա:

¹⁶³ ՀՀ ԳՏ 2004/18

¹⁶⁴ ՀՀ ԳՏ 1998/12

Սկզբունքորեն դա իհարկե ճիշտ մոտեցում է: Արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար առանձին դատավորները և դատական իշխանությունը ամբողջությամբ պետք է ազատված լինեն դատական ակտերի կատարումն ապահովելու պարտականությունից: Բացի դրանից, դատական ակտերի կատարումը հենց իր էությանմբ գործադիր իշխանության գործառույթ է հանդիսանում: Սակայն փորձը ցույց է տալիս որ նշված ծառայության կողմից ոչ միշտ են ժամանակին և ճշգրտորեն իրականացվում դատական ակտերի պահանջները, մանավանդ այն դեպքերում, երբ պատասխանող կողմը պետական մարմինն է կամ պաշտոնատար անձը: Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը այդպիսի դեպքերում, որպես կանոն, ձեռնպահ է մնում օրենսդրությամբ իրեն վերապահված սանկցիաներ կիրառելուց: Ավելին՝ նույնիսկ այն դեպքերում, երբ ծառայությունը համապատասխան սանկցիաներ կիրառելուց հետո չի կարողանում ապահովել դատական ակտի պահանջների իրականացումը և դիմում է դատախազությանը մեղավոր անձանց քրեական հետապնդման ենթարկելու առաջարկությամբ, արդեն դատախազական մարմինները տարբեր պատճառաբանություններով հրաժարվում են համապատասխան գործողություններ կատարելուց: Այդ մասին հատուկ շեշտվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում:¹⁶⁵

Մինչդեռ այդպիսի իրավիճակը առաջին հերթին բացասական ազդեցություն է գործում հենց դատական իշխանության հեղինակության վրա: Բնակչության մոտ թերահավատություն է առաջանում դատական իշխանության նկատմամբ, որը քաղաքացիների կարծիքով անընդունակ է ապահովել սեփական որոշումների իրականացումը: Թևեռն ստեղծված իրավիճակը հաղթահարելու միակ արդյունավետ միջոցը կլինի վճիռ կայացրած դատարանին իրավունք վերապահել պարտատիրոջ պահանջով նման դեպքերում հարուցել քրեական գործը և գործը ուղղարկել նախաքննություն իրականացնող մարմիններին:

Եթե ասվածին ավելացնենք նաև այն հանգամանքը, որ քրեական արդարադատության ոլորտում դատական իշխանության գործունեության որակը էականորեն կախված է նախաքննություն իրականացնող մարմինների աշխատանքի արդյունքներից, ապա ակնհայտ է դառնում, որ իշխանության երեք թևերի սերտ փոխներգործության շնորհիվ ըստ էության անհնար է դառնում դրանցից յուրաքանչյուրի գործունեության տարբերակված գնահատականը:

Այս հանգամանքը մենք կարևորում ենք այն պատճառով, որ հասարակական իրավագիտակցության մեջ ձևավորվել է կարծիք, համաձայն որի պետական իշխանության երեք թևերից առավել կոռումպացված, ոչ արդարացի, սխալներով և թերություններով գործողը հենց դատական իշխանությունն է: Հենց դատական իշխանությունը և նրա առանձին ներկայացուցիչներն են առավել սուր քննադատության ենթարկվում նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից: Մինչդեռ իշխանությունների երեք թևերի միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ դատական իշխանության գործունեության ընթացքում թույլ տրվող սխալներն ու բացթողումները հաճախ պայմանավորված են իշխանության մյուս երկու թևերի սխալներով. օրենսդիր իշխանության ոչ հիմնավորված և կամայական օրենսդրական լուծումներով, գործադիր իշխանության առանձին կառույցների և պաշտոնատար

¹⁶⁵ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2006 թվականի տարեկան զեկույցը. Երևան, 2007, էջ 110-111:

անձանց կողմից՝ իրենց պարտականությունների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմամբ /նախաքննություն իրականացնող մարմիններ և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն և դրանց առանձին պաշտոնատար անձինք/: Ուստի տեսականորեն հնարավոր չէ և գործնականում չի կարող երեք իշխանություններից որևէ մեկը իշխանության մյուս երկու թևերից որակապես ավելի լավ կամ ավելի վատ կատարել իր գործառույթները:

Իշխանությունների տարանջատման տեսանկյունից թերևս կարելի է առանձնացնել դատական իշխանության անկախության ամրապնդման երկու հիմնական ուղղություններ 1/ դատական իշխանության ընդհանուր համակարգի և պետական իշխանության մյուս երկու թևերի միջև փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմի ներդրման միջոցով դատական իշխանության համակարգի անկախության աստիճանի էական բարձրացում և 2/ դատավորների անկախության ապահովմանն ուղղված համալիր միջոցառումների օրենսդրական ամրագրում և գործնական ապահովում:

Դատական իշխանության ամրապնդման երկրորդ ուղղության առկայությունը բացատրվում է Դատական օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով, որի համաձայն «յուրաքանձյուր դատավոր օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ»: Ավելին՝ օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «գործերը միանձնյա քննելիս դատավորը հանդես է գալիս որպես դատարան»:

Նախ փորձենք վերլուծել Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված դատավորի կարգավիճակի իդեալական մոդելը, որից հետո կարելի է իդեալական և իրական մոդելների համեմատության հիման վրա բացահայտել քննարկվող ոլորտի թերություններն ու բացերը և մշակել դրանց վերացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ:

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «արդարադատություն իրականացնելիս դատավոր և սահմանադրական դատարանի անդամը անկախ են, ենթարկվում են Սահմանադրությանը և օրենքներին»: Այդպիսի իրավիճակ ապահովելու համար ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է երաշխիքների որոշ համակարգ: Այդ երաշխիքներն են.

- դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անփոփոխելիությունը և նրանց լիազորությունների դադարեցումը միայն Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դեպքերում /հոդ. 96 /,
- դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքների և պատասխանատվության հիմքերի ու կարգի սահմանումը Սահմանադրությամբ և օրենքով /հոդ.97 մաս 1-ին/,
- առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության դատավորին և սահմանադրական դատարանի անդամին կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու արգելանքը /հոդ. 97 մաս 2-րդ/,

Դատավորների անկախության երաշխիքների սահմանադրական համակարգը ամրագրված է իրավական կարգավորման տարբեր մեթոդների օգտագործմամբ: Մի դեպքում օգտագործվում է արգելանքի մեթոդը: Ընդհամին ամրագրված

արգելանքները կարող են տարածվել ոչ միայն այլ անձանց կամ պետական հաստատությունների վրա /առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության դատավորին քրեական կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու արգելանքը/, այլ նաև հենց դատավորների վրա /կուսակցության անդամ լինելու կամ քաղաքականությամբ զբաղվելու արգելանքը/: Որոշ դեպքերում դա ուղղակի սահմանադրական մակարդակով որոշակի սկզբունքների ամրագրումն է /դատավորների անփոփոխելիության սկզբունքը/: Օգտագործվում է նաև պարտավորություններ սահմանելու մեթոդը: Սահմանադրության 97-րդ հոդվածի երկրորդ մասի դրույթը ուղղակիորեն ենթադրում է օրենսդիր մարմնի պարտավորությունը, հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, օրենքների միջոցով սահմանել դատավորների և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու կարգը: Սակայն բոլոր դեպքերում մենք գործ ունենք հենց դատավորների անկախության երաշխիքների հետ: Նույնիսկ դատավորի վրա որոշակի արգելանքների տարածումը նույնպես հանդիսանում է միջոց զերծ պահելու դատավորին այս անգամ արդեն կուսակցական ազդեցությունից:

Տարբեր է նաև սահմանադրորեն ամրագրված երաշխիքների նպատակային ուղղվածությունը: Այդ երաշխիքների մի մասի գործողության նպատակը դատավորներին պետական իշխանության մյուս երկու թևերի ներկայացուցիչների /հոդ.96, հոդ 97-ի 2-րդ մաս/, կուսակցական կամ այլ գործատուների կամայական միջամտություններից զերծ պահելն է:

Այս առումով ուշադրության է արժանի Սահմանադրությամբ և օրենքներով դատավորների գործունեության երաշխիքների ամրագրման մասին դրույթը: Նախ առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ այս դրույթի նպատակը միայն դատավորների սոցիալ-տնտեսական վիճակի ապահովումն է, և ոչ նրաց անկախության ամրապնդմանը: Երկրորդը՝ նշված դրույթին համապատասխան ընթացիկ օրենքներով, առաջին հերթին ՀՀ Ռատական օրենսգրքով, ամրագրված է կոնկրետ երաշխիքների մի ամբողջ համակարգ:

Մասնավորապես ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ գլխի նորմերով ամրագրված են դատավորի գործունեության նյութական, սոցիալական և այլ երաշխիքներ, կապված դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի, դատավորի արձակուրդի, դատավորի՝ կրթական ծրագրերի մասնակցության իրավունքի, դատավորի զինվորական ամրագրման հետ, և այլն: Այդպիսի երաշխիքներ են սահմանված նաև մի շարք այլ օրենքներով:

Այս երաշխիքների համակարգը ունի տարբեր նպատակաուղղվածություն: Թերևս կարելի է առանձնացնել դրանց գործողության հետևյալ չորս ուղղությունները. 1/ դատավորների գործունեության համար պատշաճ աշխատանքային պայմանների ստեղծումը, 2/ դատավորների համար արժանավատել կյանքի պայմանների ապահովումը, 3/ դատական կորպուսի կազմում առավել ունակ իրավաբանական կադրերի ներգրավման ապահովումը, 4/ դատավորների արժեաբանական համակարգում այնպիսի փոփոխությունների կատարումը, որը կարող է նրանց զերծ պահել օրենքի խախտումներով իրենց սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման գայթակղությունից: Պարզ է, որ քննարկվող երաշխիքների համակարգը նույնպես վերջին հաշվով կարող է էականորեն նպաստել դատական կորպուսի ներկայացուցիչների անկախության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ դատական օրենսգրքում ոչ միայն արտացոլվել և կոնկրետացվել են դատավորների անկախության սահմանադրական երաշխիքները, այլ նաև սահմանվել է այդպիսի երաշխիքների լրացուցիչ համակարգ: Հիմնվելով այդ լրացուցիչ երաշխիքների բովանդակային նպատակաուղղվածության չափանիշի վրա, դրանք կարելի է ստորաբաժանել մի քանի խմբերի:

Առաջին խումբն են կազմում դատավարության ընթացքում դատավորի և դատարանի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված երաշխիքները: Դրանք են.

-յուրաքանչյուր դատավորի արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օժտված լինելը /հոդ. 4/,

-դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու բոլորի պարտավորությունը և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար դատական սանկցիայի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պատասխանատվության միջոցների կիրառումը /հոդ. 6 մաս 1-ին և 2-րդ/,

-դատախազի պարտավորությունը՝ հարգել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը և իր գործողություններով կասկածի տակ չդնել դատական ակտի օրինականությունը կամ չխոչընդոտել դրա կատարմանը, բացառությամբ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրականացումից /հոդ.6 մաս 3-րդ/,

-ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ բաժնի մի շարք դրույթներով ամրագրված և դատավարության ընթացքում դատարանի և դատավորի բնականոն գործունեության ապահովմանը ուղղված դատական կարգադրիչների ծառայության լիազորությունները:

Առանձին դատավորների, ինչպես նաև ամբողջ դատական կորպուսի ինքնավարության ապահովման, եթե կարելի է այդպես ասել՝ ունիվերսալ և արդյունավետ երաշխիք է հանդիսանում դատական իշխանության ինքնակառավարման մարմինների՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի և Դատարանների նախագահների խորհուրդի գործունեությունը:

Դատավորների ընդհանուր ժողովին նախ վերապահված է բացառիկ լիազորություն՝ ընտրելու Արդարադատության խորհրդի դատավոր անդամներին: Այդ լիազորություն կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական կորպուսը հնարավորություն է ստանում Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկել իր առավել սկզբունքային, արդար և անաչառ ներկայացուցիչներին և դրանով իսկ ստեղծել Արդարադատության խորհուրդում հարցերի օբյեկտիվ քննարկման և լուծման որոշակի նախապայմաններ:

Այդ մարմինների գործունեությունը մենք գնահատում ենք դատավորների անկախության ունիվերսալ երաշխիք այն պատճառով, որ Դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն դատավորների ընդհանուր ժողովը իրավասու է «քննարկել դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց...»: Դատարանների ընդհանուր ժողովի կողմից քննարկվող հարցերը կարող են լինել չափազանց բազմազան՝ սկսած դատավորների պատշաճ և անվտանգ աշխատանքային և սոցիալ-կենցաղային պայմաններ ստեղծելու խնդիրներից մինչև դատավորների և դատական իշխանության անկախության և ինքնավարության ապահովման ոլորտում առկա հիմնախնդիրները՝ ներառյալ դատական իշխանությունը և առանձին դատավորներին պետական իշխանության այլ թևերի ներկայացուցիչների, ինչպես նաև դատական իշխանության

ներքին կառույցների ներկայացուցիչների կամայական միջամտության հնարավորությունների չեզոքացումը:

ՀՀ դատական օրենսգրքի քննարկվող կետը, սահմանելով որ դատավորների ընդհանուր ժողովը իրավասու է քննարկել դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց և ամրագրելով դատարանի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը՝ ընտրելու Արդարադատության խորհուրդի դատավոր անդամներին, որևէ այլ ձևով չի կոնկրետացնում դատավորների ինքնակառավարման այդ մարմնի լիազորությունները: Փոխարենը նույն կետով սահմանվում է, որ դատավորների ընդհանուր ժողովը կարող է քննարկել նաև Դատարանների նախագահների խորհրդի իրավասության վերապահված հարցերը: Մինչդեռ Դատարանների նախագահների խորհուրդի լիազորությունները Օրենսգրքում բավականին մանրամասն շարադրված են: Մենք այդ մոտեցումը ճիշտ ենք գնահատում, թեկուզ այն պարզ պատճառով, որ դատական իշխանության ինքնակառավարման ինստիտուտը նոր երևույթ է մեր օրենսդրության մեջ և դատական իշխանության ընդհանուր համակարգում: Հետևաբար ներկա փուլում գործնականում անհնար է ճշգրիտ սահմանաել «դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող» հարցերի շրջանակը: Այսպիսի մոտեցման դեպքում՝ եթե նույնիսկ դատական իշխանության բնականոն գործունեության ապահովման հետ կապված որևէ հարց դուրս է մնում Դատարանների նախագահների խորհրդի օրենսդրորեն սահմանված լիզորությունների շրջանակներից, այն կարող է քննարկվել դատավորների ընդհանուր ժողովում:

Ըստ իրավական հետևանքների Դատական օրենսգրքով ամրագրված Դատարանների նախագահների խորհրդի լիազորությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի: Մի դեպքում այդ մարմինը կարող է քննարկել և նորմատիվ իրավական կամ անհատական ակտեր ընդունելու միջոցով ինքնուրույնաբար լուծել դատական իշխանության բնականոն գործունեությունը ապահովմանն ուղղված հարցեր, իսկ մյուս դեպքում՝ կարող է միայն մշակել և իրավասու պետական մարմիններին համապատասխան առաջարկություններ ներկայացնել:

Նախ առանձնացնենք այն հարաբերությունների շրջանակը, որոնք Դատարանների նախագահների խորհրդի կողմից կարող են կարգավորվել Դատական օրենսգրքով պետության կողմից այդ մարմնի լիազորություններին վերապահված նորմատիվ իրավական ակտեր ընդունելու միջոցով:

Այդ նորմատիվ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունները բազմաբնույթ են և կարող են որոշակիորեն դասակարգվել: Մասնավորապես, կարելի է առանձնացնել դատարանների առօրյա գործունեության հետ կապված այն հարաբերությունները /դատական քննության հետ կապված դատավարական օրենսդրության պահանջների կատարումն ապահովող կանոնների հաստատումը, դատարանների գործավարության կանոնների հաստատումը, դատավորի պատմուճանի նկարագրության և աշխատասենյակի տիպային կահավորման ցանկի հաստատումը, դատավորների անձնական գործում պահվող այլ տեղեկությունների սահմանումը, և այլն/, որոնց իրավական կարգավորումը օրենսդիրը վերապահել է դատավորների ինքնակառավարման մարմիններին:

Դատարանների նախագահների խորհրդի իրավասությանն է վերապատրաստման և նաև դատական ծառայողների կադրերի ընտրության, վերապատրաստման և

ատեստավորման ոլորտում առաջացող հարաբերությունների իրավական կարգավորումը: Դատական իշխանությունը՝ համապատասխան հարաբերությունների կանոնակարգման միջոցով հնարավորություն է ստանում ինքնուրույնաբար՝ առանց օրենսդիր կամ գործադիր մարմինների միջամտության, կանոնակարգել դատական ծառայության ոլորտի կադրային հարցերը՝ լուծել այնպիսի հարցեր, որոնցով ուղղակիորեն պայմանավորված է դատական իշխանության ամբողջ գործունեության որակը:

Դատարանների նախագահների խորհուրդ իր լիազորությունների մի մասը կարող է իրականացնել նաև անհատական ակտերի ընդունման միջոցով /դատարանների պահուստային ֆոնդերի բաշխում, վճարել դատարանի նախագահի ներկայացմամբ դատական դեպարտամենտի ղեկավարի նշանակում և ետ կանչում, դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների ցանկի հաստատումը, և այլն/:

Դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Դատարանների նախագահների խորհուրդը մշակում է դատարանների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումներ և առաջարկություններ, նման առաջարկություններ է ներկայացնում իրավասու պետական մարմիններին: Նույն հոդվածի 3-րդ կետով սահմանվում է, որ Դատարանների նախագահների խորհուրդը իրավասու պետական մարմիններին առաջարկություններ է ներկայացնում օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ: Կարծում ենք, որ այս դրույթները կրում են հիմնականում ձևական, հռչակագրային բնույթ: Դրանք դժվար է գնահատել որպես դատական իշխանության անկախության ապահովման գործնական իրավական երաշխիք կամ իշխանության այլ թևերի նկատմամբ դատական իշխանության գործունեական հակակշիռ: Ուստի սահմանադրական փոփոխությունների հետագա փուլերում թերևս նպատակահարմար կլինի քննարկել նաև Դատարանների նախագահների խորհուրդին օրենսդրական նախաձեռնության իրավունք և կառավարության քննարկմանը նորմատիվ իրավական ակտերի նախագծեր ներկայացնելու իրավունք վերապահելու հարցերը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ դատական բարեփոխումների երկրորդ փուլում էականորեն ընդլայնվել են դատական իշխանության անկախության և ինքնավարության սահմանադրաիրավական երաշխիքները: Սակայն այս ոլորտում դեռևս կան չօգտագործված հնարավորություններ, ռեսուրսներ, որոնց իրականացումը կարող է նպաստել իրապես անկախ դատական իշխանության ձևավորման խնդրի վերջնական լուծմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դատական իշխանության սահմանադրաիրավական հիմունքների հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների գիտական վերլուծության հիման վրա կարելի է հանգել մի շարք եզրակացությունների և հետևությունների.

1/ դատական իշխանության հիմնախնդիրների վերլուծությունը միայն իշխանության տարանջատման սկզբունքի համատեքստում հնարավորություն չի ստեղծում դրանց բազմակողմանի հետազոտման համար: Այդպիսի մոտեցման դեպքում հետազոտողների ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է պետական իշխանության ընդհանուր համակարգում դատական իշխանության տեղի և դերի բացահայտման հարցերի վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ դատական իշխանության և իշխանության մյուս երկու ճյուղերի փոխներգործության, դրանց միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի կիրառման մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, եթե դատական իշխանությունը իրենից ներկայացնում է որոշակի միասնություն, օժտված է համակարգային հատկանիշներով:

Ուստի դատական իշխանության հիմնախնդիրների գիտական վերլուծությունները պետք է ներառեն հիմնախնդիրների երկու խումբ՝ ա/ դատական իշխանությունը՝ որպես ինքնուրույն համակարգ, բ/ դատական իշխանությունը՝ որպես պետական իշխանության ընդհանուր համակարգի բաղադրատարր.

2/ իրավաբանական գրականության մեջ կատարվել են դատական իշխանության համակարգի ուսումնասիրության բազմաթիվ փորձեր: Սակայն դեռևս չի ձևավորվել այդ համակարգի կառուցվածքի, դրա առանձին բաղադրատարրերի վերաբերյալ միասնական մոտեցում: Այդպիսի իրավիճակը պայմանավորված է ոչ միայն հիմնախնդրի բարդությամբ, այլ նաև դրա վերլուծության նկատմամբ ոչ կորեկտ մեթոդաբանական մոտեցումներով:

Դատական իշխանությունը ինքնին ներկայանալով որպես որոշակի համակարգ միևնույն ժամանակ հանդիսանում է ավելի բարդ և լայն այլ համակարգի՝ պետական իշխանության մարմինների ամբողջական համակարգի մաս: Ուստի այդ

կառույցի ուսումնասիրման նկատմամբ պետք է կիրառվի այնպիսի մեթոդաբանություն, որն հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես դատական իշխանության բաղադրատարրերը և ուսումնասիրել դրանց միջև առկա կապերը, այնպես էլ դիտարկել դատական իշխանությունը որպես ավելի ընդհանուր համակարգի՝ պետական իշխանության ամբողջական համակարգի բաղադրատարր: Գիտական ուսումնասիրման այդպիսի մեթոդ է հանդիսանում համակարգային մեթոդը կամ համակարգային մոտեցումը.

3/ Դատական իշխանության համակարգի բաղկացուցիչ մասերն են հանդիսանում. դատական իրավունքը՝ որպես դատական իշխանության նորմատիվ հիմք, դատական մարմինների համակարգը և դատական իշխանության գործառույթը.

4/ Տեսականորեն կարելի է առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կայացման երեք հիմնական փուլ. 1/ Խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն ստացված դատական համակարգի մասնակի բարեփոխումների փուլ /1990-1995 թ.թ./, 2/ դատական իշխանության կայացման փուլ /1995-2005 թ.թ. այսինքն ՀՀ Սահմանադրության ընդունումից մինչև Սահմանադրական բարեփոխումները, 3/ արդեն իսկ ձևավորված դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլ /2005 թվականից մինչև մեր օրերը/.

5/ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով իրականացված սահմանադրական փոփոխությունները հնարավորություններ ստեղծեցին անցնել դատական իշխանության բարեփոխումների երկրորդ փուլին, որը կհանգեցնի անկախ և արդյունավետ գործող դատական իշխանության համակարգի վերջնական ձևավորման:

Բարեփոխումների երկրորդ փուլի նպատակն է արդեն իսկ ստեղծված դատական իշխանության համակարգի հիմնական կառուցվածքային և գործառնական թերությունների վերացումը, դատական իշխանության և իշխանության մյուս երկու թևերի միջև զսպումների և հակակշիռների առավել օպտիմալ համակարգի ձևավորումը:

6/ Սահմանադրական բարեփոխումների արդյունքում էականորեն ընդլայնվեցին դատական իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները: Սահմանադրության մեջ նեոարվեցին մի շարք նոր և անհրաժեշտ իրավական դրույթներ, որոնք նորույթ էին ընդհանրապես ՀՀ իրավունքի համակարգի համար: Դրանք վերաբերում են, մասնավորապես, դատական իշխանության գործառույթային բաղադրատարրերին:

7/ Դատական բարեփոխումների երկրորդ փուլի էական արդյունքներից է Հայաստանի Հանրապետության իրավունքի և օրենսդրության նոր ճյուղի՝ դատական իրավունքի և դատական օրենսդրության վերջնական ձևավորումը:

Դատական իրավունքը կարելի է բնորոշել որպես Հայաստանի Հանրապետության իրավունքի ինքնուրույն ճյուղ, որի բաղկացած է մի շարք իրավական ինստիտուտներից (նեոարյալ կոմպլեկս ինստիտուտները) և որի կարգավորման առարկան է հանդիսանում դատական իշխանության կազմակերպման և գործառնության, դատավորների նախապատրաստման, ընտրության և նշանակման, դատավորների կարգավիճակի ամրագրման, ինչպես նաև դատական ծառայության իրականացման հետ կապված հասարակական հարաբերությունների համալիրը:

Դատական իրավունքի աղբյուրներ են հանդիսանում ՀՀ Սահմանադրությունը, օրենքներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես

նան պետության նախնական սանկցիայով /թույլատրությամբ/ Դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունված և իրավունքի նորմեր պարունակող փաստաթղթերը՝ նորմատիվ իրավական ակտերը:

8/ Դատական իշխանության բարեփոխումների կարևորագույն ուղղություններն են նաև դատական մարմինների համակարգի կառուցվածքային բարեփոխումները, ինչպես նաև դատական տարբեր ատյանների լիազորությունների այնպիսի վերաբախշումը, որը կնպաստի այդ ատյանների առավելագույն արդյունավետ (օպտիմալ) փոխգործակցությանը՝ արդյունավետ արդարադատության իրականացման նպատակով:

Այս առումով նայնպես դժվար է թերագնահատել 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների նշանակությունը: Բարեփոխված Սահմանադրությամբ նախ հստակեցվեց վճռաբեկ դատարանի իրավական կարգավիճակը:

1995 թվականի Սահմանադրությամբ ՀՀ Գերագույն դատարանի վերակազմակերպվեց վճռաբեկ դատարանի: Դրանով իսկ դատական մարմինների համակարգը լիովին գրկվեց իր համակարգային կարևորագույն հատկանիշից՝ համակարգի միասնական գործառությունը ապահովող բախադրատարրից: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրությամբ ամրագրվեց վճռաբեկ դատարանի որպես բարձրագույն դատական ատյանը կարգավիճակը՝ բացառությամբ սահմանադրական արդարադատության հարցերի: Արդյունքում՝ դատական իշխանության մարմինների ամբողջ համակարգը վերականգնեց իր համակարգային կարևորագույն հատկանիշը:

9/ Սահմանադրության 92-րդ հոդվածի դրույթը սահմանել է Հայաստանի իրավական համակարգում դատական նախադեպի ներդրման հիմքը և ամրագրել է դատական իրավունքի ստեղծման գործում վճռաբեկ դատարանի դերակատարությունը: Կարելի է պնդել, որ այսօր միանշանակորեն կարևորվում է դատական նախադեպի ինստիտուտի դերը ՀՀ իրավունքի համակարգում: Որևէ կասկած չի հարուցում նաև այն հանգամանքը, որ ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի պետություններում դատական նախադեպեր կարող է ձևավորել միմիայն բարձրագույն դատական ատյանը:

Ուստի այսօր գիտական հետազոտությունները պետք է ուղղված լինեն ոչ թե ՀՀ իրավունքի համակարգում դատական նախադեպի առկայության կամ բացակայության հարցի ուսումնասիրությանը, այլ նախադեպերի ձևավորման կոնկրետ ուղղությունների և մեխանիզմների բացահայտմանը:

Մասնավորապես, օրենսդրության մեջ արժեաբանական հասկացությունների առկայությունը, օրենսդրության հակասությունները և բացերը պարզապես պարտադրում են դատական նախադեպի կիրառման անհրաժեշտությունը: Նշված դեպքերում դատական նախադեպի դերը օրենսդրության կատարելագործման գործընթացում որևէ կասկած չի հարուցում, նույնիսկ դատական նախադեպ հասկացության ամենակարճ սահմանման դեպքում:

10/ Դատական իշխանության համակարգային հատկանիշների ամրապնդումը անհրաժեշտ նախապայման է, սակայն ոչ բավարար պարագա դատական իշխանության և օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև առավել արդյունավետ փոխներգործության համար: Այդ խնդիրը կարող է լուծվել իշխանությունների տարանջատման ճիշտ մոդելի ընտրության, երեք իշխանությունների միջև փոխադարձ զսպումների և հակակշիռների առավել

արդյունավետ համակարգի օրենսդրական ամրագրման և գործնական կիրառման միջոցով:

Սահմանադրական բարեփոխումները հնարավորություն տվեցին կատարելագործել ոչ միայն դատական իխանության ընդհանուր համակարգը, այլ նաև ձևավորել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների բալանսավորված համակարգ:

11/ Իշխանությունների տարանջատման ընդհանուր պահանջի շրջանակներում դատական իշխանության անկախության հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական ուղղության՝ 1/ դատական իշխանություն և օրենսդիր իշխանության փոխներգործության ոլորտ, 2/ դատական իշխանություն և գործադիր իշխանություն փոխներգործության ոլորտ:

Այստեղ կարևոր է խուսափել վտանգավոր ծայրահեղությունից: Իշխանությունների տարանջատման սկզբունքի, զսպումների և հակակշիռների առկա մեխանիզմի կիրառման հիմնական նպատակը պետք է լինի ոչ միայն դատական իշխանության անկախության անհրաժեշտ մակարդակի երաշխավորումը, այլև իշխանության երեք թևերի միջև հավասարակշռության ապահովումը, քանի որ դատական իշխանության գերիշխանությունը իշխանության մյուս երկու թևերի նկատմամբ հղի է նրա նկատմամբ անհրաժեշտ վերահսկողելիության կորուստի և կամայականության վտանգով:

12/ դատական բարեփոխումների երկրորդ փուլում էականորեն ընդլայնվել են դատական իշխանության անկախության և ինքնավարության սահմանադրաիրավական երաշխիքները: Սակայն այս ոլորտում դեռևս կան չօգտագործված հնարավորություններ, ռեսուրսներ, որոնց իրականացումը կարող է նպաստել իրապես անկախ դատական իշխանության ձևավորման խնդրի վերջնական լուծմանը:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ո Ր Մ Ա Տ Ի Վ Ա Կ Տ Ն Ե Ր

1. «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիր - ՀՀԳԽՏ 1990/16
2. «Հայաստանի Հանրապետության անկախության մասին» Հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» ՀՀ սահմանադրական օրենք - ՀՀԳԽՏ 1990/23
3. «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք – ՀՀԳԽՏ 1991/4:
4. «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» ՀՀ օրենք – ՀՀԳԽՏ 1991/15
5. «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդի մասին» ՀՀ օրենք – ՀՀԳԽՏ 1991/22
6. «Հայաստանի Հանրապետության դատական համակարգում զինվորական դատարան ստեղծելու մասին» ՀՀ օրենք - ՀՀԳԽՏ 1992/15-16

7. «ՀՀ դատարանների դատավորների որակավորման դասեր սահմանելու մասին» ՀՀ օրենք – ՀՀԳԽՏ 1993/13
8. «Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք – ՀՀԳԽՏ 1994/13
9. «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենք - ՀՀ ԱԺՏ 1995/7
10. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք - ՀՀ ԱԺՏ 1998/1
11. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենք - ՀՀՊՏ 1998/12
12. «Դատավորների կարգավիճակի մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 1998/15
13. «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքը - ՀՀՊՏ 1998/15
14. «ՀՀ Քաղաքացիական օրենսգրք» ՀՀՊՏ 1998/17
15. «ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը» - ՀՀՊՏ 1998/20
16. «ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը» - ՀՀ ՊՏ 1998/22
17. «Գնումների մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 2000/13
18. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 2001/37
19. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 2002/15
20. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենք - ՀՀՊՏ 2004/18
21. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 2005/52
22. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք ՀՀՊՏ 2006/ 20
23. «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենք - ՀՀՊՏ 2006/40
24. «Դատական օրենսգիրք» - ՀՀ ՊՏ 2007/20
25. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենք – ՀՀՊՏ 2007/20

26. «ՀՀ դատաիրավական բարեփոխումների մասին» ՀՀ Նախագահի հրամանագիր - ՀՀՊՏ 1996/22
27. «Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիր - ՀՀՊՏ 1997/10
28. «Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի բարեփոխման մասին» հրամանագրի կատարմանը ուղղված միջացառումների մասին» ՀՀ Նախագահի հրամանագիր - ՀՀՊՏ 1997/12
29. «Վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների նախագահներ և դատավորներ նշանակելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիր – ՀՀՊՏ 1999/1

Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

30. «Արդարադատության խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը. Պ. Կորնուի փորձաքննությունը - Դատական իշխանություն, 2003-2004, թիվ 7-8
31. Բաղիրյան Գ.Մ. Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը - Երևան, Անտարես, 2002
32. Դանիելյան Գ. Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները - Երևան, ԱՌՏ, 2004
33. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. Գիտական հոդվածների ժողովածու - Երևան, Տիգրան Մեծ, 2005
34. Դիլբանդյան Ս.Ա. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահ մարմինները Երևան, Տիգրան Մեծ, 1999
35. Դիլբանդյան Ս. Քրեական դատավարության սկզբունքների հասկացությունը և նշանակությունը/ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս - Երևան, Երևանի պետ. համալսարան, 2000
36. Խաչատրյան Մ. Արդարացվածը քրեական դատավարությունում - Օրենք և իրականություն, թիվ 17

37. Խաչատրյան Մ. Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր - Երևան, 1995
38. Խրապանյուկ Վ. Ն. Պետության և իրավունքի տեսություն - Երևան, Գոշ, 1997
39. Հայաստանի Հանրապետություն, 1993, 14 ապրիլի
40. ՀՀ դատական համակարգում նախատեսվում է դատական նախադեպի իրավունքի կիրառում - Դատական իշխանություն, 2005, թիվ 8
41. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահայան մարմինները - Երևան, Երևանի պետ. համալսարան, 2007:
42. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք - Երևան, Երևանի պետ. համալսարան, 2003:
43. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք - Երևան, 2008
44. Համակարգը արմատական փոփոխությունների պետք է ենթարկվի - Դատական իշխանություն, 2005, թիվ 6
45. Հարությունյան Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները - Երևան, Նժար, 2003
46. Հարությունյան Գ. Նախաբանի փոխարեն //Մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք - Երևան, 2005
47. Ղազարյան Ա. Նախադեպի իրավունքը քաղաքացիական իրավունքի երկրներում - Դատական իշխանություն, 2005, թիվ 11-12
48. Ղազարյան Ա. Վճռաբեկ դատարանը որպես քաղաքականություն ձևավորող մարմին - Դատական իշխանություն, 2007, թիվ
49. Ղազինյան Գ.Ս. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահայան մարմինները - Երևան, Երևանի պետ. համալսարան, 2003
50. Ղազինյան Գ.Ս., Դիլբանդյան Ս.Ա. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահայան մարմինները - Երևան, 2003
51. Ղամբարյան Ա. Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում - Երևան, ՌՀՀ, 2006
52. Ղամբարյան Ա. Արդարադատության սկզբունքների դասակարգման խնդիրները - Դատական իշխանություն, 2005, թիվ 4/

53. Ղամբարյան Ա. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում - Երևան, Իրավունք, 2007
54. Մանուկյան Հ. Բարեփոխումների առանցքային դրույթները- Դատական իշխանություն, 2005, թիվ 9-10
55. Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա -Երևան, 2005
56. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2006 թվականի տարեկան զեկույցը - Երևան, 2007
57. Նազարյան Վ.Ռ. Դատաիրավական բարեփոխումների սահմանադրական հիմքերը - Օրենք և իրականություն, 1997, թիվ
58. Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն - Երևան, Նաիրի, 2001
59. Ստեփանյան Վ. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում. – Օրենք և իրականություն, 2003, թիվ,19-20
60. Ստեփանյան Վ. Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն - Օրենք և իրականություն, 2003, թիվ19-20
61. ԸՆԴՈՎՏԶ հ.ծ. թԲՈՋՊՈՎԻՍՈՒՆ տԲՏՓԱՐԻ. Ծ., 1948
62. ԸՆԴՏԻՎՏԶՈ ժ.ք. հցՊԱՊՈՆԸ ՉԱՈՐՅՖ Չ ՀՏԻՐԻՆՍՏՆ ՂԱՊԱԿՆՓՈՒՆ: հԻՐՅԱՎՕ Ռ տԲՆՎՓՈՒՆՕ. Ծ., 2002
63. ԸՉԱԿՖԵՎՏԶ Ը.ծ. հԻՐՅԱՎՎՏԱ տՏՉՎՈՎՈՒԱ ՎՈՒՐՈ - Ծ., կՏԱՌՅ. ԽՈՅ., 1985
64. ԸսպՍրպպՉ հ. հ. կԲՈՉՏ: ՈՅՈՅՍՈ – ՅԱՏԲՈՒՆ – ԻՌԵՏՏԻՌԻ: ԿՈՆՅ ՍՏՎՏԱՍԱՍՐՎՏՏ ՌՐՐԱՊՊՏՉՈՎՈՒՆ. Ծ., հՅՈՅԳՐ, 1999
65. ԸսԲպՉ Ձ.Ձ., թԲՏՎՏԶ ծ.Ը. ԿրվՏՉՎՕԱ ՎՈՓՈՍՈՆ ԳՏՏԱՏՉՎՏՏ ՐԳՊՏԱՐՏՈՉՉՏՊՐՅՉՈ. Ծ., 2003
66. ըՈՆԱՈՆ Ծ.Թ. ՀՏԻՐԻՆՍՏԱ ՆՏՐԳՊՈՐՐՅՉՏ ՎՈ ԲԳՈԱԶԱ ՅՕՐԵՓՌԱՍՅՈՒՆ (ՎՈՅՖՎՈՆ ՍՏՎԻԱԿԱՎՓՈՒՆ)- թՏՐԳՊՈՐՐՅՉՏ Ռ տԲՈՉՏ, 2000, N 7
67. ըՈՐՈՍ Ը. հցՊԱՐՐՍԱ ճՐՎՏՅԲԱՎՈՒԱ. Ծ., 1999
68. ըՏՁՖԱՉ Թ.Կ. ԽՏՎՐՅՈՅԳՓՈՒՏՎՎՕԱ տԲՆՎՓՈՒՆՕ ԳՏՏԱՏՉՎՏՏ ՐԳՊՏԱՐՏՈՉՉՏՊՐՅՉՈ. Ծ. հԿԸՀԽ. 2000.
69. ըՏՆՍՏԶ Ը.Ժ. ՁԲԱՅՖԵ ՉԱՈՐՅՖ ՀՏԻՐԻՆ. Ծ.,1997

86. ԽՏԻՎԵՐՍՏՈՆ Ժ.Թ. ԽՏՎՐՅՈՒՑԳՓՈՒՏՎՎՈՅ ՏՐՎՏՉՕ տԻՆՉՏՐԳՊՈՒՆ ևՏ ԳՆՏՍՏՉՎՕՎ ՊԿԱՍՈՎ Չ ՀՂ. ԸՉՑՏԻՎԻ. ՊՈՒՐՐ. ՍՈՎՊ. ԴՈՊ. ՎՈԳՍ, ԽՈՐՈՑՏՉ, 2003
87. ԽԳՊՐԵՉՓՅՉ Ժ.Թ. ԽԳՊԿՈՎՏՅ ՐԿՔԿՎՐԿՅ Ո ՈՎՆԱՆԵՐՍՏՎ ՆՐՈՋՊՈՎՐՍՏՎ տԻՏՓԿՐՐԿ. Ծ., ԹՏԻՆՊԿՓ, 1998
88. ԽԳՑՈՒՌՎ Կ. Ժ. ԼՐՑՏՎՐՈՒՍՈՒ ՍՏՎՐՅՈՒՑԳՓՈՒՏՎՎՈՅՏ տԻՆՉՈՆ ՀՏՐՐՈՒՐՍՏՆ ՂԿՊԿՐՈՓՈՒՆ. Ծ., 2002
89. ԽՈՂՈՐԿՉՈՆ Թ.Ը. ԽԳՊԿՈՎՈՆ ՉԱՈՐՑՖ Ռ ԿՅ ՐԿՈՍՈՂՈՓՈՒՆ Չ ԳՆՏՍՏՉՎՏՎ տԻՏՓԿՐՐԿ. ԽՎՈՐՈՆ, 1999
90. ԽՈՂՈՐԿՉ Թ. Ը. ԽԳՊԿՈՎՈՆ ՉԱՈՐՑՖ Ռ ԳՆՏՍՏՉՎՏՅ ՐԳՊՏՈՐՏՈՂՉՏՊՐՑՉՏ - ԹՈՒԿ, 2001, N 5
91. ԽՈՐՈՎ Ը.Ծ. ՃՆՏՍՏՉՎՈՆ տԻՏՓԿՐՐ. ԽՑՐԳՍՑԳՐՈՆ տԻՆՉՈՆ Ռ ՐՑՐԳՍՑԳՐՈ ՂՈՍՏՎՏՊՈՑԿՍՏՐՑՉՈՆ Ծ., 1985
92. ԽՈՐՈՎ Ը.Ծ.. ԾԿՍՏՎՐՈՒՍՏՉՈՆ Խ. ը., ԽՈՂՈՓՍՈՒՆ Թ.Ծ. ՃՆՏՍՏՉՎՈՆ տԻՏՓԿՐՐ ՀՏՐՐՈՒՆ. Ծ., 1997
93. ԽԿՈՎՊԿՉ Թ.Ծ. ԽԳՊԿՈՎՈՆ ՉԱՈՐՑՖ ՎՈ ՂՈՔՈՒՑԿ ՍՏՎՐՅՈՒՑԳՓՈՒՏՎՎՈՅՏ տԻՆՉՈՆ ՆՐՈՋՊՈՎ ՎՈ ՐՉՏՆՏՊԳ Ռ ԱՌՖՎԳ ՎԿՏՐՈՒՍՏՐՎՏՉՎՎՏՐՑՖ Չ ԳՆՏՍՏՉՎՏՎ տԻՏՓԿՐՐԿ. ԸՉՑՏԻՎԻ. ՊՈՒՐՐ. ՍՈՎՊ. ԴՈՊ. ՎՈԳՍ. Ծ., 1998
94. ԽՈՂՔՈՒՓ Հ.Ի. ԽՏՐԿՎԿՎՎՈՆ ՑԿՏՐՈՒՆ տԻՆՉՈՆ /ՏՎԿՐՍ/. Ծ., 1992
95. ԽՈՂՔՈՒՓ Հ. Ի. ՉԿՏՐՈՒՆ տԻՆՉՈՆ. Ծ., 2001
96. ԽԳՍՈՎՐՍՈՆ Կ.Ը. Խ ՉՏՈՐՏՐԳ Տ ԱՏՎՈՒՆՈՒ տԻՆՉՏՐԳՊՈՒՆ ևՏ ԳՆՏՍՏՉՎՕՎ ՊԿԱՍՈՎ Չ ՐՉԿՑԿ ԽՏՎՐՅՈՒՑԳՓՈՒՆ ԽԽՀ Ռ ՎՏՉՆՏ ՂՈՍՏՎՏՊՈՑԿՍՏՐՑՉՈՆ Տ ՐԳՊՏԳՐՑՐՏՐՑՉԿ Ռ ՐԳՊՏՈՐՏՈՂՉՏՊՐՑՉԿ / ԸՍՑԳՈՍՏՎՈՅ ՉՏՈՐՏՐՈ ՐՈՂՉՈՒՑՈՒՆ Ռ ՐՏՉԿՐՔԿՎՐՑՉՈՎՈՆ ՂՈՍՏՎՏՊՈՑԿՍՏՐՑՉՈՆ Տ ՐԳՊՏԳՐՑՐՏՐՑՉԿ, ՐԳՊՏՈՐՏՈՂՉՏՊՐՑՉԿ Ռ տԻՏՍՍԳՐՏՐՍՏՎ ՎՈՊՂՏՐԿ. ԽՈ. ՎՈԳՎՎ. ՑՐԳՊՏՉ, Ծ., 1981
97. ԽԳՐԿՆՎՎՏՈՆ Ի.Խ. ՉԿՏՐԿՑՈՒՍՏ-տԻՆՉՏՉՈՅ ՏՐՎՏՉՕ ՐԳՊԿՈՎՏՆ ՉԱՈՐՑՈՒ Չ ՀՂ. ԸՉՑՏԻՎԻ. ՊՈՒՐՐ. ՍՈՎՊ. ԴՈՊ. ՎՈԳՍ. ՀՏՐՑՏՉ-ՎՈ-ԺՏՎԳ, 2000
98. ԾՈՐՍՈՐԵՎ Խ. Խ. ԽՐՐՑԿՎՎՏՅ ՌՐՐԿՊՏՉՈՎՐԿ ՎԿԿՍՏՉԿՎԿՐՍՏՆ ՊԿՆՑԿՍՏՎՏՐՑՈՒՆ - ԹՏՈՐՏՐՈ ԻՆՏՐՏԻՆՈՒՆ, 1972, N10
99. ԾՈՐՎԿՎՎՍ Ծ. Ծ. ՉԿՏՐՈՒՆ ՆՏՐԳՊՈՐՑՉՈՆ Ռ տԻՆՉՈՆ. Ծ., ԿՐՏՐՈՎՍՑ, 2002

100. ծնունդով թ.կ. Խ ՉՏսրհՏրց Տ սՏվնՅննն Ռ րՏՊպհՁնվննն տհնՉՏրցՊնն. ԹՏսրհՏրո սՏՉոՔպվնն ֆհհպՍՅննՉվՏրՅնն տհնՉՏրցՊնն սՏ ցՅՏսՉվոՎ ՊպսնՎ. ԽնսնվնվյհհնՊ, 1980
101. ծնցՎՏՉ Ը. հցՊպոն տհպՓպվՊպվՅ ՍՈՍ ՌրՅՏփվնՍ ցՅՏսՉվՏՅ տհնՉՈ - ՀՏրրնրՍՈն րՅնՓոն, 1994, N 1
102. ԿնՏսվրՍնն Ը.Թ., ՀցՊնՔպՉրՍնն Թ. Ժ. ԾպՅՏՊՏսՅնն րնրՅպՎվՏՅ ՌրրսպՊՏՉնվնն տհՏնսպՎ չՏրցՊնրՅՉպվՏՅ ցտհնՉսպվնն. Ծ., 1978
103. ԿտՅվպհ ի. հնրՅպՎոն Ովնսնջ Պսն րպՔպվնն ՊպսՉոն Ռ տհՏՎոՔսպվՎոն տհՏնսպՎ. Ծ., 1969
104. կնՉսՉՈ Կ.ծ. Խ ՉՏսրհՏրց Տ սՏվնՅնն ՎպնվնջՎն ՊպրՅՉնն ջնՍՏվն/ ԿոՕպՍՅննՉվոպ ջնՍՏվո ՌրՅՏհնն Ռ վնցփվՏպ րցՍՉՏՊրՅՉ ՏրքպրՅՉՎ. (ԾնՅպհհննո րնՎսՅննցՎն). Ծ., 1970
105. կպՅհցնվ Լ. կհՏՍցհՏրՍնն վնՊջՏհ Ռ րցՊպոն ՍՏվհՏսՖ ջն րսպՊրՅՉննՎ - ՀՏրրնրՍՈն րՅնՓոն, 1998, N 9
106. կՏսնվրՍնն ծ.ծ. ԹՏսրհՏրո ՅպՏհնն րՏՉպՅրՍՏՅ ցՅՏսՉվՏՅ տհՏՓպրրն. Ծ., ԼջՊ-ՉՏ Ծթձ, 1956
107. կհՏնսպՎո Տրքպո ՅպՏհնն տհնՉՈ Ռ չՏրցՊնրՅՉՈ. Ծ., ծԿՀԾԸ - ԼծՂՀԸ. 1999
108. կհՏնսպՎո րցՊպոնՏՅ տհնՉՈ. Ծ., ծնցՍՈ, 1983
109. ՀՁպՉրՍնն Թ.Ը., ճպսցհվՏՉՈ ծ.Ծ. հցՊպոնն ՉսնրՅՖ Չ ՀՏրրնրՍՏն ՂպՊպհնՓոնն: ՍՏվրՅննՅցՓոնՎվոպ ՏրվՏՉո ՏհչնվնջնՓոնն Ռ ՊպնՅպսՖվՏրՅն. Ծ., 1998
110. ՀՏՁվՏՉ Ը. կ. կհնՉՏսրհՎպվնՅպսՖվնն տհնՍՅնՍՈ ՍՈՍ վպՅհնՊնՓոնՎվոն ՌրՅՏփվնՍ րՏրրնրՍՏՅ տհնՉՈ. ԸՉՅՏհպհ. Պնրր. ՍնվՊ. րնՊ. վնցՍ. հնհնՅՏ. 2003
111. ՀՏրրնրՍՈն տհնՉՏՉնն սՏսնՅնՍՈ. կՏՊ րպՊ. ԾնՅցՏՉՈ ծ.Լ., ԾնսՖՍՍ Ը.Թ. Ծ., 2003
112. հնՎՏքպվՍ Լ. հ. ԾպՅՏՊՏսՅննփպրՍՈն րՏսՖ րնրՅպՎվՏՅ սՏՊնՊն Չ Ռջցփպվնն րՅհցՍՅցհո րՏՉպՅրՍՏՅ ջնՍՏվՏՊնՅպսՖրՅՉՈ - ԹՏսրհՏրո ԻնսրՏհնն, 1979, N 2
113. հպՎպվՏՉ Թ.Ծ. կհնվՓոննո րՏՉպՅրՍՏՅ չհնՁՊնվրՍՏՅ տհՏՓպրրցնսՖվՏՅ տհնՉՈ. ԸՉՅՏհպհ. Պնրր. ՊՏՍՅ. րնՊ. վնցՍ. հՉպհնսՉրՍ, 1965

114. հայվայվՏՉ Թ.Ծ. հցՊ Ռ տրՈՉՏրցՊՌեպ Չ հհհՀ. Ծ. 1985
115. հվՌՌվՏՉ Ը.Թ. ԾՏՊպսՌ գչՏսՏՉվՏչՏ տրՏՓպրրՈ. հՈվՍՑ-կպՑպրոցրչ, ԸսՖԻՈ, 2000.
116. հՑՈՐՌեսՉ Շ.Ց. ԸՊՎՌվՌրՑրՈՑՌՉՈՉվՈՆ ՇրՑՌՓՌեՆ. ՉպՏՐՌեՆ, ՌրՑՏՐՌեՆ, տպրրսպՍՑՌՉՈ. Ծ., ՑԿՀԾԸ, 2001
117. հՑրՈՑպչՌեՆ Պսև ՀՏրրՌեՌ: տՏՉպրՑՍՈ Պվև Պսև կրպչՌՊպվՑՈ – 2000. Ծ., 2000.
118. հՑրՏչՏՉՌեփ Ծ. հ. ձչՏսՏՉվՏ-տրՏՓպրրցՈսՖվՈ ջՈՍՏվ – պՊՌվրՑՉպվՈՆ ՌրՑՏփվՌՍ գչՏսՏՉվՏ-տրՏՓպրրցՈսՖվՏչՏ տրՈՉՈ / հՏՉպՑրՍՌոն գչՏսՏՉվՏ-տրՏՓպրրցՈսՖվՈ ջՈՍՏվ Ռ տրՏսսպՎՈ պչՏ ֆԻԻպՍՑՌՉվՑրՑՌ. Ծ., 1974
119. հցՊպոՎՈՆ ՉսՈրՑՖ. կՏՊ րպՊ. Լ.խ. կպՑրցւՌեՎՈ. Ծ., 2003.
120. հցՊՏցրՑրՑՈՑՉՏ Ռ տրՈՉՏՏւՐՈվՌՑպսՖվՈյ ՏրչՈվՈ Չ ՀՏրրՌեՌՍՏՈ ՂպՊպրՈՓՌեՌ. ԼջՊ. 2-պ կՏՊ րպՊ. Շ.Խ. ԿրսՉՈ, Թ.Լ. ՄՉպՓՏՉՈ. Ծ., կրՏրսպՍՑ, 2002
121. ձչՏսՏՉվՈ տրՏՓպրր. Ծ., 2001
122. ձչՏսՏՉվՏ-տրՏՓպրրցՈսՖվՏպ տրՈՉՏ. կՏՊ. Տոքպոն րպՊՈՍՓՌեպոն Թ.Լ.ՀՏսսՌեՎՈ. Ծ., ՇրՌՊՌեփրՍՌոն ՓպվՑր կրպրր, 2004
123. ՂՏոՎՌՓՍՌոն հ.Ը. Խցրր գչՏսՏՉվՏչՏ րցՊՏսրՏՌեջՉՏՊրՑՉՈ. 2.1, Ծ., 1996
124. ՂրՏսՉ Լ.Ձ. ԹՉպՊպվՌեպ Չ ԻՌեսրՑԻՌե՝ փՈրՑՖ 2, Ծ., կՏսՌՑ. խՌՑ, 1989
125. ղՈփՈՑրևվ ժ.Ծ. ՑպջՈՉՌեՌեՎՑրՑՖ րցՊպոն Չ րպրոցոսՌՍպ ԸրՎպվՌեՆ: րցՊՏցրՑրՑՈՑՉպվՈյ Ռ գչՏսՏՉվՏ-տրՏՓպրրցՈսՖվՈյ չՈՐՈվՑՌեՌ.- ժր., 2001
126. ՃՌեՏՓՍՌոն Ը. Թ. ՉպՏրպՑՌեփպրՍՌեպ տրՏսսպՎՈ ֆԻԻպՍՑՌՉվՑրՑՌ տրՈՉՏրցՊՌեՆ տՏ չՐՈՁՊՈվրՍՌեՎ ՊպսՈՎ. ՑՏՑրՌեՌՌրՍ. 1997.
127. ՍՈՎրցՑՊՌեՎՏՉ Հ.Խ. Խ ՉՏսՏրց Տ ԻցվՍՓՌեՆ րցՊպոՎՏո ՉսՈրՑՌ Ռ ԻՏՐՎՈՆ Ռ րպՈսՌեջՈՓՌեՌ Չ գչՏսՏՉվՏՎ տրՏՓպրրպ ՀՏրրՌեՌ / կրՏսսպՎՈ տրՏՑՌՉՏՊպրՑՉՌեՆ տրպրՑցոՎՑրՈՆ Չ րՏՉրպՎպվՈյ ցրսՉՌեՆ. ԾՈՑպրՌեՈսՈ ՎպՁՊցվՈՐՏՊվՏո ՎՈցփվՏ-տրՈՍՑՌեփպրՍՏՈ ՍՏվԻպրպվՓՌեՌ 16-17 ՏՍՑևՌՆ 2003, ճՈրՑՖ 3, ձՌՈ, ՀԼԿրՈՔ թձ, 2004

128. Մառիպր հ.Ը. կՏվեՑԻԿ Ռ ՉջՈՒՎՏՏՑՎՏՔԿՎՈՒՆ րցՊԿՊՎՏՆ,
տԻՏՄցԻՏԻՐՄՏՆ Ռ րսԿՊրՑՉԿՎՎՏՆ ՉսՈրՑԿՊՆ / ձՅՏսՑՉՎՈՆ
ՏՑՉԿՑրՑՉԿՎՎՏրՑՑ: ԿրՎՑՉՈՎՈՒՆ Ռ տՏԻՆՊՏՄ ԴԿՈսՌջՈՓՈՒՆ.
ԾԿՁՉցՑՉրՄՈՒՆ րո. ՎՈցփՎՈՒ րՑՈՑԿՊՆ. հՈՎՈՐՈ, 1991
129. Մառիպր հ.Ը., շոսՄՄՑ Ռ.Ը. կՏվեՑԻԿ րցՊԿՊՎՏՆ ՉսՈրՑԻ Ռ ԿԿ
ԻցՎՄՓՈՒՆ / կԻՏոսԿՎՈ րցՊԿՊՎՏ-տԻՈՉՑՑՏՆ ԴԿԻՏԻՎՈ Չ ՂՏրրՈՒՆ, հՈՎՈՐՈ,
1999
130. ՄՎՈՉՏՎԼԿ ր.Ը. ԻՏՎրՑԻՑցՓՈՒՏՎՎՏԿ տԻՈՉՏրցՊՈՒԿ Չ րՈՒրՑԿՎԿ
ԴՈջՊԿԿԿՎՈՒՆ ՉսՈրՑԿՊՆ. Ծ., ԾՈՂԻՆ կԴԿրր, 2001
131. շԴՄՑ Ռ. Ռ. հցՊԿՊՎՈՆ ՉսՈրՑՑ Ռ ջՈրրՑՈ սՈՒփՎՏրՑՈ Չ
ՂՈՁՊՈՎրՄՄՎ տԻՏՓԿրրԿ - կԻՈՉՑՉԿՊԿՎՈՒԿ, 1992, Ո 1